Թողարկման 15-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2008

օգոստոս

թիվ 8 (120)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Արևելա-Հայկական բանկ» առևտրային բաժնետիրական բանկի գործունեությունը դադարած համարելու, որոշ սահմանափակ պատասխանատվությամբ և բաց բաժնետիրական ընկերությունների «Մանի Գրեմ» և «Անելիք» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն և «Ֆինանսական շտապօգնություն» ՍՊԸ-ին գրավատան կազմակերպման լիցենզիա տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ին ոչ կյանքի ապահովագրության իրականացման նոր դասերով լիցենզիա տրամադրելու, մի շարք արտարժույթի փոխանակման կետերի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, նախազգուշացում հայտարարելու և «Արարատբանկ» ԲԲԸ-ի ու որոշ ՓԲԸ-ների մասնաճյուղերը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Հայներարտբանկ» ՓԲԸ-ն «Ամերիաբանկ» ՓԲԸ վերանվանելու, որոշ ՓԲԸ-ներ ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառելու, մի շարք ՓԲԸ-ների ներկայացուցչություններ գրանցումից հանելու, մասնաճյուղեր ու ներկայացուցչություններ գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 237Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 185-Ն որոշումը «Արժեթղթերի շուկայի վերահսկվող անձանց հեռակա վերահսկողություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունները, տեղեկանքները, բացատրությունները և նման այլ փաստաթղթերը հասարակությանը մատչելի դարձնելու կարգը և այդ փաստաթղթերը հասարակությանը մատչելի դարձնելու պահանջից բացառությունները» կանոնակարգ 4/08-ը հաստատելու մասին»

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 186-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 187-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

13 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 215Ա որոշումը «2008-2009 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Խաչատուր Աբովյանի ծննդյան 200-ամյակ», «Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի» 825-ամյակ», «Գլաձորի համալսարանի 725-ամյակ» և «Սուրբ Սարգիս Զորավար» հուշադրամների ուրվագծերը և տեխնիկական չափանիշները հաստատելու մասին»

15 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 226-Ն որոշումը «Կարգավորվող շուկայի մասնակիցների և հաշվետու թողարկողների կողմից թույլ տրված խախտումների մասին կարգավորվող շուկայի օպերատորի կողմից Կենտրոնական բանկին տեղեկացնելու կարգը» կանոնակարգ 5/05-ը» հաստատելու մասին»

17 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 231-Ն որոշումը «Բանկերի, վարկային կազմակերպությունների, արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք, արտարժույթի առուվաճառք իրականացնող անձանց, դրամական փոխանցումներ իրականացնող անձանց, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, գրավատների (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 001 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի թիվ 55-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

32 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 232-Ն որոշումը «Ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունների և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձանց (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 002 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի թիվ 56-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

44 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 233-Ն որոշումը «Նոտարների (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 003 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի թիվ 57-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

55 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 234-Ն որոշումը «Խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձանց (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 004 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի թիվ 58-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

65 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 235-Ն որոշումը «Վիճակախաղ կազմակերպող անձանց (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 005 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի թիվ 59-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

74 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 236-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազորված մարմնի տարածքային ստորաբաժանումների (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձինք) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 007 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի թիվ 61-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

87 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 251Ա պաշտոնական պարզաբանումը «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի մասնակցությունը «Վեսթերն Յունիոն» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում արգելելու մասին»

89 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- «Արևելա-Հայկական բանկ» առևտրային բաժնետիրական լուծարվող բանկը ***համարվել է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած*** (որոշում թիվ 217Ա):
- ***«Մանի Գրեմ» և «Անելիք» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Գլոբփեյմենթս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և ***«Մաստեր Քարդ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում***՝«Կոնվերս Բանկ» և «ԲՏԱ Ինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 219Ա, 258Ա, 238Ա, 262Ա):
- ***Գրավատան կազմակերպման լիցենզիա է տրամադրվել*** «Ֆինանսական շտապօգնություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 256Ա):
- ***Ոչ կյանքի ապահովագրության իրականացման նոր դասերով (առողջության ապահովագրություն, երաշխիքի տրամադրում, աջակցության ապահովագրություն) լիցենզիա է տրամադրվել*** «Ռոսգոսստրախ - Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 257Ա):
- ՀՀ արժութային օրենսդրության պահանջները խախտելու համար 2 արտարժույթի փոխանակման կետերի ***լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել*** (որոշումներ թիվ 216Ա, 260Ա), 1 արտարժույթի փոխանակման կետի, 1 ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ և 2 ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունների ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/821Ա, 1/824Ա-1/826Ա):
- ***Գրանցվել են*** «Արարատբանկ» բաց բաժնետիրական ընկերության Շենգավիթ, Դիլիջան, Սիսիան, Նոր Նորք (որոշումներ թիվ 1/421Ա, 1/442Ա, 1/444Ա, 1/520Ա), ինչպես նաև «Անելիք բանկ» և «էյչ-էս-Բի-Սի բանկ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար Վանաձոր և «Վեգա-2» (որոշումներ թիվ 1/438Ա,1/496Ա) մասնաճյուղերը:
- «Հայներարտբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը ***վերանվանվել է*** «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերություն (որոշում թիվ 1/506Ա):
- «Ամերիաբանկ», «Յունիբանկ», «Արցախբանկ» և «Կասկադ բանկ» փակ բաժնետիրական ընկերությունները ***հաշվառվել են ապահովագրական գործակալների ռեգիստրում*** (որոշումներ թիվ 1/807Ա, 1/816Ա, 1/818Ա, 1/848Ա):
- ***Գրանցումից հանվել են*** «Ֆինքա» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության Աբովյանի, Արմավիրի, Արտաշատի ներկայացուցչությունները, ***գրանցվել են*** Աբովյանի, Արմավիրի, Արտաշատի մասնաճյուղերը և Ստեփանավանի, Բերդի և Արթիկի ներկայացուցչությունները (որոշում թիվ 1/817Ա), ինչպես նաև «Կոնվերս բանկ» և «Յունիբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Սայաթ-Նովա», «Կիլիկիա» և «Իջևան» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/833Ա, 1/843Ա, 1/853Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 237Ա որոշմամբ 2008 թվականի օգոստոսի 5-ից ***ՀՀ կենտրոնական բանկի կողմից կնքվող ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը սահմանվել է 7.50%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային վարկերի տոկոսադրույքը՝ 10.50%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներգրավվող ավանդների տոկոսադրույքը՝ 4.50%:***

*«Արժեթղթերի շուկայի վերահսկվող անձանց հեռակա վերահսկողություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունները, տեղեկանքները, բացատրությունները և նման այլ փաստաթղթերը հասարակությանը մատչելի դարձնելու կարգը և այդ փաստաթղթերը հասարակությանը մատչելի դարձնելու պահանջից բացառությունները» կանոնակարգ 4/08-ը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 207-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Արժեթղթերի շուկայի վերահսկվող անձանց հեռակա վերահսկողություն իրականացնելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունները, տեղեկանքները, բացատրությունները և նման այլ փաստաթղթերը հասարակությանը մատչելի դարձնելու կարգը և այդ փաստաթղթերը հասարակությանը մատչելի դարձնելու պահանջից բացառությունները» կանոնակարգ 4/08-ը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 հուլիսի 2008 թ., N 185-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 1-ի
թիվ 185-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/08

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՌԱԿԱ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԸ, ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՄԱՆ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՉԵԼԻ ԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԴ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՉԵԼԻ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻՑ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է վերահսկվող անձանց նկատմամբ հեռակա վերահսկողություն իրականացնելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունները, տեղեկանքները, բացատրությունները և նման այլ փաստաթղթերը հասարակությանը մատչելի դարձնելու կարգը և այդ հաշվետվությունները, տեղեկանքները, բացատրությունները և նման այլ փաստաթղթերը հասարակությանը մատչելի դարձնելու պահանջից բացառությունները:

2. Սույն կանոնակարգի իմաստով՝ վերահսկվող անձինք են համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, Հայաստանի Հանրապետության տարածքում արժեթղթերի հրապարակային առաջարկ անող անձինք, հաշվետու թողարկողները, կարգավորվող շուկայի օպերատոր հանդիսացող անձինք, Կենտրոնական դեպոզիտարիան, ինչպես նաև դրանց

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հուլիսի 1-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.08.08 թ. (ՀՀԳՏ N29 (303), 1.09.08):

տնօրենները և այլ ղեկավարները, նրանց կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձինք, նշանակալից մասնակցություն ունեցող անձինք, ինչպես նաև արժեթղթերի շուկայում կատարվող խոշոր գործարքներում ուղղակիորեն և անուղղակիորեն ներգրավված անձինք:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԸ, ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՄԱՆ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՉԵԼԻ ԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3. Եթե «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով այլ բան նախատեսված չէ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը վերահսկվող անձանց հեռակա վերահսկողություն իրականացնելու նպատակով ներկայացված հաշվետվությունները, տեղեկանքները, բացատրությունները և նման այլ փաստաթղթերը (բացառությամբ՝ սույն կանոնակարգի 4-րդ կետում սահմանված դեպքերի) ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում մատչելի է դարձնում հասարակությանը՝ տեղադրելով դրանք Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային էջում, եթե օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով այլ ժամկետ և կարգ սահմանված չէ:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԸ, ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՄԱՆ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՉԵԼԻ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻՑ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Հեռակա վերահսկողություն իրականացնելու նպատակով ներկայացված հաշվետվությունները, տեղեկանքները, բացատրությունները և նման այլ փաստաթղթերը մատչելի չեն դարձվում հասարակությանը, եթե՝

1) ստացվել են համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրքը հաստատելու մասին» թիվ 713-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի ««Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցելու կարգը» կանոնակարգ 4/06-ը հաստատելու մասին» թիվ 69-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ը հաստատելու մասին» թիվ 17-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ը հաստատելու մասին» թիվ 14-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 6-ի ««Արժեթղթերի պահառության գործունեությունը» կանոնակարգ 33-ը հաստատելու մասին» թիվ 33-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի ««Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ը հաստատելու մասին» թիվ 68-Ն որոշման (միայն ազդագիրը և առևտրի ազդագիրը՝ մինչև դրանց գրանցումը), Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրու-

մային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ը հաստատելու մասին» թիվ 140-Ն որոշման կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշման.

2) պարունակում են այնպիսի տեղեկություններ, որոնց գաղտնիությունը հարգվել է, կամ թողարկողը դիմել է Կենտրոնական բանկ այդպիսի տեղեկությունների գաղտնիությունը հարգելու դիմումով (մինչև դրանց գաղտնիությունը հարգելը կամ մերժելը)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված կարգով և դեպքերում.

3) պարունակում են պետական, բանկային, առևտրային գաղտնիք, ապահովագրական գաղտնիք կամ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ծառայողական տեղեկությունները:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերը և 70-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի ««Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին» թիվ 311-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» կանոնակարգ 3/02-ում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ լրացումները.

1) հավելվածի 2-րդ կետը լրացնել 2.6 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.6) մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն5 նորմատիվ)».

2) հավելվածի 2-րդ գլուխը լրացնել 8.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8.1. Սույն կանոնակարգի գլուխ 8-ի համաձայն հաշվարկված մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվի առավելագույն սահմանաչափը սահմանվում է 10 տոկոս:».

3) հավելվածի 9-րդ կետում «պայմանագիր կնքելու պահին» բառերից հետո լրացնել «, Ն5 նորմատիվը՝ օրական, ամսական կտրվածքով և Ն5 նորմատիվի Ռ տարրի մեջ ընդգրկվող տարրերի ծագման և այդ տարրերի մեծության յուրաքանչյուր փոփոխության դեպքում» բառերը.

4) հավելվածը լրացնել գլուխ 8-ով՝ հետևյալ բովանդակությամբ.

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հուլիսի 1-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.08.08 թ. (ՀՀԳՏ N29 (303), 1.09.08):

«ԳԼՈՒԽ 8. ՄԵԿ ՓՈԽԱՌՈՒԻ ԳԾՈՎ ՌԻՍԿԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԻ ՆՈՐՄԱՏԻՎԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՏԱՐՐԵՐԻ ԿԱԶՄԸ

36. Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն5) հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

Ն5=(Ռ/ԸԿ)*100, որտեղ՝

Ռ – ն ապահովագրական ընկերության կողմից մեկ անձին և նրա հետ փոխկապակցված անձանց տրամադրված փոխառությունների, կանխավճարների, մեկ անձի և նրա հետ փոխկապակցված անձանց կողմից թողարկված արժեթղթերում ներդրումների, մեկ անձի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ ունեցած ցանկացած այլ պահանջների, ինչպես նաև վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների մնացորդների հանրագումարն է, որոնք չեն հանդիսանում վերաապահովագրության պայմանագրերից բխող դեբիտորական պարտքեր, Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր և սույն կանոնակարգի 12.4 ենթակետով սահմանված հիմնական կապիտալի հաշվարկից նվազեցվող ներդրումները: Ընդ որում, վերաապահովագրության պայմանագրերը ներառում են միայն այն պայմանագրերը, որոնցով ապահովագրական ընկերությունն իր կողմից ստանձնած ապահովագրական ռիսկերը վերաապահովագրում է:

1) Ն5 նորմատիվի «Ռ» տարրում ընդգրկվող մեծությունները նվազեցվում են դրանց գծով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 25-ի թիվ 73-Ն որոշմամբ ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2008 թվականի ապրիլի 14-ի թիվ 285-Ն հրամանով հաստատված «Ապահովագրական ընկերությունների ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման և օգտագործման կարգը» կանոնակարգ 3/09-ին համապատասխան ձևավորված պահուստների գումարի չափով:

2) ԸԿ–ն ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի մեծությունն է՝ հաշվարկված համաձայն սույն կանոնակարգի գլուխ 3-ի:

37. Ն5 նորմատիվի «Ռ» տարրի մեջ ընդգրկվող տարրերի ծագման, այդ տարրերի մեծության յուրաքանչյուր փոփոխության պահին և օրական կտրվածքով Ն5 նորմատիվը հաշվարկելիս օգտագործվում է տվյալ օրվա վերջի դրությամբ ընդհանուր կապիտալի մեծությունը: Ն5-ի ամսական հաշվարկում «Ռ» տարրը ընդգրկվում է հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ, իսկ ընդհանուր կապիտալը՝ միջին օրական մեծությամբ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է 2009 թվականի ապրիլի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 հուլիսի 2008 թ., N 186-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի «ե», «իա» կետերը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ը հաստատելու մասին» թիվ 366-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հուլիսի 1-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.08.08 թ. (ՀՀԳՏ N29 (303), 1.09.08):

ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ում» (այսուհետ՝ կանոնակարգ 3/04) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) կանոնակարգ 3/04-ի 48-րդ կետի «11» թիվը փոխարինել «13» թվով.

2) կանոնակարգ 3/04-ը լրացնել նոր 50.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«50.1. Եթե ապահովագրական ընկերությունը չի խախտել մեկ փոխառուի գծով ստանձնած ռիսկի առավելագույն չափի Ն5 նորմատիվը, ապա աղյուսակ 1-ի 9-րդ սյունակում լրացվում է մեկ փոխառուի գծով ստանձնած ռիսկի ամենամեծ գումարը: Եթե ապահովագրական ընկերությունը խախտել է Ն5 նորմատիվը, ապա 9-րդ սյունակի առաջին տողում ցույց է տրվում խախտում առաջացնող ամենամեծ գումարը, իսկ հաջորդ տողերում՝ խախտումներ առաջացրած մնացած գումարները՝ ըստ նվազող հաջորդականության».

3) կանոնակարգ 3/04-ը լրացնել նոր 60.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«60.1. Հաշվետվության 12-րդ աղյուսակում արտացոլվում են մեկ փոխառուի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ ապահովագրական ընկերության այն պահանջները, որոնք գերազանցում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի ««Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին» թիվ 311-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» կանոնակարգ 3/02-ի համաձայն հաշվարկված ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի միջին օրական մեծության 5 և ավելի տոկոսը (խոշոր փոխառուներ): «Կազմակերպության (փոխառուի) անվանումը» սյունակում լրացվում է ապահովագրական ընկերության կողմից մեկ փոխառուի նկատմամբ ունեցած բոլոր պահանջների հանրագումարը, որոնք չեն հանդիսանում վերաապահովագրության պայմանագրերից բխող դեբիտորական պարտքեր (ընդ որում, վերաապահովագրության պայմանագրերը ներառում են միայն այն պայմանագրերը, որոնցով ապահովագրական ընկերությունը իր կողմից ստանձնած ապահովագրական ռիսկերը վերաապահովագրում է), Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթերը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի ««Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին» թիվ 311-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» կանոնակարգ 3/02-ի 12.4 ենթակետով սահմանված հիմնական կապիտալի հաշվարկից նվազեցվող ներդրումներ: Եթե ապահովագրական ընկերությունը պահանջ ունի միմյանց հետ փոխկապակցված անձանց նկատմամբ (փոխկապակցված խումբ), ապա «Կազմակերպության (փոխառուի) անվանումը» սյունակում լրացվում է փոխկապակցված խմբի «կապող օղակ» հանդիսացող փոխառուն: Մասնավորապես, «Ա» փոխառուն փոխկապակցված է «Բ» փոխառուի հետ, իսկ վերջինս փոխկապակցված է նաև «Գ» փոխառուի հետ: Հաշվետվության «Կազմակերպության (փոխառուի) անվանումը» սյունակում լրացվում է «Բ» փոխառուն, իսկ 7-րդ սյունակում՝ այդ փոխառուի հետ փոխկապակցված անձանց հանդեպ ունեցած պահանջի ընդհանուր գումարը մեկ տողով, ընդ որում, այդ անձանց անունները բացվում են հաշվետվության 13-րդ աղյուսակում: Եթե ապահովագրական ընկերությունն ունի միմյանց հետ փոխկապակցված երկու խոշոր փոխառու, որոնց անհատական ռիսկերը հավասար են կամ գերազանցում են ապահովագրական ընկերության միջին ամսական ընդհանուր կապիտալի 5 տոկոսը, ապա հաշվետվության «Կազմակերպության (փոխառուի) անվանումը» սյունակում լրացվում է փոխկապակցված անձանցից ամենամեծ պարտավորություն ունեցող անձի անվանումը: Միևնույն անձի հանդեպ ունեցած պահանջները պետք է արտացոլվեն միայն մեկ անգամ: Մասնավորապես, երբ «Ա» փոխառուն, որի գծով ապահովագրական ընկերության ռիսկը կազմում է 0.6 տոկոս, փոխկապակցված է «Բ» (5%), «Գ» (0.62%), «Դ» (5%) փոխառուների հետ, և «Բ» փոխառուն փոխկապակցված է նաև «Ե» (5%) փոխառուի հետ, ապա հաշվետվության առաջին էջի առանձին տողում՝ «Կազմակերպության (փոխառուի) անվանումը» սյունակում, լրացվում է «Ա» փոխառուի անվանումը, 7-րդ սյունակում՝ «Ա» փոխառուի հետ փոխկապակցված «Բ», «Գ», «Դ» փոխառուների հանդեպ ապահովագրական ընկերության ունեցած պահանջների հանրագումարը, իսկ հաջորդ տողում՝ «Կազմակերպության (փոխառուի) անվանումը» սյունակում լրացվում է «Ե» փոխառուի անվանումը, իսկ 7-րդ սյունակում ոչինչ չի լրացվում:».

4) կանոնակարգ 3/04-ը լրացնել նոր 60.2 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«60.2. Աղյուսակ 13-ում լրացվում են հաշվետվության 12-րդ աղյուսակի 7-րդ սյունակի հանրագումարի մանրամասն նկարագրությունը: Աղյուսակ 13-ի 2-րդ սյունակում առանձին տողերով պետք է արտացոլվեն տվյալ փոխառուի հետ փոխկապակցված և ապահովագրական ընկերության հանդեպ պարտավորություններ ստանձնած բոլոր անձանց անունները (անվանումները): Ընդ որում, մնացած սյունակները լրացվում են միայն, եթե տվյալ տողում արտացոլված փոխառուի հետ փոխկապակցված անձի հանդեպ ապահովագրական ընկերության ունեցած պահանջները ներառված են 12-րդ աղյուսակում տվյալ փոխառուի համապատասխան տողի 7-րդ սյունակի հանրագումարում: Սույն աղյուսակի տեսքով բերվում է փոխառուի հետ փոխկապակցված անձանց հանդեպ ունեցած պահանջների լրացման ձևի օրինակը:

Կազմակերպության (փոխառուի) անվանումը	Տվյալ փոխառուի հետ փոխկապակցված անձանց անունները (անվանումները)	Ժամկետային փոխառության մնացորդը	Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածներ	Ընդամենը
«Գ» ՍՊԸ	«Բ» ՍՊԸ	200 000	50 000	250 000
«Գ» ՍՊԸ	Պետրոսյան Պետրոս		100 000	100 000

5) կանոնակարգ 3/04-ի 2-րդ կետով նախատեսված աղյուսակի 3-րդ կետում «Հաշվետվություն Ն1[1], Ն1[2], Ն2, Ն3, Ն4 հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ» բառերը փոխարինել «Հաշվետվություն Ն1[1], Ն1[2], Ն2, Ն3, Ն4, Ն5 հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ» բառերով.

6) կանոնակարգ 3/04-ի հավելված 3-ի «Հաշվետվություն թիվ 3 Ն1[1], Ն1[2], Ն2, Ն3, Ն4 հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ» բառերը փոխարինել «Հաշվետվություն թիվ 3 Ն1[1], Ն1[2], Ն2, Ն3, Ն4, Ն5 հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ» բառերով.

7) կանոնակարգ 3/04-ի հավելված 3-ի «Աղյուսակ 1»-ը 8-րդ սյունակից հետո լրացնել 9-րդ սյունակով՝ հետևյալ բովանդակությամբ.

Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափ (հազար դրամ)
9

8) կանոնակարգ 3/04-ի հավելված 3-ի «Աղյուսակ 2»-ը 7-րդ սյունակից հետո լրացնել 8-րդ սյունակով՝ հետևյալ բովանդակությամբ.

Ն5 նորմատիվի մեծություն
8

9) կանոնակարգ 3/04-ի հավելված 3-ը լրացնել նոր աղյուսակ 12-ով՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է).

10) կանոնակարգ 3/04-ի հավելված 3-ը լրացնել նոր աղյուսակ 13-ով՝ համաձայն հավելված 2-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2009 թվականի ապրիլի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 հուլիսի 2008 թ., N 187-Ն

Հավելված 1

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 187-Ն որոշման

ԱՂՅՈՒՍԱԿ 12. Ն5 ՆՈՐՄԱՏԻՎԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

Ապահովագրական ընկերության անվանում _____
Ամսաթիվ _____

Հ/Հ	Կազմակերպության ցուցանիշի անվանումը	Ժամկետային փոխառության մնացորդը	Երկարաժամկետ և ժամկետային փոխառության ցուցանիշը	Վարկային ռիսկ պարունակող հետադարձելիշարժուն կոդվածների մնացորդ	Ապահովագրական ընկերության ցուցանիշում ՀԱ ժամկետը ժամկետային մնացորդ	Ապահովագրական ընկերության երկարաժամկետ և ժամկետային ներդրումների ցուցանիշի մնացորդը	Տվյալ փոխառուի հետ փոխկապակցված անձանց ընդհանուր ներդրումների գումարը	Ընդամենը (2+3+4+5+6+7)	Հետադարձ կրեդիտների սահուն	Ն5 նորմատիվի հաշվարկման մեջ ընդգրկվող մնացորդը (8-9)
	1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*
	Ընդամենը									
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										
12										
13										
14										
15										
16										
17										
18										
19										
20										
21										
22										
23										
24										
25										
26										
...										
60										

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ
(Գործադիր տնօրեն) _____

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ _____

Հավելված 2

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 187-Ն որոշման

ԱՂՅՈՒՍԱԿ 13. ՄԵԿ ՓՈԽԱՌՈՒԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՋԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Ամսաթիվ _____

(հազար դրամ)

Հ/Հ	Կազմակերպության (փոխառուի) անվանումը	Տվյալ փոխառուի հետ փոխկապակցված անձանց անունները (անվանումները)	Ժամկետային փոխառության մնացորդը	Երկարաձգված և ժամկետանց փոխառության մնացորդը	Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների մնացորդ	Ապահովագրական ընկերության մնացորդ՝ որպես ժամկետային այլ պարտավորություններ	Ապահովագրա- կան ընկերության մնացորդը երկարաձգված և ժամկետանց այլ պարտավորություն-ների մնացորդը	Ընդամենը (3+4+5+6+7)	Հնարավոր կորուստների պահուստ	Գումարը (8-9)
	1	2	3	4	5	6	7	8	9	10
	Ընդամենը									
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										
12										
13										
14										
15										
16										
17										
18										
19										
20										
21										
22										
23										
24										
25										
26										
.....										
60										

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ
(Գործադիր տնօրեն) _____

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ _____

2008-2009 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Խաչատուր Աբովյանի ծննդյան 200-ամյակ», «Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի» 825-ամյակ», «Գլաձորի համալսարանի 725-ամյակ» և «Սուրբ Սարգիս Զորավար» հուշադրամների ուրվագծերը և տեխնիկական չափանիշները հաստատելու մասին

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 26-ի «2008-2009 թվականների հուշադրամների թողարկման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 184Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Խաչատուր Աբովյանի ծննդյան 200-ամյակ», «Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի» 825-ամյակ», «Գլաձորի համալսարանի 725-ամյակ», «Սուրբ Սարգիս Զորավար» հուշադրամների դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը և տեխնիկական չափանիշները՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
1 օգոստոսի 2008 թ., N 215Ա

Հավելված

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 29-ի թիվ 215Ա որոշման

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 200-ԱՄՅԱԿ





Խաչատուր Աբովյանի ծննդյան 200-ամյակ	Անվանական արժեքը	Մետաղը և հարգը	Քաշը (գ)	Տրամագիծը (մմ)	Դրամաշուրթը	Որակը	Տպաքանակը
	10000 դրամ	ոսկի, 900^0	8,6	22,0	ատամնավոր	պրուֆ	1000

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԳԻՐՔ ԴԱՏԱՍՏԱՆԻ» 825-ԱՄՅԱԿ





Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի» 825-ամյակ	Անվանական արժեքը	Մետաղը և հարգը	Քաշը (գ)	Տրամագիծը (մմ)	Դրամաշուրթը	Որակը	Տպաքանակը
	1000 դրամ	արծաթ, 925^0	8,6	40,0	ատամնավոր	պրուֆ	500

ԳԼԱՋՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 725-ԱՄՅԱԿ





Գլաձորի համալսարանի 725-ամյակ	Անվանական արժեքը	Մետաղը և հարգը	Քաշը (գ)	Տրամագիծը (մմ)	Դրամաշուրթը	Որակը	Տպաքանակը
	1000 դրամ	արծաթ, 999^0	31,1	38,0	ատամնավոր	պրուֆ	500

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՋՈՐԱՎԱՐ





Սուրբ Սարգիս Զորավար	Անվանական արժեքը	Մետաղը և հարգը	Քաշը (գ)	Տրամագիծը (մմ)	Դրամաշուրթը	Որակը	Տպաքանակը
	5000 դրամ	ոսկի, 900^0	4,3	18,0	ատամնավոր	լավացված	5000

*«Կարգավորվող շուկայի մասնակիցների և հաշվետու թողարկողների կողմից թույլ տրված խախտումների մասին կարգավորվող շուկայի օպերատորի կողմից Կենտրոնական բանկին տեղեկացնելու կարգը» կանոնակարգ 5/05-ը»հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 140-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ««Կարգավորվող շուկայի մասնակիցների և հաշվետու թողարկողների կողմից թույլ տրված խախտումների մասին կարգավորվող շուկայի օպերատորի կողմից Կենտրոնական բանկին տեղեկացնելու կարգը» կանոնակարգ 5/05-ը»՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
1 օգոստոսի 2008 թ., N 226-Ն

Հավելված
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 29-ի
թիվ 226-Ն որոշման

«ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 5/05-Ը

1. Սույն կանոնակարգը սահմանում է կարգավորվող շուկայի մասնակիցների և հաշվետու թողարկողների կողմից թույլ տրված՝ արժեթղթերի շուկան կարգավորող օրենքներով սահմանված պահանջների խախտումների մասին կարգավորվող շուկայի օպերատորի (այսուհետ՝ օպերատոր) կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) տեղեկացնելու կարգը:

2. Օպերատորի վերահսկող ծառայությունը պարտավոր է կարգավորվող շուկայի մասնակիցների և հաշվետու թողարկողների կողմից արժեթղթերի շուկան կարգավորող օրենքներով սահմանված պահանջների ցանկացած խախտման մասին խախտումը բացահայտելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Կենտրոնական բանկին՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 1-ի:

3. Սույն կանոնակարգի 2-րդ կետով սահմանված տեղեկացումը օպերատորը Կենտրոնական բանկ է ներկայացնում էլեկտրոնային կամ թղթային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկացումը ներկայացվում է SիԲիէյՆեթ համակարգի միջոցով: SիԲիէյՆեթ համակարգից օգտվելու անհնարինության դեպքում էլեկտրոնային եղանակով տեղեկացումը Կենտրոնական բանկ է ներկայացվում Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով, մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով: Մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով տեղեկացնելու դեպքում միաժամանակ ներկայացվում է կից գրություն:

4. Թղթային եղանակով տեղեկացնելու դեպքում տեղեկացումը պետք է ստորագրվի վերահսկող ծառայության ղեկավարի կողմից և կնքվի օպերատորի կնիքով:

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հուլիսի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 26.08.08 թ. (ՀՀԳՏ N30 (304), 16.09.08):

Հավելված 1

««Կարգավորվող շուկայի մասնակիցների և հաշվետու թողարկողների կողմից թույլ տրված խախտումների մասին կարգավորվող շուկայի օպերատորի կողմից Կենտրոնական բանկին տեղեկացնելու կարգը» կանոնակարգ 5/05-ի»

Հավելված

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔՆԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

_____
(տեղեկացման համարը)

_____-ը
(օպերատորի անվանումը)

տեղեկացնում է կարգավորվող շուկայում բացահայտված հետևյալ խախտման (խախտումների) մասին.

Հ/Հ	Խախտում թույլ տված իրավաբանական անձի անվանումը	Իրավաբանական անձի կազմում գործող խախտում թույլ տված ֆիզիկական անձի անունը, ազգանունը, պաշտոնը (պաշտոնները)	Խախտման ենթարկված անձի հասցեն	Խախտված օրենսդրական ակտի անվանումն ու հոդվածը	Խախտման կենսագործման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները (առկայության դեպքում)	Խախտում թույլ տված անձի հետ կապի միջոցները (հասցե, հեռախոսահամար)	Խախտման բացահայտման ամսաթիվը, ամիսը, տարին
1.							
2.							
…							

_____
(Այն անձի (անձանց) անունը, ազգանունը, կապի միջոցները, որի (որոնց) հետ կարելի է կապ հաստատել՝ կապված թույլ տրված խախտումների հետ)

_____
(Վերահսկող ծառայության ղեկավարի ստորագրությունը)

«__» _____ _____ թ.
(տեղեկացման տարին, ամիսը, ամսաթիվը)

Կ.Տ.

*Բանկերի, վարկային կազմակերպությունների, արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք, արտարժույթի առուվաճառք իրականացնող անձանց, դրամական փոխանցումներ իրականացնող անձանց, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, գրավատների (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 001 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի թիվ 55-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**[*]

Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 71-րդ հոդվածները, ինչպես նաև ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 20-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 001 հաշվետվական ձև)»՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը»՝ համաձայն հավելված 2-ի (կցվում է):

3. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ժամկետները»՝ համաձայն հավելված 3-ի (կցվում է):

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի «Բանկերի, վարկային կազմակերպությունների, արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք, արտարժույթի առուվաճառք իրականացնող անձանց, դրամական փոխանցումներ իրականացնող անձանց, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց, գրավատների, վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 001 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հունվարի 17-ի թիվ 25-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 55-Ն որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի օգոստոսի 31-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 օգոստոսի 2008 թ., N 231-Ն

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հուլիսի 31-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.08.08 թ. (ՀՀԳՏ N28 (302), 27.08.08):

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի
թիվ 231-Ն որոշմամբ

Նոր հաշվետվություն ◯
Լրացում հաշվետվություն ◯
Լրացվող հաշվետվության համարը ☐ և ☐
և հերթական լրացում հաշվետվության տարբերակը

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎ 001

Հաշվետվական ձևը լրացվում և ներկայացվում է բանկերի, վարկային կազմակերպությունների, արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի, արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց, դրամական փոխանցումներ իրականացնող անձանց, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, գրավատների կողմից՝ սույն ձևի լրացման և ներկայացման ուղեցույցի համաձայն

Հաշվետվական ձևում «»-ով նշված են պարտադիր տեղեկացման գործարքների համար անհրաժեշտ լրացման դաշտերը*

1. ԳՈՐԾԱՐՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

***1.1. Գործարքի կատարման ամսաթիվը** ☐☐/☐☐/☐☐☐☐
Լրացրեք 1.2 և 1.3 կետերից միայն մեկը

***1.2. Պարտադիր տեղեկացման գործարք** ☐	**1.3. Կասկածելի գործարք** ☐

1.3.1. Գործարքը կասկածելի համարելու հիմքերը և չափանիշները ըստ կարգի
(հատկացված դաշտում մուտքագրվող տեղեկատվությունը չտեղավորվելու դեպքում ավելացրեք համարակալված թերթ, որի ձախ անկյունում նշեք 1.3.1, և լրացրեք անհրաժեշտ տեղեկությունները)

Տե՛ս Ուղեցույց, ընդհանուր դրույթներ, կետ 5

Լրացրեք 1.3.2 և 1.3.3 կետերից միայն մեկը

1.3.2. Գործարքը կասեցվել է ☐	**1.3.3. Դադարեցվել է** ☐

1.3.4. Կասեցման կամ դադարեցման ամսաթիվը և ժամկետը ☐☐/☐☐/☐☐☐☐ և ☐օր

1.3.5. Չկատարված կամ չավարտված գործարք ☐

Արդյոք փոխկապակցված է գործարքը *(լրացրեք 1.4 և 1.5 կետերից միայն մեկը)*

1.4. Այո ☐ քանակը ☐ հատ	**1.5. Ոչ** ☐

***1.6. Գործարք(ներ)ի էությունը** (լրացրեք մեկ և ավելի հնարավոր բոլոր տարբերակները)

***1.6.1. Կանխիկ դրամի մուտք**	☐
***1.6.2. Կանխիկ դրամի ելք**	☐
***1.6.3.1. Բանկային հաշվով փոխանցումներ**	☐
***1.6.3.2. Բանկային հաշվով ստացումներ**	☐
***1.6.4.1. Անհաշիվ անկանխիկ դրամական փոխանցումներ**	☐
***1.6.4.2. Անհաշիվ անկանխիկ դրամական ստացումներ**	☐
***1.6.5. Փոխարկում**	☐

Լրացրեք 1.6.5, 1.6.5.1, 1.6.5.2, 1.6.5.3, 1.6.5.4 կետերը արտարժույթի փոխանակման դեպքում

***1.6.5.1. Առքի արժույթ**	***1.6.5.2. Վաճառքի արժույթ**	***1.6.5.3. Առքի գումար**	***1.6.5.4. Վաճառքի գումար**

***1.6.6. Այլ**

(հատկացված դաշտում մուտքագրվող տեղեկատվությունը չտեղավորվելու դեպքում ավելացրեք համարակալված թերթ, որի ձախ անկյունում նշեք 1.6.6, և լրացրեք անհրաժեշտ տեղեկությունները)

Տե՛ս Ուղեցույց, ընդհանուր դրույթներ, կետ 5

***1.7. Գործարքի նպատակը** *(լրացրեք մեկ և ավելի հնարավոր բոլոր տարբերակները)*

***1.7.1. ավանդ**	☐	***1.7.2. վարկ**	☐	***1.7.3. ակրեդիտիվ**	☐
***1.7.4.1. հաշվի բացում**	☐	***1.7.4.2. համալրում**	☐	***1.7.4.3. նվազեցում**	☐
***1.7.5. լիզինգ**	☐	***1.7.6. ֆակտորինգ**	☐	***1.7.7. ծառայությունների դիմաց վճարներ**	☐
***1.7.8. Ապրանքների դիմաց վճարներ**	☐	***1.7.9. Այլ**			☐

(հատկացված դաշտում մուտքագրվող տեղեկատվությունը չտեղավորվելու դեպքում ավելացրեք համարակալված թերթ, որի ձախ անկյունում նշեք 1.7.9, և լրացրեք անհրաժեշտ տեղեկությունները)

Տե՛ս Ուղեցույց, ընդհանուր դրույթներ, կետ 6

***1.8.1. Գործարքի արժույթը** ☐ ***1.8.2. Գումարը** ☐ ՀՀ դրամ

2. ԳՈՐԾԱՐՔԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁԸ (ՀԱՃԱԽՈՐԴԸ)

Անձը, ով կատարում է կամ ում անունից կատարվում է գործարքը

Երկու և ավելի հաճախորդների դեպքում անձնանց տվյալները լրացրեք երկու և ավելի անգամ

Տե՛ս Ուղեցույց, ընդհանուր դրույթներ, կետ 6

2.1. Գործարքի կողմերի քանակը** ☐ Մեկից ավելի կողմերի դեպքում լրացրեք ***այստեղ

2.1.1. Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր

***2.1.1.1. Լրիվ անվանումը**
Կազմակերպության անունը, կազմակերպաիրավական ձևը

***2.1.1.2. Գտնվելու (բնակության) վայրը**
Լրացրեք բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը | Երկիրը

***2.1.1.3. Հարկ վճարողի հաշվառման համարը**

***2.1.1.4. Պետական գրանցման համարը**

2.1.1.5. Լիցենզիայի համարը

***2.1.1.6. Բանկային հաշվի համարը**

2.1.2. Եթե անձը, որը հանդիսանում է գործարքի կողմ, ֆիզիկական անձ է

***2.1.2.1. Անուն** ***2.1.2.2. Ազգանուն**

Նշեք գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի սեռը և ընտանեկան դրությունը և

***2.1.2.3. Բնակության վայրը**
Լրացրեք բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը | Երկիրը

***2.1.2.4. Ծննդյան ամսաթիվը** օ օ / ա ա / տ տ տ տ **2.1.2.5. Քաղաքացիությունը** Երկիրը

***2.1.2.6. Սոցիալական քարտի համարը**

***2.1.2.7. Անձը հաստատող փաստաթղթի անվանումը**

***2.1.2.7.1. Փաստաթղթի համարը**

***2.1.2.7.2. Տրված է ում կողմից և երբ** օ օ / ա ա / տ տ տ տ

***2.1.2.8. Բանկային հաշվի համարը**

2.2. ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ (ՈՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ԳՈՐԾԱՐՔԸ)

Այս բաժինը լրացրեք միայն այն դեպքում, երբ գործարքը կատարվում է լիազորված անձի միջոցով

Լիազորված անձանց քանակը ☐ Մեկից ավելի լիազորված անձանց դեպքում լրացրեք ***այստեղ***

Երկու և ավելի լիազորված անձանց դեպքում լիազորված անձի տվյալները լրացրեք երկու և ավելի անգամ

2.2.1. Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր

2.2.1.1. Լրիվ անվանումը _____
Կազմակերպության անունը, կազմակերպաիրավական ձևը

2.2.1.2. Գտնվելու (բնակության) վայրը _____ | _____ | _____
Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը | Երկիրը

2.2.1.3. Հարկ վճարողի հաշվառման համարը _____

2.2.1.4. Պետական գրանցման համարը _____

2.2.1.5. Լիցենզիայի համարը _____

2.2.1.6. Բանկային հաշվի համարը _____

2.2.2. Եթե լիազորված անձը ֆիզիկական անձ է

2.2.2.1. Անուն _____ **2.2.2.2. Ազգանուն** _____

Նշեք գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի սեռը և ընտանեկան դրությունը ☐ և ☐

2.2.2.3. Բնակության վայրը _____ | _____ | _____
Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը | Երկիրը

2.2.2.4. Ծննդյան ամսաթիվը ☐☐ / ☐☐ / ☐☐☐☐ **2.2.2.5. Քաղաքացիությունը** ☐
օ օ / ա ա / տ տ տ տ
Երկիրը

2.2.2.6. Սոցիալական քարտի համարը _____

2.2.2.7. Անձը հաստատող փաստաթղթի անվանումը _____

2.2.2.7.1. Փաստաթղթի համարը _____

2.2.2.7.2. Տրված է ում կողմից և երբ _____ | ☐☐ / ☐☐ / ☐☐☐☐
օ օ / ա ա / տ տ տ տ

2.1.1.6. Բանկային հաշվի համարը _____

3. ԱՆՁԸ (ՇԱՀԱՌՈՒ), ՈՒՄ ՕԳՏԻՆ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԳՈՐԾԱՐՔԸ

Այս բաժինը մի լրացրեք, եթե գործարք կատարող կամ գործարքի մյուս կողմ հանդիսացող անձը նաև շահառու է

Երկու և ավելի շահառուների դեպքում շահառուի անձնական տվյալները լրացրեք երկու և ավելի անգամ

3.1. Շահառուների քանակը ☐ Մեկից ավելի շահառուների դեպքում լրացրեք ***այստեղ***

3.1.1. Եթե շահառուն իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր

3.1.1.1. Լրիվ անվանումը _____
Կազմակերպության անունը, կազմակերպաիրավական ձևը

3.1.1.2. Գտնվելու (բնակության) վայրը _____ | _____ | _____
Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը | Երկիրը

3.1.1.3. Հարկ վճարողի հաշվառման համարը _____

3.1.1.4. Պետական գրանցման համարը _____

3.1.1.5. Լիցենզիայի համարը _____

3.1.1.6.1. Բանկային հաշվի համարը _____

3.1.1.6.2. Բանկի անվանումը և երկիրը _____ _____

3.1.2. Եթե շահառուն ֆիզիկական անձ է

3.1.2.1. Անուն _____ **3.1.2.2. Ազգանուն** _____

Նշեք գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի սեռը և ընտանեկան դրությունը ☐ և ☐

3.1.2.3. Բնակության վայրը
Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը | Երկիրը

3.1.2.4. Ծննդյան ամսաթիվը (օ օ / ա ա / տ տ տ տ) 3.1.2.5. Քաղաքացիությունը (Երկիրը)

3.1.2.6. Սոցիալական քարտի համարը

3.1.2.7. Անձը հաստատող փաստաթղթի անվանումը

3.1.2.7.1. Փաստաթղթի համարը

3.1.2.7.2. Տրված է ում կողմից և երբ (օ օ / ա ա / տ տ տ տ)

3.1.2.8.1. Բանկային հաշվի համարը

3.1.2.8.2. Բանկի անվանումը և երկիրը

3.2. ԳՈՐԾԱՐՔԻ ՄՅՈՒՍ ԿՈՂՄ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁ

Այս բաժինը մի լրացրեք, եթե գործարք կատարողը (հաճախորդը) և ստացողը նույն անձն է:
Երկու և ավելի ստացողների (փոխանցողների) դեպքում անձանց տվյալները լրացրեք երկու և ավելի անգամ
Տե՛ս Ուղեցույց, ընդհանուր դրույթներ, կետ 5

Գործարքի կողմերի քանակը — Մեկից ավելի ստացողների դեպքում լրացրեք *այստեղ*

3.2.1. Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր

*3.2.1.1. Լրիվ անվանումը
Կազմակերպության անունը, կազմակերպահրավական ձևը

*3.2.1.2. Ռեզիդենտությունը
Երկիրը

3.2.1.3. Գտնվելու (բնակության) վայրը
Քաղաքը | Երկիրը

*3.2.1.4.1. Բանկային հաշվի համարը

*3.2.1.4.2. Բանկի անվանումը և երկիրը

3.2.2. Ֆիզիկական անձ

*3.2.2.1. Անուն *3.2.2.2. Ազգանուն

Նշեք գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի սեռը և ընտանեկան դրությունը և

3.2.2.3. Բնակության վայրը
Քաղաքը | Երկիրը

*3.2.2.4. Ռեզիդենտությունը
Երկիրը

3.2.2.5. Անձը հաստատող փաստաթղթի անվանումը

3.2.2.6. Փաստաթղթի համարը

3.2.2.7. Տրված է ում կողմից և երբ (օ օ / ա ա / տ տ տ տ)

*3.2.2.8.1. Բանկային հաշվի համարը

*3.2.2.8.2. Բանկի անվանումը և երկիրը

4. ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԿԱՐԵՎՈՐՎՈՂ՝ ԳՈՐԾԱՐՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(հատկացված դաշտում մուտքագրվող տեղեկատվությունը չտեղավորվելու դեպքում ավելացրեք համարակալված թերթ, որի ձախ անկյունում նշեք 4, և լրացրեք անհրաժեշտ տեղեկությունները)

Տե՛ս ուղեցույց, ընդհանուր դրույթներ, կետ 5

*5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ			
*5.1. Անուն		*5.2. Ազգանուն	
*5.3. Լրացման ամսաթիվը	օ օ / ա ա / տ տ տ տ	*Ստորագրություն*	Կ.Տ.
*5.4. Հաշվետու անձի հաշվառման համարը ՖԴԿ -ում			

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
Ֆինանսական դիտարկումների կենտրոն
Վ. Սարգսյան 6, Երևան 375010
Հեռ. 545088, Էլ. փոստ info_fiu@cba.am

Հավելված


«Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 001 հաշվետվական ձև)» հավելված 1-ի

ԹԻՎ 001 ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՈՒՂԵՑՈՒՅՑ)

Ընդհանուր դրույթներ

Սույն հաշվետվական ձևը լրացնել միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնից (այսուհետ՝ նաև ՖԴԿ) «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգի» հիման վրա հաշվառման համար ստանալուց հետո:

Հաշվետվական ձևի կառուցվածքը և ուղեցույցում հանդիպող հասկացությունները



1. Սույն հաշվետվական ձևը լրացրեք, եթե Ձեր կազմակերպությունը (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձ կամ հաշվետու անձ)՝

1) բանկ է,

2) վարկային կազմակերպություն է,

3) արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք իրականացնող անձ է,

4) արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձ է,

5) դրամական փոխանցումներ իրականացնող անձ է,

6) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձ է,

7) գրավատուն է:

2. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հետևյալ 2 դեպքերում.

1) եթե Ձեր կողմից կատարվող գործարքի (գործառնության) գումարը գերազանցում է 20 միլիոն դրամը.

2) եթե Ձեր կողմից կատարվող գործարքի (գործառնության) կնքման կամ իրականացման պայմաններում առկա է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) և (կամ) Լիազոր մարմնի ուղեցույցներով սահմանված կասկածելի գործարքի հիմքերից և չափանիշներից առնվազն մեկը՝ անկախ նրանից, թե գործարքի գումարը 20 միլիոն դրամը գերազանցում է, թե ոչ (օրինակ՝ հաճախորդը կատարում է փոխանցում և որպես հիմք ներկայացնում է արտաքին տնտեսական գործարք, որի պայմաններն էականորեն չեն համապատասխանում ձեռնարկատիրության տվյալ բնագավառում կնքվող նման գործարքների պայմաններին, կամ դրանում նշված է ակնհայտորեն ցածր կամ բարձր գին): Նշված օրինակի դեպքում, քանի որ առկա են կասկածի հիմքեր, ներկայացվում է կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն: Ընդ որում, կասկածելի գործարքի մասին հաշվետվություն ներկայացվելու դեպքում տվյալ գործարքի վերաբերյալ պարտադիր տեղեկացման համար նախատեսված սահմանաչափը գերազանցող հաշվետվություն չի ներկայացվում:

3. Եթե հաշվետվությունը ներկայացվում է կասկածելի գործարքի կապակցությամբ, ապա հաշվետվական ձևի բոլոր վանդակները համարվում են լրացման համար պարտադիր: Եթե հաշվետվությունը ներկայացվում է որպես պարտադիր տեղեկացման գործարք, ապա պարտադիր լրացման ենթակա են միայն աստղանիշով նշված վանդակները: Սակայն եթե հնարավոր չէ լրացնել տվյալ վանդակը համապատասխան տվյալների բացակայության դեպքում, ապա տվյալ վանդակում նշվում է աստղանիշ, և այդ մասին բացատրություն է տրվում հաշվետվական ձևի 5-րդ բաժնում:

4. Սույն հաշվետվական ձևի ներկայացումը պարբերական բնույթ չի կրում, այլ լրացվում է միայն 1-ին կետում նշված գործարքների (գործառնությունների) առկայության դեպքում:

5. Սույն հաշվետվական ձևում չեն լրացվում և չեն ներկայացվում պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների (գործառնությունների) վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

1) Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջե և այդ բյուջեից կատարված վճարումները,

2) միևնույն հաշվետիրոջ (սեփականատիրոջ)՝ Հայաստանի Հանրապետության տարբեր բանկերում գտնվող հաշիվների միջև կատարվող փոխանցումները,

3) միջբանկային շուկայում կատարվող գործարքները,

4) բանկի կամ վարկային կազմակերպության կողմից կատարվող գնումները՝ բացառությամբ ֆինանսական ակտիվների գնումների, օրինակ՝ արտարժույթի առուվաճառք, արժեթղթերի առուվաճառք և այլն,

5) բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վարկային ռեգիստր տրամադրվող տեղեկատվությունը,

6) հաշվետու կազմակերպությունների միջև իրենց անունից կնքված հետգնման պայմանով արժեթղթերի առուվաճառքի գործարքները (ռեպո և հակադարձ ռեպո գործարքներ):

6. Նշված բոլոր բացառությունները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ հաշվետու կազմակերպության կողմից առաջացել են գործարք(ներ)ի վերաբերյալ կասկածներ:

7. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հնարավորինս պարզ, հակիրճ, ընթեռնելի և միանշանակ ընկալվող լեզվով:

8. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հետևյալ երկու տարբերակներից որևէ մեկով.

1) թղթային տարբերակ. հաշվետվական ձևի թղթային տարբերակը կարող եք ձեռք բերել՝

ա. ՖԴԿ-ին դիմելու միջոցով.

բ. ՖԴԿ (www.cba.am/fmc/index.htm) ինտերնետային կայքից ելքագրելու միջոցով:

1.1) Հաշվետվական ձևի թղթային տարբերակը լրացրեք գրիչով:

1.2) Բովանդակային ուղղումներ կատարելու դեպքում լրացրեք հաշվետվական նոր ձև: Տեխնիկական բնույթի ուղղումներ կատարելու դեպքում ստորագրեք այդ ուղղումների կողքին:

1.3) Հաշվետվական ձևը լրացրեք թղթային տարբերակով տրված կետերի սահմաններում: Նոր բաժինների լրացման անհրաժեշտության դեպքում օգտվեք հավելյալ թղթերից: Այդ թղթերի վրա նշեք, թե որ բաժինն եք լրացնում, ստորագրեք դրանք և որպես հավելված կցեք հիմնական հաշվետվական ձևին: Օրինակ՝ պարզել եք, որ գործարքի շահառուն ոչ թե մեկն է, այլ երեքը. հաշվետվական ձևի 3-րդ բաժնի 3.1 կետում նշեք 3 թիվը, առանձին թերթի վրա բազմացրեք 3-րդ բաժինը ներառող հատվածը ևս երկու անգամ, լրացրեք համապատասխան տեղեկատվությունը, ստորագրեք և կցեք լրացված հաշվետվական ձևին:

1.4) Այն դեպքում, երբ հաշվետվական ձևի կետերի սահմանները բավարար չեն, այն լրացրեք լրացուցիչ թղթերի վրա հետևյալ կերպ. թղթի ձախ կողմում նշեք, թե որ կետին է վերաբերում տեղեկատվությունը, թերթերի համարակալումը շարունակեք հաշվետվական ձևի վերջին էջի համարին հաջորդող հերթական համարից սկսած: Օրինակ՝ հաշվետվական ձևի 1.3.1 կետում գործարքը կասկածելի համարելու հիմքերը նշեք լրացուցիչ թղթի վրա, այն համարակալեք հերթական համարով, էջի վերևի ձախ անկյունում նշեք 1.3.1 ստորագրեք և կցեք հաշվետվական ձևին:

2) էլեկտրոնային տարբերակ. հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակը կարող եք ձեռք բերել.

ա. ՖԴԿ-ին դիմելու միջոցով.

բ. ՖԴԿ (www.cba.am/fmc/index.htm) ինտերնետային կայքից ելքագրելու միջոցով:

2.1) Հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակը լրացրեք աղյուսակը ներառող պատուհաններն ակտիվացնելու և տվյալները մուտքագրելու միջոցով:

2.2) Կախված նրանից, թե որ կետերը ներառող պատուհաններում եք նշումներ կատարել, կակտիվանան միայն այն պատուհանները (ավտոմատացված ծրագրային համակարգի ներդնումից հետո), որոնց աղյուսակները փոխլրացնում են (չեն բացառում) միմյանց:

2.3) Աղյուսակները ներառող պատուհանները, ըստ դրանցում լրացվող նյութի ծավալի, ընդլայնվում են:

2.4) Եթե նույն բաժինը (օրինակ՝ 3-րդ բաժինը) պետք է լրացվի երկու և ավելի անգամ, ապա նշեք այդ բաժնի համապատասխան վանդակում (այս դեպքում՝ 3.1 կետը), և ավտոմատացված ծրագրային համակարգում կակտիվանան համապատասխան թվով բաժիններ:

2.5) Հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակը լրացրեք՝ օգտագործելով ներկայացված էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները: Էլեկտրոնային ձևում առկա սահմանափակումները փոփոխության ենթակա չեն: Ցանկացած ներկայացված հաշվետվություն, որը կպարունակի էլեկտրոնային ձևի կառուցվածքային փոփոխություն, կդիտարկվի թերի կամ սխալ լրացված հաշվետվություն:

9. Հաշվետվական ձևի ներկայացման ժամկետները սահմանված են սույն որոշման հավելված 3-ում:

10. Հաշվետվական ձևի ներկայացման եղանակները սահմանված են սույն որոշման հավելված 2-ում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11. Նոր հաշվետվություն կամ «Լրացում հաշվետվություն»: Յուրաքանչյուր հաշվետվություն լրացնելու համար անհրաժեշտ է կատարել նշում այն մասին, թե արդյոք դա նոր հաշվետվություն է, թե նախկինում արդեն տրամադրված «Լրացում հաշվետվություն»:

1) Եթե արդեն իսկ տրամադրված հաշվետվության հետ կապված անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ կամ փոփոխված տեղեկատվություն, ապա պետք է կատարել նշում «Լրացում հաշվետվություն» կետում: Համապատասխանաբար էլեկտրոնային տարբերակում կավելանան նախկինում ուղարկված հաշվետվության անվանումը և «լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտերը: «Հաշվետվության անվանումը» դաշտում նույնությամբ լրացվում է այն հաշվետվության էլեկտրոնային ֆայլի անվանումը, որին որպես լրացում ուղարկվում է «Լրացում հաշվետվությունը»: «Լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտում պետք է նշել (թվերով), թե որերորդ «Լրացում հաշվետվությունն» է ներկայացվում:

2) Լրացում հաշվետվությունը պետք է պարունակի նախկինում տրամադրված ամբողջ տեղեկատվությունը՝ ներառյալ կատարված փոփոխությունը:

3) Գործարքի վերաբերյալ հաշվետվության վերջնական տարբերակ է համարվում միևնույն անվանում ունեցող ֆայլերի «լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտում ամենավերջին հերթական համարն ունեցող ֆայլը:

4) Որպես լրացում է համարվում այն տեղեկատվությունը, որը՝

ա. հիմնական հաշվետվությունը լրացնելու պահին հասանելի չէ կամ հնարավոր չէ ստանալ, այսինքն, երբ հաշվետվությունը գործարքը կատարելու փաստի հիման վրա պետք է ներկայացվի ՖԴԿ-ին համապատասխան ժամկետում, սակայն պարտադիր լրացման ենթակա դաշտերի համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման նպատակով հարցումներ են կատարվել հաճախորդին, թղթակից կամ այլ կազմակերպություններին.

բ. ներկայացվում է ՖԴԿ հարցման հիման վրա. եթե հարցվող տեղեկատվության համար համապատասխան դաշտեր չկան, ապա տեղեկատվությունը լրացվում է հաշվետվական ձևի 4-րդ բաժնում.

գ. վերաբերում է կնքված, սակայն դեռևս չկատարված գործարքին. այս դեպքում նշում է կատարվում չավարտված կամ չկատարված գործարք դաշտում, իսկ հաշվետվական ձևի 4-րդ բաժնում նշվում է գործարքի ընդհատման պատճառը (օրինակ՝ հաճախորդի կողմից պայմանագրի միակողմանի լուծում).

դ. ներառում է հաշվետու անձի կողմից կարևորվող այլ տվյալներ. այդ տվյալների տրամադրման անհրաժեշտությունն առաջանում է հաշվետու անձի կողմից ստացված նոր տեղեկատվության՝ ՖԴԿ-ին ներկայացման հանգամանքով, որոնք չեն ներառում պարտադիր լրացման ենթակա դաշտերի տեղեկատվությունը:

12. (1.1) Գործարքի կնքման ամսաթիվը: Նշեք տեղեկացման ենթակա գործարքը (գործառնությունը) կատարելու ամսաթիվը, ամիսը, տարին (թվերով), իսկ եթե այն դեռևս չի կատարվել, նշում եք այն ամսաթիվը, երբ ներկայացվել է գործարքի կատարման պահանջը: Հաշվետվական ձևի 4-րդ բաժնում լրացրեք, թե գործարքը կատարման ինչ փուլում է:

1) Մի քանի փոխկապակցված (միայն կասկածելի գործարքների դեպքում) գործարքների դեպքում նշեք դրանցից վերջինը կատարելու ամսաթիվը կամ այն գործարքի ամսաթիվը, որից առաջացել է կասկածը: Ձեր նշումը մեկնաբանեք հաշվետվական ձևի 4-րդ բաժնում:

13. (1.2) Պարտադիր տեղեկացման գործարք: Այս կետում նշում կատարեք այն բոլոր դեպքերում, երբ գործարքի գումարը գերազանցում է 20 միլիոն դրամը (եթե գործարքը կասկածելի չէ):

1) Այս կետում նշում կատարելու դեպքում հաշվետվական ձևի 1.3 կետում նշում մի կատարեք: Այս կետում նշում կատարելու դեպքում պարտադիր լրացման են ենթակա միայն «*»-ով նշված վանդակները. եթե առկա է տեղեկատվություն այլ դաշտերի վերաբերյալ, ապա լրացվում են նաև դրանք:

2) Եթե գործարքի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում եք և՛ որպես պարտադիր տեղեկացման ենթակա, և՛ որպես կասկածելի գործարք, ապա այս կետը մի լրացրեք և նշում կատարեք 1.3 կետում. շարունակեք հաշվետվական ձևը լրացնել որպես կասկածելի գործարք:

14. (1.3) Կասկածելի գործարք: Այս կետում նշում կատարելու դեպքում հաշվետվական ձևի 1.2 կետում նշում մի կատարեք: Նշում կատարեք այն բոլոր դեպքերում, երբ գործարքի կնքման կամ իրականացման պայմաններում առկա է կասկածի հիմքերից և չափանիշներից առնվազն մեկը:

1) 1.3.1 կետում նշում կատարեք նաև այն դեպքերում, երբ գործարքում (գործառնությունում) միաժամանակ առկա են և պարտադիր տեղեկացման գործարքի և կասկածելի գործարքի մասին վկայող հանգամանքներ: Այս դեպքում 1.2 կետը մի նշեք:

Այս կետում նշում կատարելու դեպքում 1.3.1 կետում նշեք նաև կասկածի հիմքերը և չափանիշները, ինչպես նաև նշեք, թե Ձեր կարծիքով այդ կասկածը որն է:

2) Եթե Ձեր կողմից գործարքը կասեցվել կամ դադարեցվել է, ապա նշում կատարեք համապատասխանաբար 1.3.2 և 1.3.3 կետերում և 1.3.4 կետում նշեք կասեցման կամ դադարեցման ամսաթիվը և ժամկետը:

3) 1.3.5 կետում նշում կատարեք, եթե ինչ-որ պատճառով գործարքը չի կատարվել կամ չի շարունակվել: Եթե գործարքը չի կատարվել, ապա հաշվետվական ձևում լրացրեք այն տվյալները, որոնք հայտնի են դարձել գործարքի կնքման առաջարկի պահից սկսած մինչև հաճախորդի կողմից այն կատարելու մտադրությունից հրաժարվելու պահը: Հաշվետվական ձևի 4-րդ բաժնում նշեք, թե Ձեզ հայտնի ինչ պատճառներով այն չի կատարվել:

4) Այս կետում նշում կատարելու դեպքում ամբողջ հաշվետվությունը համարվում է կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն և 1.4 կետից սկսած տեղեկությունները լրացվում են կասկածելի գործարքի վերաբերյալ:

15. (1.4) Փոխկապակցված գործարքներ: Այս կետում նշում կատարեք այն դեպքերում, երբ առկա են մեկից ավելի փոխկապակցված գործարքներ (գործառնություններ): Փոխկապակցված գործարքներ (գործառնություններ) են՝

1) փոխկապակցված անձանց կողմից կնքվող գործարքները (գործառնությունները): Անձանց փոխկապակցվածությունը որոշվում է բանկերի դեպքում՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, վարկային կազմակերպությունների դեպքում՝ «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2) միևնույն գործարքի կողմ, լիազորված անձ, շահառու ունեցող գործարքները հետևյալ ժամկետներում՝

ա. մեկ օրվա (24 ժամ) ընթացում փոխկապակցված գործարքների գումարը գերազանցել է 20 մլն Հայաստանի Հանրապետության դրամը.

բ. մեկ ամսվա ընթացքում փոխկապակցված գործարքների գումարը գերազանցել է 40 մլն Հայաստանի Հանրապետության դրամը.

գ. մեկ տարվա ընթացքում փոխկապակցված գործարքների գումարը գերազանցել է 200 մլն Հայաստանի Հանրապետության դրամը,

3) գործարքների պայմաններից ակնհայտ է, որ միևնույն գործարքը կատարվում է մի քանի առանձին գործարքների միջոցով՝ նույնականացման կամ հաշվետվության ներկայացման պահանջից խուսափելու նպատակով:

15.1. Փոխկապակցված կասկածելի գործարքների դեպքում լրացվում է մեկ հաշվետվություն: Ընդ որում, փոխկապակցված են մեկ ուղղությամբ իրականացվող գործարքները, օրինակ՝ դրամի փոխանցումը մեկ անձից տարբեր անձանց կամ հակառակը: Փոխկապակցված չեն համարվում այն գործարքները, երբ գործարքի կողմը մի գործարքի դեպքում համարվում է ստացող, մյուսի դեպքում՝ փոխանցող:

15.2. Փոխկապակցված գործարքների (գործառնությունների) դեպքում պարտադիր չէ, որ գործարքները (գործառնությունները) կատարված լինեն միաժամանակ: Բացի հաշվետվական ձևում սահմանված չափանիշներից, հաշվետվություն տրամադրող անձինք ինքնուրույն կարող են սահմանել փոխկապակցվածության չափանիշներ, սակայն պետք է 4-րդ բաժնում տեքստի միջոցով նկարագրեն իրենց կողմից կիրառված այդ չափանիշները: Օրինակ, որևէ նոր կատարված գործարք և մի քանի տարի առաջ կատարված գործարք կամ նոր վերլուծության արդյունքում բացահայտված նախկինում չնկատված գործարքը միասին կարող են հանդիսանալ փոխկապակցված:

15.3. Հաշվետվական ձևի 1.4 կետում նշեք փոխկապակցված գործարքների (գործառնությունների) քանակը, որոնք դիտարկում եք որպես մեկ գործարք:

15.4. Հաշվետվական ձևի 1.5 կետում նշում կատարեք այն դեպքերում, երբ առկա է մեկ գործարք (գործառնություն):

16. (1.6) Գործարք(ներ)ի էությունը: Այս կետում նշեք, թե գործարքը ինչպես է կատարվում: Եթե կատարվող գործարքի էությունը չի համապատասխանում նշվածներին, ապա նշեք հաշվետվական ձևի 1.6.6 կետում և «այլ» տողում և մասնավորեցրեք գործարքի էությունը:

1) Անհրաժեշտության դեպքում այս կետում կատարեք նշումներ միաժամանակ մի քանի կետերում, երբ նույն չափի գումարի հետ կատարվում են մի քանի գործառնություններ (օրինակ՝ մուտք է արվում գումար, այն փոխարկվում է, այնուհետև կատարվում է փոխանցում և այլն): Փոխկապակցված գործարքների դեպքում նշեք բոլոր վանդակները, որոնք նկարագրում են փոխկապակցված գործարքների էությունը, մանրամասների առկայության դեպքում դրանք բացատրեք 4-րդ բաժնում:

2) Նշում կատարելով 1.6.5 կետում՝ անկախ նրանից, թե գործարքը (գործառնությունը) արտարժույթի փոխանակում է, թե փոխարկումը կատարվել է այլ գործարքների հետ միասին (օրինակ՝ փոխարկմանը նախորդել կամ հաջորդել է բանկային փոխանցում կամ կանխիկի դուրսբերում), լրացրեք՝

ա. 1.6.5.1 և 1.6.5.2 կետերը՝ համապատասխանաբար գնվող և վաճառվող արժույթների տեսակները.

բ. 1.6.5.3 և 1.6.5.4 կետերը՝ համապատասխանաբար գնվող և վաճառվող արժույթների գումարը:

3) Որպես առքի արժույթ՝ լրացրեք այն արժույթը, որը գնվում է հաշվետուություն տրամադրող անձի կողմից (բանկեր, արտարժութային դիլերներ, փոխանակման կետեր և այլն):

4) Եթե գործարքը միայն փոխարկում է, լրացրեք 1.6.5 կետը, ինչպես նաև 1.8.2 կետում լրացրեք հաճախորդին տրամադրվող գումարը Հայաստանի Հանրապետության դրամով, եթե հաճախորդին տրամադրվող գումարն արտարժույթով է, ապա այն լրացվում է Հայաստանի Հանրապետության դրամով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքի: Ընդ որում, այս կետը լրացվում է նաև ներբանկային սփոթ գործարքների դեպքում, իսկ դրա վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները կարող եք նշել հաշվետվական ձևի 4-րդ բաժնում:

5) Եթե միաժամանակ կատարվել է մի քանի գործարք փոխարկումով, ապա գործարքի գումարը 1.8.1 և 1.8.2 կետերում լրացրեք այն արժույթով, ինչ արժույթով որ ելք (կանխիկացում, փոխանցում և այլն) է արվում բանկից կամ մուտք (ապականխիկացում, փոխանցում և այլն) է արվում բանկ: Նմանատիպ գործարքների էությունը և հաջորդականությունը բացատրեք 4-րդ բաժնում:

6) Օրինակ՝ դրամով գումարը բանկում փոխարկվում է դոլարի, և դրա մի մասը դոլարով փոխանցվում է այլ բանկ, 1.6.5.1 կետում որպես առքի արժույթ նշվում է դրամը, որպես գործարքի արժույթ՝ 1.8.1 կետում նշվում է դոլար, 1.8.2 կետում՝ փոխանցված դոլարի գումարը ՀՀ դրամով:

17. (1.7) Գործարքի նպատակը (1.7 ինդեքսով կետերը): Այս բաժնում նշեք գործարքի իրականացման նպատակը: Եթե գործարքի նպատակը չի համապատասխանում նշված տարբերակներին, նշեք «այլ» տողում՝ մասնավորեցնելով գործարքի նպատակը:

18. (1.8.1) Գործարքի արժույթը: Այս կետում նշեք արժույթի տեսակը, որով կատարվում է գործարքը: Երբ գործարքի հետ կատարվում է նաև փոխարկում, նշում կատարեք 1.6.5 կետի համար սահմանված կարգով:

19. (1.8.2) Գումարը՝ Հայաստանի Հանրապետության դրամով: Եթե գործարքը կատարվել է արտարժույթով, այս կետում նշում եք գործարքի կատարման օրվա՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով հաշվարկված գործարքի գումարը՝ Հայաստանի Հանրապետության դրամով: Գործարքը Հայաստանի Հանրապետության դրամով կատարվելու դեպքում նշվում է գործարքի գումարը՝ Հայաստանի Հանրապետության դրամով:

20. (2) Գործարքը կատարող անձի (հաճախորդի) տվյալները: Այս բաժնում նշում եք հաճախորդին նկարագրող տվյալները՝ հաճախորդների նույնականացմանը վերաբերող կարգի դրույթներին համապատասխան: Կախված նրանից, թե հաճախորդը՝ գործարքի կողմը, իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր, լրացրեք 2.1.1 կետերը, եթե ֆիզիկական անձ է՝ 2.1.2 կետերը:

1) Հաշվետվական ձևի 2.1.1.6, 2.1.2.8, 2.2.1.6 և 2.2.2.8 կետերում լրացվում է գործարքը կատարող անձի (հաճախորդի) բանկային հաշիվը, իսկ 3.1.1.6.1, 3.1.1.6.2, 3.1.2.8.1, 3.1.2.8.2, 3.2.1.4.1, 3.2.1.4.2, 3.2.2.8.1 և 3.2.2.8.2 կետերում՝ նաև հաշիվը սպասարկող բանկի անվանումը և երկիրը: Եթե գործարքում առկա է երկու և ավելի հաշվի համար, ապա համարակալեք և նշեք դրանք հաշվետվական ձևի 4-րդ բաժնում: Առանց հաշիվ բացելու գործարքների վերաբերյալ տեղեկություն տրամադրելու դեպքում պետք է նշում անել հաշվետվական ձևի 1.6.4.1 կետում («անհաշիվ անկանխիկ դրամական փոխանցումներ») կամ 1.6.4.2 կետում (անհաշիվ անկանխիկ դրամական ստացումներ»), իսկ ծրագրային համակարգի ներդրումից հետո վերոնշյալ կետում նշում կատարելու դեպքում կպասիվանա բանկային հաշվին վերաբերող վանդակը:

2) Հաշվետվական ձևի 2.1.1.5 կետում նշեք իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հաճախորդի լիցենզիայի համարը (դրա առկայության դեպքում): Այն դեպքում, երբ անձն ունի մի քանի լիցենզիա, ապա նշվում է այն լիցենզիայի համարը, որով նախատեսված գործունեության կապակցությամբ կնքվում է կոնկրետ գործարքը: Եթե կնքվում է լիցենզավորման ենթակա գործունեության հետ չկապված գործարք, ապա անձը որևէ լիցենզիա չի ներկայացնում, և այս կետը չի լրացվում:

3) 2.1.1.2 կետում լրացվում է իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հաճախորդի գտնվելու վայրը: Հաճախորդի գործունեության վայրը կարող է նշվել նաև հաշվետվական ձևի 4-րդ բաժնում՝ որպես լրացուցիչ տեղեկություն:

21. (2) Լիազորված անձի տվյալները, ով հաճախորդի անունից իրականացնում է գործարքը: Այս բաժնում նշեք հաճախորդի հանձնարարությամբ և նրա անունից գործարքի կատարման ընթացքում հանդես եկող լիազորված անձի (առկայության դեպքում) տվյալները: Սա չի վերաբերում իրավաբանական անձի տնօրենին, գլխավոր հաշվապահին և այն անձանց, որոնք աշխատում են տվյալ կազմակերպությունում և կանոնադրությամբ լիազորված են հանդես գալու կազմակերպության անունից:

1) Ֆիզիկական անձանց դեպքում, բոլոր անձինք, ովքեր ներկայացնում են ֆիզիկական անձի անունից գործառնություններ կատարելու լիազորագիր, համարվում են լիազորված անձ, և նրանց տվյալները լրացվում են այս բաժնում:

2) Լիազորված անձ չեն համարվում ինկասացիայի աշխատակիցները:

3) Այս բաժինը լրացրեք միայն այն դեպքում, երբ գործարքը կատարվում է լիազորված անձի միջոցով:

4) 2.2 կետում նշեք լիազորված անձի (անձանց) քանակը: Նշեք, թե քանի լիազորված անձ է մասնակցում գործարքին և բոլորի համար լրացրեք 2.2 կետը:

5) Լիազորված անձի վերաբերյալ տվյալները համարվում են լրացման համար պարտադիր (առկայության դեպքում) միայն կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման ժամանակ:

22. (3) Անձը (շահառուն), ում օգտին կատարվում է գործարքը: Այս բաժնում նշեք այն անձի (անձանց) տվյալները, ում օգտին կատարում է գործարքը (գործառնությունը), այսինքն՝ շահառուն գործարքի իրական, թաքնված (գործարքի կողմ հանդիսացող անձից տարբեր) տնտեսական շահը տիրապետող անձ է:

1) Եթե գործարքում առկա է մի քանի շահառու, ապա յուրաքանչյուրի համար լրացրեք 3-րդ բաժինը:

2) Եթե հաշվետվությունը ներկայացվում է որպես պարտադիր տեղեկացման գործարք, ապա շահառուի վերաբերյալ տվյալները համարվում են լրացման համար ոչ պարտադիր: Իսկ եթե հաշվետվությունը ներկայացվում է որպես կասկածելի գործարք, ապա հաշվետվական ձևում շահառուի (եթե առկա է գործարքի կողմից տարբերվող այլ շահառու) վերաբերյալ բոլոր վանդակները համարվում են լրացման համար պարտադիր:

3) Որպես գործարքը կատարող անձ դիտարկելով գործարքի մի կողմին՝ 3.2 կետում մյուս կողմին դիտարկեք որպես ստացող/փոխանցող: Նշված կետը լրացման համար պարտադիր չէ միայն բորսայի հետ կապված գործարքների դեպքում:

4) 3.2.1.2 կետում լրացրեք գործարքի մյուս կողմ հանդիսացող անձի ռեզիդենտության երկիրը: Այս դեպքում ռեզիդենտությունը լրացվում է «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում տրված սահմանման համաձայն:

5) Նման ձևով լրացրեք նաև 3.2.2.4 կետերը:

23. (4) Ձեր կողմից կարևորվող՝ գործարքին առնչվող այլ տեղեկություններ: Այս կետում լրացրեք այն տեղեկությունները, որոնք, Ձեր կարծիքով, կարող են օգտակար լինել ներկայացվող գործարքի մասին ավելի կոնկրետ պատկերացում կազմելու կամ գործարքը վերլուծելու համար. նշեք, թե լրացուցիչ տեղեկատվությունը որ բաժնի որ կետին է վերաբերում:

24. (5) Պատասխանատու աշխատակցի տվյալները: Այս կետում նշեք հաշվետվություն տրամադրող անձի՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի պատասխանատու աշխատակցի տվյալները: Այդ աշխատակիցը պետք է ստորագրի և կնքի լրացված հաշվետվական ձևը (թղթային տարբերակում):

25. (5.3) Լրացման ամսաթիվ: Այս կետում նշում եք սույն հաշվետվական ձևը լրացնելու ամսաթիվը, ամիսը, տարին (թվերով):

26. (5.4) Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարը ՖԴԿ-ում: Այս կետում նշում եք Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից Ձեզ տրված հաշվառման համարը (թվերով):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
Ֆինանսական դիտարկումների կենտրոն
Վ. Սարգսյան 6, Երևան 375010
Հեռ. 545088, Էլ. փոստ info_fiu@cba.am

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի
թիվ 231-Ն որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
Կ Ա Ր Գ

Սույն կարգի նպատակն է՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման ընդհանուր համակարգի (այսուհետ՝ հաշվառում), ինչպես նաև պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների (թիվ 001 հաշվետվական ձևի) տրամադրման միասնական, կենտրոնացված կարգի ստեղծումն ու կիրարկումը:

1. Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառումը

1) Հաշվառումն իրականացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնում հաշվետվություն տրամադրող անձանց գրանցելու միջոցով:

2) Հաշվետվություն տրամադրող անձանց գրանցումն իրականացվում է հետևյալ փուլերով՝

ա. հաշվետվություն տրամադրող անձանց կողմից դիմումների ներկայացում,

բ. հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառում:

2. Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից դիմումների ներկայացումը

1) Հաշվետվություն տրամադրող անձինք հաշվառման համար Ֆինանսական դիտարկումների կենտրոնին սույն կարգի հավելվածով սահմանված դիմումը ներկայացնում են գրավոր: Դիմումը ստորագրվում է հաշվետվություն տրամադրող անձի գործադիր մարմնի ղեկավարի կողմից և հավաստվում հաշվետվություն տրամադրող անձի կնիքով:

2) Հաշվառման դիմումը պետք է պարունակի՝

ա. հաշվետվություն տրամադրող անձի լրիվ անվանումը,

բ. հաշվետվություն տրամադրող անձի գործունեության տեսակը,

գ. հաշվետվություն տրամադրող անձի գտնվելու վայրը և գործունեության վայրը,

դ. հաշվետվություն տրամադրող անձի հարկ վճարողի հաշվառման համարը, պետական գրանցման համարը,

ե. հաշվետվություն տրամադրող անձի լիցենզիայի համարը,

զ. ներքին հսկողության ստորաբաժանման ղեկավարի կամ պատասխանատու անձի տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, պաշտոնը, էլեկտրոնային հասցեն, հեռախոսը, ստորագրությունը),

է. հաշվառման դիմումի լրացման օրը, ամիսը, տարեթիվը:

3. Ֆինանսական դիտարկումների կենտրոնում հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառումը

1) Սույն կարգով նախատեսված դիմումը լրացնելուց և Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացնելուց հետո հաշվետվություն տրամադրող անձին տրվում է հաշվառման համար:

2) Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարը զետեղվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի միասնական տեղեկատվական շտեմարանում:

3) Հաշվետվություն տրամադրող այն անձանց, որոնք համակցված չեն «ՍիԲիէյՆեթ» միջբանկային կորպորատիվ ցանցին և միաժամանակ հաշվետվությունը ներկայացնելու են էլեկտրոնային տարբերակով, տրամադրվում է նաև Կենտրոնական բանկի «ՍիԲիէյՆեթ» սերվերում գրանցված անհատական նույնականացնող (իդենտիֆիկացնող) «բանալի», որի առկայության դեպքում հնարավոր է Կենտրոնական բանկի տարածքում տեղակայված համակարգչից էլեկտրոնային տեսքով հաշվետվությունն ուղարկել Ֆինանսական դիտարկումների կենտրոն:

4) Հաշվետվություն տրամադրող այն անձանց, որոնք հաշվետվությունները ներկայացնելու են էլեկտրոնային փոստի միջոցով, տրամադրվում են Կենտրոնական բանկում տեղակայված ինտերնետային սերվերում հաշվառման ժամանակ գրանցված անհատական նույնականացնող (իդենտիֆիկացնող) տվյալներ, որոնց մուտքագրման դեպքում կնույնականացվի հաշվետվություն տրամադրող անձանց ինքնությունը:

5) Եթե հաշվետվություն տրամադրող անձը միացած է համակարգչային «ՍիԲիէյՆեթ» կորպորատիվ ցանցին, կարող է օգտագործել այդ ցանցը հաշվառման դիմումի, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարի և հաշվետվական ձևերի էլեկտրոնային տարբերակով ստացման և ուղարկման համար:

4. Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը

1) Տեղեկությունները Ֆինանսական դիտարկումների կենտրոն են ներկայացվում թղթային և (կամ) էլեկտրոնային տարբերակով: Ներկայացվող հաշվետվություններին (թղթային և էլեկտրոնային տարբերակի համար) տրվում է անվանում: Հաշվետվության անվանումն ունի հետևյալ կառուցվածքը.

Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարը ՖԴԿ-ում (8 նիշ)	գծիկ	հաշվետվության ուղարկման ամսաթիվը՝ օօ/աա/տտ (6 նիշ)	գծիկ	տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (3 նիշ)
▼	▼	▼	▼	▼
XXXXXXXX	-	XXXXXX	-	XXX

Ընդ որում, հաշվետվական ձևը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում հետևյալ եղանակներից որևէ մեկով.

ա. ֆիզիկապես ներկայացնելու միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային և էլեկտրոնային (կրիչի վրա) տարբերակները Ֆինանսական դիտարկումների կենտրոն են ներկայացվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փաստաթղթերի շրջանառության բաժնի միջոցով՝ փակ, կնքված և ստորագրված ծրարներով: Նշված ծրարների վրա պետք է լրացված լինեն ուղարկողի անվանումը, գտնվելու վայրը, ուղարկման ամսաթիվը, ինչպես նաև հետևյալ նշումը՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին»: Հաշվետվությունը ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից ստացականի տրամադրման պահին,

բ. «ՍիԲիէյՆեթ» ցանցին համակցված լինելու դեպքում՝ այդ ցանցի միջոցով, միաժամանակ այն հաշվետու անձանց համար, որոնք համակցված չեն «ՍիԲիէյՆեթ» ցանցին, կարող են ուղարկել հաշվետվական ձևերը էլեկտրոնային տարբերակով Կենտրոնական բանկի մուտքի մոտ դրված «ՍիԲիէյՆեթ» ցանցի տերմինալի միջոցով: Հաշվետվությունը համարվում է ներկայացված Ֆինանսական դիտարկումների կենտրոնի էլեկտրոնային հասցեից հաշվետվություն տրամադրող անձի էլեկտրոնային հասցեին հետադարձ փոստի ստացման պահին: Եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը հետ է ուղարկվում հաշվետվություն տրամադրող անձին (հաշվետվության մեջ տեխնիկական սխալի առկայության պատճառով), ապա հաշվետվությունը համարվում է տվյալների բազա չմուտքագրված, իսկ ստացումը՝ չհաստատված, բացառությամբ Կենտրոնական բանկի մուտքի մոտ դրված «ՍիԲիէյՆեթ» ցանցի տերմինալի միջոցով ներկայացված հաշվետվությունների,

գ. ՀՀ կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով, որի դեպքում լրացվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքում հրապարակված կամ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվետվական ձևերի պաշտպանված էլեկտրոնային տարբերակները, որոնք փոփոխելն արգելվում է: Հաշվետվական ձևն ուղարկվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի ծրագրային համակարգի միջոցով և ներկայացված է համարվում ծրագրային համակարգի «Ուղարկման կարգավիճակը» դաշտում «Ուղարկված է» նշման առկայության դեպքում: Եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը հետ է ուղարկվում հաշվետվություն տրամադրող անձին (հաշվետվության մեջ տեխնիկական սխալի առկայության պատճառով), ապա հաշվետվությունը համարվում է տվյալների բազա չմուտքագրված, իսկ ստացումը՝ չհաստատված: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով ուղարկվող հաշվետվությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու վերաբերյալ» կարգը,

դ. ֆաքսի միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային տարբերակն ուղարկվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ֆաքսի համարին և ներկայացված է համարվում ֆաքսի առաքման անդորրագրի ստացման պահին: Այս դեպքում հաշվետվությունը սույն կարգի 4.1 ենթակետի «ա», «բ», «գ» կամ «ե» պարբերություններից որևէ մեկով սահմանված կարգով մինչև տվյալ ամսվա վերջին օրը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,

ե. փոստի միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային և էլեկտրոնային (կրիչով) տարբերակներն ուղարկվում են Ֆինանսական դիտարկումների կենտրոնի փոստային հասցեին և ներկայացված են համարվում այն «Հայփոստի» բաժանմունք ներկայացնելու և համապատասխան անդորրագիր ստանալու պահին,

զ. Ֆինանսական դիտարկումների կենտրոնի էլեկտրոնային փոստի (info_fiu@cba.am) միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակն ուղարկվում է Ֆինանսական դիտարկումների

կենտրոնի էլեկտրոնային հասցեին և ներկայացված է համարվում նույն էլեկտրոնային հասցեից հետադարձ փոստի ստացման պահին: Այդ դեպքում հաշվետվությունը սույն կարգի 4.1 ենթակետի «ա», «բ», «գ» կամ «ե» պարբերություններից որևէ մեկով սահմանված կարգով մինչև տվյալ ամսվա վերջին օրը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

2) Սույն կարգը հաստատած Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշման 3-րդ հավելվածի համաձայն՝ հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետում հաշվետվություն տրամադրող անձը ներկայացված հաշվետվության մեջ սխալ կամ թերացում հայտնաբերելու դեպքում ներկայացնում է հաշվետվության ուղղված տարբերակը՝ պահպանելով սույն կարգի 4.1 կետով սահմանված հաշվետվության անվանումը և ավելացնելով ուղղման հերթական համարը: Գործարքի վերաբերյալ հաշվետվության վերջնական տարբերակ է համարվում միևնույն անվանումն ունեցող հաշվետվությունների ամենավերջին հերթական համարն ունեցող հաշվետվությունը: Փոփոխված և (կամ) ամբողջականացված հաշվետվության հետ մեկտեղ հաշվետվություն տրամադրող անձը Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին ներկայացնում է գրություն՝ թույլ տրված սխալների ուղղման և նախորդ հաշվետվությունը չեղյալ համարելու վերաբերյալ:

3) Սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված հաշվետվությունում սխալ կամ թերացում հայտնաբերելու դեպքում հաշվետու անձը դիմում է ՀՀ կենտրոնական բանկի նախագահին՝ ուղարկված հաշվետվությունում ուղղում կատարելու խնդրանքով՝ նշելով սխալի կամ թերացման պատճառը և պահպանելով սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված ընթացակարգը:

5. Առանձնացված էլեկտրոնային հասցեի բացման պահանջ

1) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը և վարկային կազմակերպությունները պարտավոր են «ՍիԲիէյՆեթ» ցանցում բացել համապատասխան անունով փոստարկղ և Կենտրոնական բանկին գրավոր հայտնել բացված փոստարկղի անվանումը: Անվանման փոփոխման դեպքում հաշվետուն պարտավոր է փոփոխելուց 10 օր առաջ գրավոր տեղեկացնել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին՝ նշելով նոր փոստարկղի անվանումը:

<u>Հավելված</u>
«Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը» հավելված 2-ի

Ձեր հաշվառման համարը ՖԴԿ-ում

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի ֆինանսական
դիտարկումների կենտրոնի ղեկավար
պարոն _____-ին

ՀԱՇՎԱՌՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ Ձեզ _____-ին տրամադրել հաշվառման համար:
հաշվետվություն տրամադրող անձի լրիվ անվանումը

Հաշվետվություն տրամադրող անձի տվյալները՝

Գործունեության տեսակը _____

Գտնվելու վայրը _____

Գործունեության վայրը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Պետական գրանցման համարը _____

Լիցենզիայի համարը _____

Պատասխանատու անձի (անձանց) տվյալները՝

1. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍիԲիէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն
2. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍիԲիէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն
3. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍիԲիէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն
4. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍիԲիէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն

Հաշվետվություն տրամադրող անձի
գործադիր մարմնի ղեկավար՝ _____
ստորագրություն

__ _____ ____ թ.

քաղաք Երևան

Հավելված 3

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի
թիվ 231-Ն որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Սույն հավելվածի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված՝ պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների (թիվ 001 հաշվետվական ձևի) տրամադրման միասնական ժամկետների սահմանումը:

1. Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ժամկետները

1) Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը պարբերական բնույթ չի կրում:

2) Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են Օրենքով և (կամ) Լիազոր մարմնի ուղեցույցներով սահմանված կասկածելի գործարքի հիմքերի ու չափանիշների և (կամ) պարտադիր տեղեկացման գործարքների համար անհրաժեշտ գումարային սահմանաչափի առկայության դեպքում:

3) Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում այդ գործարքը կնքելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

4) Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությունը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում գործարքում (գործառնությունում) կասկածելի գործարքի հիմքեր և չափանիշներ հայտնաբերելու դեպքում՝ նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12.00-ն:

5) Սույն կետով սահմանված գործաքների տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել՝

ա. աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

բ. ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով,

գ. վիճելի (քննարկման ենթակա) դեպքերով և այլն:

6) Բանկերը և վարկային կազմակերպությունները պարտադիր տեղեկացման ոչ ենթակա (հայեցողական) օժանդակ տեղեկությունները Ֆինանսական դիտարկումների կենտրոն են ներկայացնում իրենց ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:

7) Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից ընդունվում են միայն այն անձի ստորագրությամբ ստացված հաշվետվությունները, ում տվյալները, սույն որոշմամբ սահմանված կարգով, նախապես ներկայացվել են Կենտրոնական բանկ:

*Ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունների և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձանց (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 002 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի թիվ 56-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**[*]

Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ և 71-րդ հոդվածները, ինչպես նաև ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 20-րդ հոդվածներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 002 հաշվետվական ձև)» համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը» համաձայն հավելված 2-ի (կցվում է):

3. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ժամկետները» համաձայն հավելված 3-ի (կցվում է):

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի «Ապահովագրական գործունեություն իրականացնող անձանց (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 002 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի մարտի 28-ի թիվ 139-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 56-Ն որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի օգոստոսի 31-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 օգոստոսի 2008 թ., N 232-Ն

[*] Ոչ պաշտոնական հրատարակություն:
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հուլիսի 31-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.08.08 թ. (ՀՀԳՏ N28 (302), 27.08.08):

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի
թիվ 232-Ն որոշմամբ

Նոր հաշվետվություն ○
Լրացում հաշվետվություն ○
Լրացվող հաշվետվության համարը ☐ և ☐
և հերթական լրացում հաշվետվության տարբերակը

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎ 002

Հաշվետվական ձևը լրացվում և ներկայացվում է ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունների և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձանց կողմից՝ սույն ձևի լրացման և ներկայացման ուղեցույցի համաձայն

Հաշվետվական ձևում «»-ով նշված են պարտադիր տեղեկացման գործարքների համար անհրաժեշտ լրացման դաշտերը*

1. ԳՈՐԾԱՐՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

***1.1. Գործարքի կնքման ամսաթիվը** ☐☐ / ☐☐ / ☐☐☐☐ (օօ / աա / տտտտ)

Լրացրեք 1.2 և 1.3 կետերից միայն մեկը

***1.2. Պարտադիր տեղեկացման գործարք** ☐	**1.3. Կասկածելի գործարք** ☐

(այստեղ նշում կատարեք այն բոլոր դեպքերում, երբ ապահովագրական գործարքի կնքման կամ իրականացման պայմաններում առկա են կարգով ներկայացված կասկածի հանգամանքներ՝ անկախ գործարքի գումարից)

1.3.1. Գործարքը կասկածելի համարելու հիմքերը և չափանիշները
(հատկացված դաշտում մուտքագրվող տեղեկատվությունը չտեղավորվելու դեպքում ավելացրեք համարակալված թերթ, որի ձախ անկյունում նշեք 1.3.1 և լրացրեք անհրաժեշտ տեղեկությունները)

Տե՛ս Ուղեցույց, ընդհանուր դրույթներ, կետ 5

Լրացրեք 1.3.2 և 1.3.3 կետերից միայն մեկը

1.3.2. Գործարքը կասեցվել է ☐	**1.3.3. Դադարեցվել է** ☐

1.3.4. Կասեցման կամ դադարեցման ամսաթիվը և ժամկետը ☐☐ / ☐☐ / ☐☐☐☐ (օօ / աա / տտտտ) և ☐ (օր)

1.3.5. Չկատարված կամ չավարտված գործարք ☐

Արդյոք փոխկապակցված է գործարքը *(լրացրեք 1.4 և 1.5 կետերից միայն մեկը), նշեք «Այո» այն դեպքերում, երբ առկա են ուղեցույցով սահմանված փոխկապակցված ապահովագրական գործարքներ)*
Նշեք փոխկապակցված գործարքների թիվը և այն, թե ինչպես են այդ գործարքները փոխկապակցված

1.4. Այո ☐ քանակը ☐☐ հատ	**1.5. Ոչ** ☐
Նշեք, թե ինչպես են այդ գործարքները փոխկապակցված	
1.6. Ապահովագրության տեսակը՝	
***1.6.1. Կյանքի ապահովագրություն** ☐ *Այստեղ լրացրեք 1.6.1 կետի ենթատեսակը*	***1.6.2. Այլ ապահովագրություն** ☐ *Այստեղ լրացրեք 1.6.2 կետի ենթատեսակը*

1.7. Ապահովագրության ժամկետը ☐ *(Օրերի քանակը)*

***1.8.1. Ապահովագրական գումարը և արժույթը** ☐ և ☐

***1.8.2. Ապահովագրավճարը (ՀՀ դրամ)** ☐

***1.8.3. Ապահովագրական հատուցումը (ՀՀ դրամ)** ☐

1.9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝ ՎԵՐԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԵՎ ՎԵՐԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.9.1. Վերաապահովագրողի լրիվ անվանումը
Կազմակերպության անունը, կազմակերպաիրավական ձևը

1.9.2. Վերաապահովագրողի հասցեն
Լրացրեք բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը / գյուղը | Երկիրը

1.9.3. Վերաապահովագրողի բանկային հաշվի համարը

1.9.4. Վերաապահովագրական գումարը և արժույթը և

1.9.5. Վերաապահովագրական վճարը և արժույթը և

1.9.6. Վերաապահովագրական հատուցումը (ՀՀ դրամ)

2. ԱՆՁԸ (ԱՊԱՀՈՎԱԴԻՐԸ), ՈՎ ԳՈՐԾԱՐՔԻ ԿՈՂՄ Է

Երկու և ավելի ապահովադիրների առկայության դեպքում նրանց տվյալները լրացրեք երկու և ավելի անգամ
Տե՛ս Ուղեցույց, ընդհանուր դրույթներ, կետ 5

***2.1. Անձանց թիվը**

2.1.1. Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր

***2.1.1.1. Լրիվ անվանումը**
Կազմակերպության անունը, կազմակերպաիրավական ձևը

***2.1.1.2. Գտնվելու (բնակության) վայրը**
Լրացրեք բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը / գյուղը | Երկիրը

***2.1.1.3. Հարկ վճարողի հաշվառման համարը**

***2.1.1.4.1. Բանկային հաշվի համարը**

***2.1.1.4.2. Բանկի անվանումը և երկիրը**

2.1.2. Եթե ապահովադիրը, որը գործարքի կողմ է, ֆիզիկական անձ է

***2.1.2.1 Անուն** | ***2.1.2.2 Ազգանուն**

Նշեք գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի սեռը և ընտանեկան դրությունը և

***2.1.2.3. Բնակության վայրը**
Լրացրեք բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը / գյուղը | Երկիրը

***2.1.2.4. Ծննդյան ամսաթիվը** օ օ / ա ա / տ տ **2.1.2.5. Քաղաքացիությունը** Երկիրը

***2.1.2.6. Սոցիալական քարտի համարը**

***2.1.2.7. Անձը հաստատող փաստաթղթի անվանումը**

***2.1.2.7.1. Փաստաթղթի համարը**

***2.1.2.7.2. Տրված է ում կողմից և երբ** օ օ / ա ա / տ տ

***2.1.2.8.1. Բանկային հաշվի համարը**

***2.1.2.8.2. Բանկի անվանումը և երկիրը**

2.2. Ապահովադիրը միաժամանակ նաև շահառու է

Ապահովագրական բրոքերի տվյալները, ով ապահովադրի անունից իրականացնում է գործարքը

Այս բաժինը լրացրեք միայն ապահովագրական բրոքերի առկայության դեպքում

2.3. Իրավաբանական անձ

2.3.1. Լրիվ անվանումը
Կազմակերպության անունը, կազմակերպաիրավական ձևը

2.3.2. Գտնվելու (բնակության) վայրը
Լրացրեք բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը / գյուղը | Երկիրը

2.3.3. Հարկ վճարողի հաշվառման համարը

2.3.4.1. Բանկային հաշվի համարը

2.3.4.2. Բանկի անվանումը և երկիրը

3. ԱՆՁԸ (ՇԱՀԱՌՈՒՆ), ՈՒՄ ՕԳՏԻՆ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԳՈՐԾԱՐՔԸ

Երկու և ավելի շահառուների առկայության դեպքում շահառուի անձնական տվյալները լրացրեք երկու և ավելի անգամ

*3.1. Շահառուների քանակը

3.2. Եթե շահառուն իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր

*3.2.1. Լրիվ անվանումը

Կազմակերպության անունը, կազմակերպահիրավական ձևը

3.2.2. Գտնվելու (բնակության) վայրը

Լրացրեք բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը / գյուղը | Երկիրը

*3.2.4.1. Բանկային հաշվի համարը

*3.2.4.2. Բանկի անվանումը և երկիրը

3.3. Եթե շահառուն ֆիզիկական անձ է

*3.3.1. Անուն *3.3.2. Ազգանուն

Նշեք գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի սեռը և ընտանեկան դրությունը և

3.3.3. Բնակության վայրը

Լրացրեք բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը / գյուղը | Երկիրը

3.3.4. Ծննդյան ամսաթիվը օ օ / ա ա / տ տ 3.3.5. Քաղաքացիությունը Երկիրը

3.3.6. Սոցիալական քարտի համարը

3.3.7. Անձը հաստատող փաստաթղթի անվանումը

3.3.7.1. Փաստաթղթի համարը

3.3.7.2. Տրված է ում կողմից և երբ օ օ / ա ա / տ տ

*3.3.8.1. Բանկային հաշվի համարը

*3.3.8.2. Բանկի անվանումը և երկիրը

*3.4. Շահառուին հասանելիք գումարը

4. ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԿԱՐԵՎՈՐՎՈՂ՝ ԳՈՐԾԱՐՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Հատկացված դաշտում մուտքագրվող տեղեկատվությունը չտեղավորվելու դեպքում ավելացրեք համարակալված թերթ, որի ձախ անկյունում նշեք 4, և լրացրեք անհրաժեշտ տեղեկությունները)

Տե՛ս Ուղեցույց, ընդհանուր դրույթներ, կետ 5

5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

*5.1. Անուն *5.2. Ազգանուն

*5.3. Լրացման ամսաթիվը օ օ / ա ա / տ տ Ստորագրություն Կ.Տ

*5.4. Հաշվետու անձի հաշվառման համարը ՖԴԿ -ում

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
Ֆինանսական դիտարկումների կենտրոն
Վ. Սարգսյան 6, Երևան 375010
Հեռ. 545088, Էլ. փոստ info_fiu@cba.am

Հավելված


«Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 002 հաշվետվական ձև)» հավելված 1-ի

ԹԻՎ 002 ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՈՒՂԵՑՈՒՅՑ)

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն հաշվետվական ձևը լրացնել միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնից (այսուհետ նաև՝ ՖԴԿ) «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգի» հիման վրա հաշվառման հերթական համար ստանալուց հետո:

Հաշվետվական ձևի կառուցվածքը և ուղեցույցում հանդիպող հասկացությունները



Լրացրեք սույն հաշվետվական ձևը, եթե Ձեր կազմակերպությունը ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերություն է կամ ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձ է (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձ կամ հաշվետու անձ):

1. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հետևյալ 2 դեպքում.

1) եթե ապահովագրական գործարքով սահմանված ապահովագրական գումարը (ապահովագրական հատուցումը (ապահովագրական գումարի վճարումը) արտերկրում ստանալու պայմանի առկայության դեպքում), ապահովագրավճարը կամ վճարվող ապահովագրական հատուցումը (ապահովագրական գումարի վճարումը) գերազանցում է 20 միլիոն դրամը,

2) եթե ապահովագրական գործարքի կնքման կամ իրականացման պայմաններում առկա է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) և (կամ) Լիազոր մարմնի ուղեցույցներով սահմանված կասկածելի գործարքի հիմքերից և չափանիշներից առնվազն մեկը՝ անկախ նրանից, թե գործարքի գումարը 20 միլիոն դրամը գերազանցում է, թե ոչ:

Եթե հաշվետվությունը ներկայացվում է որպես կասկածելի գործարք, ապա հաշվետվական ձևի բոլոր դաշտերը համարվում են լրացման համար պարտադիր: Եթե հաշվետվությունը ներկայացվում է որպես պարտադիր տեղեկացման գործարք, ապա պարտադիր լրացման ենթակա են միայն աստղանիշով նշված դաշտերը, սակայն եթե պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների դեպքում հնարավոր չէ լրացնել տվյալ դաշտը, ապա տվյալ դաշտում նշվում է աստղանիշ, և բացատրություն է տրվում հաշվետվական ձևի 5-րդ բաժնում:

2. Սույն հաշվետվական ձևը պարբերական բնույթ չի կրում, այլ լրացվում է միայն 1-ին կետում նշված գործարքների (գործառնությունների) առկայության դեպքում:

3. Սույն հաշվետվական ձևը լրացվում է ինչպես մեկ գործարքի (գործառնության), այնպես էլ երկու և ավելի փոխկապակցված գործարքների (գործառնությունների) համար:

4. Փոխկապակցված գործարքների համար լրացվում է միայն մեկ հաշվետվական ձև, որտեղ որպես գործարքի գումար նշվում է բոլոր գործարքների գումարների հանրագումարը, և որպես գործարքի կատարման ամսաթիվ նշվում է այն գործարքի ամսաթիվը, որի հետ կապված առաջացել է կասկածը:

5. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հնարավորինս պարզ, հակիրճ, ընթեռնելի հայերենով:

6. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հետևյալ երկու տարբերակներից որևէ մեկով.

1) թղթային տարբերակ. հաշվետվական ձևի թղթային տարբերակը կարող եք ձեռք բերել.

ա. ՖԴԿ-ին դիմելու միջոցով,

բ. ՖԴԿ (www.cba.am/fmc/index.htm) ինտերնետային կայքից ելքագրելու միջոցով:

1.1) Հաշվետվական ձևի թղթային տարբերակը լրացրեք գրիչով:

1.2) Բովանդակային ուղղումներ կատարելու դեպքում լրացրեք հաշվետվական նոր ձև: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրեք այդ ուղղումների կողքին:

1.3) Հաշվետվական ձևը լրացրեք թղթային տարբերակով տրված կետերի սահմաններում: Նոր բաժինների կամ առկա բաժիններում լրացուցիչ կետերի լրացման անհրաժեշտության դեպքում օգտվեք հավելյալ թղթերից: Այդ թղթերի վրա նշեք, թե որ բաժինը կամ կետն եք լրացնում, ստորագրեք դրանք և որպես հավելված՝ կցեք հիմնական հաշվետվական ձևին: Օրինակ՝ պարզել եք, որ գործարքի շահառուն ոչ թե մեկն է, այլ երեքը. հաշվետվական ձևի 3-րդ բաժնի 3.1 կետում նշեք 3 թիվը, առանձին թերթի վրա բազմացրեք 3-րդ բաժինը ներառող հատվածը ևս երկու անգամ, լրացրեք համապատասխան տեղեկատվությունը, ստորագրեք և կցեք լրացված հաշվետվական ձևին:

1.4) Այն դեպքում, երբ հաշվետվական ձևի կետերի սահմանները բավարար չեն, այն լրացրեք լրացուցիչ թղթերի վրա հետևյալ կերպ՝ թղթի ձախ կողմում նշեք, թե որ կետին է վերաբերում տեղեկատվությունը, թերթերի համարակալումը շարունակեք հաշվետվական ձևի վերջին էջի համարից՝ հաջորդող հերթական համարից սկսած: Օրինակ՝ 1.3.1 կետում գործարքը կասկածելի համարելու հիմքերը նշեք լրացուցիչ թղթի վրա, այն համարակալեք հերթական համարով, էջի վերևի ձախ անկյունում նշեք 1.3.1, ստորագրեք և կցեք հաշվետվական ձևին:

2) էլեկտրոնային տարբերակ. հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակը կարող եք ձեռք բերել.

ա. ՖԴԿ-ին դիմելու միջոցով,

բ. ՖԴԿ (www.cba.am/fmc/index.htm/index.htm) ինտերնետային կայքից ելքագրելու միջոցով:

2.1) Հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակը լրացրեք աղյուսակը ներառող պատուհաններն ակտիվացնելու և տվյալները մուտքագրելու միջոցով:

2.2) Կախված նրանից, թե որ կետերը ներառող պատուհաններում եք նշումներ կատարել, կակտիվանան միայն այն պատուհանները, որոնց աղյուսակները փոխլրացնում են (չեն բացառում) միմյանց:

2.3) Աղյուսակները ներառող պատուհանները, ըստ դրանցում լրացվող նյութի ծավալի, ընդլայնվում են:

2.4) Եթե նույն բաժինը (ասենք՝ բաժին 3-ը) պետք է լրացվի երկու և ավելի անգամ, ապա նշեք այդ բաժնի համապատասխան վանդակում (այս դեպքում՝ կետ 3.1) օրինակների քանակը, և ավտոմատացված ծրագրային համակարգում (ներդնումից հետո) կակտիվանան համապատասխան թվով բաժիններ:

7. Հաշվետվական ձևի ներկայացման ժամկետները սահմանված են սույն որոշման հավելված 3-ում:

8. Հաշվետվական ձևի ներկայացման եղանակները սահմանված են սույն որոշման հավելված 2-ում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9. Նոր հաշվետվություն կամ «Լրացում հաշվետվություն»: Յուրաքանչյուր հաշվետվություն լրացնելու համար անհրաժեշտ է կատարել նշում այն մասին, թե արդյոք դա նոր հաշվետվություն է, թե նախկինում արդեն տրամադրված «Լրացում հաշվետվություն»:

1) Եթե արդեն իսկ տրամադրված հաշվետվության հետ կապված անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ կամ փոփոխված տեղեկատվություն, ապա պետք է կատարել նշում «Լրացում հաշվետվություն» կետում: Համապատասխանաբար էլեկտրոնային տարբերակում կավելանան նախկինում ուղարկված հաշվետվության անվանումը և «լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտերը: «Հաշվետվության անվանումը» դաշտում նույնությամբ լրացվում է այն հաշվետվության էլեկտրոնային ֆայլի անվանումը, որին որպես լրացում ուղարկվում է «Լրացում հաշվետվությունը»: «Լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտում պետք է նշել (թվերով), թե որերորդ «Լրացում հաշվետվությունն» է ներկայացվում:

2) Լրացում հաշվետվությունը պետք է պարունակի նախկինում տրամադրված ամբողջ տեղեկատվությունը՝ ներառյալ կատարված փոփոխությունը:

4) Գործարքի վերաբերյալ հաշվետվության վերջնական տարբերակ է համարվում միևնույն անվանում ունեցող ֆայլերի «լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտում ամենավերջին հերթական համարն ունեցող ֆայլը:

5) Որպես լրացում է համարվում այն տեղեկատվությունը, որը՝

ա. հիմնական հաշվետվությունը լրացնելու պահին հասանելի չէ կամ հնարավոր չէ ստանալ, այսինքն, երբ հաշվետվությունը գործարքը կատարելու փաստի հիման վրա պետք է ներկայացվի ՖԴԿ-ին համապատասխան ժամկետում, սակայն պարտադիր լրացման ենթակա դաշտերի համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման նպատակով հարցումներ են կատարվել հաճախորդին, թղթակից կամ այլ կազմակերպություններին,

բ. ներկայացվում է ՖԴԿ հարցման հիման վրա. եթե հարցվող տեղեկատվության համար համապատասխան դաշտեր չկան, ապա տեղեկատվությունը լրացվում է 4-րդ բաժնում,

գ. վերաբերում է կնքված, սակայն դեռևս չկատարված գործարքին. այս դեպքում նշում է կատարվում չավարտված կամ չկատարված գործարք դաշտում, իսկ 4-րդ բաժնում նշվում է գործարքի ընդհատման պատճառը (օրինակ՝ հաճախորդի կողմից պայմանագրի միակողմանի լուծում),

դ. ներառում է հաշվետու անձի կողմից կարևորվող այլ տվյալներ. այդ տվյալների տրամադրման անհրաժեշտությունն առաջանում է հաշվետու անձի կողմից ստացված նոր տեղեկատվության՝ ՖԴԿ-ին ներկայացման հանգամանքով, որոնք չեն ներառում պարտադիր լրացման ենթակա դաշտերի տեղեկատվությունը:

10. (1.1) Գործարքի կնքման ամսաթիվը: Այս կետում նշեք տեղեկացման ենթակա գործարքը կնքելու ամսաթիվը, ամիսը, տարին (թվերով), իսկ եթե գործարքը դեռևս չի կնքվել, ապա նշեք այն ամսաթիվը, երբ ներկայացվել է գործարքի կնքման պահանջը, իսկ 4-րդ բաժնում նշեք, թե գործարքը ինչու չի կնքվել և կնքման ինչ փուլում է:

1) Մի քանի փոխկապակցված գործարքների դեպքում նշեք դրանցից վերջինը կատարելու ամսաթիվը կամ այն գործարքի ամսաթիվը, որից առաջացել է կասկածը: Ձեր նշումը մեկնաբանեք հաշվետվական ձևի 4-րդ բաժնում:

11. (1.2) Պարտադիր տեղեկացման գործարք: Այս կետում նշում եք կատարում այն բոլոր դեպքերում, երբ ապահովագրական գործարքով սահմանված ապահովագրավճարը կամ վճարվող ապահովագրական հատուցումը (ապահովագրական գումարի վճարումը) գերազանցում է 20 միլիոն դրամը, ինչպես նաև, երբ ապահովագրական գործարքով սահմանված ապահովագրական գումարը գերազանցում է 20 միլիոն դրամը, այն դեպքում, երբ այդ գործարքով ամրագրված ապահովագրավճարները կամ ակնկալվող ապահովագրական հատուցումը (ապահովագրական գումարի վճարումը) նախատեսվում է ստանալ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս:

1) Այս կետում նշում կատարելու դեպքում 1.3 կետում նշում մի կատարեք:

2) Այս կետում նշում կատարելու դեպքում 1.4 կետից սկսած բոլոր կետերը լրացրեք պարտադիր տեղեկացման գործարքի վերաբերյալ:

3) Եթե գործարքի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում եք և՛ որպես պարտադիր, և՛ որպես կասկածելի, ապա բաց թողեք այս կետը և նշում կատարեք 1.3 կետում և շարունակեք հաշվետվական ձևը լրացնել որպես կասկածելի գործարք:

12. (1.3) Կասկածելի գործարք: Այս կետում նշում եք կատարում այն բոլոր դեպքերում, երբ ապահովագրական գործարքի կնքման կամ իրականացման պայմաններում առկա է կասկածի հիմքերից և չափանիշներից առնվազն մեկը:

1) Այս կետում նշում կատարեք նաև այն դեպքերում, երբ ապահովագրական գործարքում առկա են և՛ պարտադիր տեղեկացման գործարքի, և՛ կասկածելի գործարքի առկայությունը վկայող հանգամանքներ:

2) 1.3.4 կետում նշում կատարելու դեպքում 1.3.1 կետում նշեք նաև կասկածի հիմքերը և չափանիշները, ինչպես նաև նշեք, թե Ձեր կարծիքով՝ այդ կասկածը որն է:

3) Եթե Ձեր կողմից գործարքը կասեցվել է կամ դադարեցվել, ապա նշում կատարեք համապատասխան վանդակում և 1.3.4 կետում նշեք կասեցման կամ դադարեցման ամսաթիվը և ժամկետը:

4) 1.3.5 կետում նշում կատարեք, եթե ինչ-որ պատճառով գործարքը չի կատարվել կամ չի շարունակվել: Եթե գործարքը չի կատարվել, ապա հաշվետվական ձևում լրացրեք այն տվյալները, որոնք հայտնի են դարձել գործարքի կնքման առաջարկի պահից սկսած մինչև հաճախորդի կողմից այն կատարելու մտադրությունից հրաժարվելու պահը: 4-րդ բաժնում նշեք, թե Ձեզ հայտնի ինչ պատճառներով այն չի կատարվել:

13. (1.4) Փոխկապակցված գործարքներ: Այս կետում նշում կատարեք այն դեպքերում, երբ առկա են մեկից ավելի փոխկապակցված ապահովագրական գործարքներ:

1) Այս կետում նշում կատարելու դեպքում 1.5 կետում նշում մի կատարեք:

2) Փոխկապակցված ապահովագրական գործարքներ են համարվում՝

ա. մեկ անձի կամ «Ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ փոխկապակցված անձանց կողմից մեկ ամսվա ընթացքում իրականացված ապահովագրական գործարքները (օրինակ, եթե միևնույն ապահովադիրը կամ ապահովադիր ամուսինները 20-օրյա ժամկետում հնարավոր անհաղթահարելի ուժերից ապահովագրել են և՛ իրենց ավտոմեքենաները, և՛ բնակարանը),

բ. միևնույն ապահովագրության օբյեկտի կամ միևնույն ապահովագրական ռիսկերի կամ պահանջների հետ կապված ապահովագրական գործարքները (օրինակ, եթե միևնույն ապահովադիրն առանձին ապահովագրական պայմանագրերով և՛ վթարից, և՛ հնարավոր հափշտակությունից ապահովագրել է իր ավտոմեքենան),

գ. գործարքների պայմաններից ակնհայտ է, որ միևնույն գործարքը կատարվում է մի քանի առանձին գործարքների միջոցով՝ նույնականացման կամ հաշվետվության ներկայացման պահանջից խուսափելու նպատակով:

3) Փոխկապակցված գործարքների կետում նշում կատարելու դեպքում այդ գործարքները դիտարկեք որպես մեկ գործարք, իսկ 1.6.1-1.9.6 կետերում սահմանված տեղեկությունները լրացրեք այդ գործարքների հանրագումարային տվյալներով:

14. Փոխկապակցված գործարքների քանակը և փոխկապակցվածության եղանակը: Այս կետում նշեք փոխկապակցված ապահովագրական գործարքների թիվը, ինչպես նաև Ձեր բառերով նշեք, թե ինչպես են

այդ գործարքները փոխկապակցված (օրինակ՝ հատկացված տողում գրեք՝ առկա է երկու ապահովագրական պայմանագիր, մեկ (միևնույն) ապահովադիր, տարբեր վնասներից՝ վթար, հափշտակություն, ապահովագրել է միևնույն գույքը՝ ավտոմեքենան):

15. (1.5) Մեկ գործարք: Այս կետում նշում կատարեք այն դեպքերում, երբ առկա է մեկ ապահովագրական գործարք:

16. (1.6) Ապահովագրության տեսակը: Այս կետի համապատասխան վանդակներում նշեք ապահովագրության այն տեսակը (կյանքի կամ այլ՝ գույքի, պատասխանատվության, ոչ կյանքի անձնական ապահովագրություն կամ որևէ վերաապահովագրություն), որին դասվում է ապահովագրական գործարքը: 1.6.1 և 1.6.2 կետերի ներքևի տողում գրեք նաև, թե ապահովագրական գործարքը կյանքի կամ այլ ապահովագրության, ինչպես նաև վերաապահովագրության որ տեսակին է պատկանում:

(Օրինակ՝ կյանքի ապահովագրության դեպքում՝ լրակեցության կամ կենսաթոշակային ապահովագրական գործարք, ոչ կյանքի ապահովագրության դեպքում՝ երրորդ անձանց հնարավոր պահանջների հատուցման հետ կապված ապահովագրական գործարք):

17. (1.7) Ապահովագրության ժամկետը: Այս կետում նշեք ապահովագրական հիմնական պայմանագրի ժամկետը (թվերով):

18. (1.8.1) Ապահովագրական գումարը: Այս կետում նշեք ապահովագրական պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով ներկայացված Հայաստանի Հանրապետության դրամով, իսկ փոխկապակցված գործարքների դեպքում՝ ապահովագրական գումարների հանրագումարը (թվերով):

19. (1.8.2) Ապահովագրավճարը: Այս կետում նշեք ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով ներկայացված Հայաստանի Հանրապետության դրամով, իսկ փոխկապակցված գործարքների դեպքում՝ ապահովագրավճարների հանրագումարը (թվերով):

20. (1.8.3) Ապահովագրական հատուցումը: Այս կետում նշեք ապահովագրական պատահարի հիման վրա վճարվող ապահովագրական հատուցման (ապահովագրական գումարի վճարումը) գումարը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով՝ ներկայացված Հայաստանի Հանրապետության դրամով, իսկ փոխկապակցված գործարքների դեպքում՝ ապահովագրական հատուցումների (ապահովագրական գումարի վճարումների) հանրագումարը (թվերով):

21. (1.9) Ապահովագրության գործարքի վերաապահովագրության դեպքում՝ վերաապահովագրողի և վերաապահովագրության վերաբերյալ տեղեկություններ: Այս կետը լրացրեք, եթե ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրողի պարտավորությունների ռիսկը ապահովագրվել է վերաապահովագրողի մոտ:

1) Վերաապահովագրողների կողմից սույն հաշվետվական ձևը լրացնելու դեպքում (բացառությամբ, եթե վերաապահովագրողն իր պարտավորությունների ռիսկը չի վերաապահովագրում երրորդ վերաապահովագրողի մոտ) 1.9.1-1.9.6 կետերում նշում չի կատարվում:

2) Մեկից ավելի վերաապահովագրությունների առկայության դեպքում կետը լրացրեք մեկից ավելի անգամ:

3) Այն դեպքում, երբ միևնույն ռիսկը վերաապահովագրվում է մի քանի վերաապահովագրողների մոտ, ապա տվյալ գործարքի մասին ամբողջական տեղեկություն ներկայացնում է միայն ապահովագրողը, իսկ վերաապահովագրական ընկերություններից յուրաքանչյուրը տեղեկություն է ներկայացնում միայն իր վերաապահովագրած մասով:

22. (1.9.1-1.9.3): Այս կետերում նշեք վերաապահովագրողի (վերաապահովագրողների) վերաբերյալ տեղեկությունները:

23. (1.9.4) Վերաապահովագրական գումարը: Այս կետում նշեք վերաապահովագրության պայմանագրով (պայմանագրերով) նախատեսված վերաապահովագրական գումարը կամ այդ գումարների հանրագումարը միայն Հայաստանի Հանրապետության դրամով՝ կիրառելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքը (թվերով) և արժույթը:

24. (1.9.5) Վերաապահովագրական վճարը: Այս կետում նշեք վերաապահովագրության պայմանագրով (պայմանագրերով) նախատեսված վերաապահովագրավճարը կամ վերաապահովագրավճարների ամբողջությունը (թվերով) և արժույթը:

25. (1.9.6) Վերաապահովագրական հատուցումը: Այս կետում նշեք ապահովագրական պատահարի հիման վրա վճարվող վերաապահովագրական հատուցման (վերաապահովագրական գումարի վճարման) գումարը (թվերով և տառերով):

26. (2) Հաճախորդի (ապահովադրի) տվյալները: Այս բաժնում նշեք հաճախորդի (ապահովադրի) նույնականացման հիման վրա ներկայացված տվյալները: Վերաապահովագրության գործարքների դեպքում որպես հաճախորդ (ապահովադիր) լրացվում են ապահովագրական ընկերության, իսկ որպես շահառու՝ փաստացի ապահովադիրների տվյալները:

1) 2.1 կետում նշեք նաև ապահովադիրների թիվը:

2) Եթե ապահովադիրն իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր, ապա լրացրեք 2.1.1 կետերը:

3) Եթե ապահովագրական գործարքում առկա են իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող երկու և ավելի ապահովադիրներ, լրացրեք 2.1 կետում նրանց թիվը:

4) Եթե ապահովադիրը ֆիզիկական անձ է, ապա լրացրեք 2.1.2 կետերը:

5) Եթե ապահովագրական գործարքում առկա են ֆիզիկական անձ հանդիսացող երկու և ավելի ապահովադիրներ, լրացրեք 2.1 կետում նրանց թիվը:

6) Ապահովադրի վերաբերյալ տվյալները լրացվում են նաև այն դեպքում, երբ առկա է նրա անունից հանդես եկող ապահովագրական բրոքեր:

7) 2.1.1.4.1 կետում լրացվում է հաճախորդի (ապահովադրի) հաշվի համարը: Եթե ապահովագրական գործարքում առկա է երկու և ավելի հաշվի համար, ապա համարակալեք և նշեք դրանք 4-րդ բաժնում:

8) Նման ձևով լրացրեք նաև 2.1.2.8.1, 2.3.4.1, 3.2.4.1 և 3.3.8.1 կետերը:

9) 2.2 կետը լրացվում է, եթե ապահովադիրը միաժամանակ նաև շահառու է: Լրացրեք բոլոր հնարավոր դեպքերը, եթե ապահովադիրը միաժամանակ նաև շահառու է: Այս դեպքում շահառուին վերաբերող բաժինը մի լրացրեք:

27. (2.3) Ապահովագրական բրոքերի տվյալները, ով ապահովադրի անունից իրականացնում է գործարքը: Այս կետում նշեք (առկայության դեպքում) ապահովադրի հանձնարարությամբ և նրա անունից հանդես եկող ապահովագրական բրոքերի տվյալները:

1) Երկու և ավելի ապահովադիրների և (կամ) երկու և ավելի ապահովագրական բրոքերների առկայության դեպքում 4-րդ բաժնում նշեք, թե յուրաքանչյուր ապահովագրական բրոքեր որ ապահովադրի անունից է հանդես գալիս:

28. (3) Անձը (շահառուն), ում օգտին կատարվում է գործարքը: Այս բաժնում նշեք այն անձի (անձանց) (առկայության դեպքում) տվյալները, ում օգտին ապահովադիրը կատարում է ապահովագրական գործարքը, և որը գործարքի իրական տնտեսական շահը տիրապետող անձ է:

1) 3.1 կետում նշեք շահառուների թիվը:

2) Երկու և ավելի շահառուների առկայության դեպքում այս բաժինը լրացրեք երկու և ավելի անգամ:

29. (3.4) Շահառուին հասանելիք գումարը: Այս կետում նշեք այն գումարը, որն ապահովադիրը նախատեսում է վճարել շահառուին (շահառուներին): Եթե շահառուն նույն ինքն ապահովադիրն է, ապա նշում կատարեք 2.2 կետում:

30. (4) Ձեր կողմից կարևորվող՝ գործարքին առնչվող այլ տեղեկություններ: Այս բաժնում նշեք Ձեր կողմից գործարքի կապակցությամբ կարևորվող այլ տեղեկություններ: Ցանկացած տեղեկատվություն լրացնելիս նշեք, թե որ բաժնի որ կետին է այն վերաբերում:

31. (5) Պատասխանատու աշխատակցի տվյալները: Այս կետում նշեք հաշվետու անձի՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի պատասխանատու աշխատակցի տվյալները: Այդ աշխատակիցը պետք է ստորագրի և կնքի լրացված հաշվետվական ձևը (թղթային տարբերակում):

32. (5.3) Լրացման ամսաթիվը: Այս կետում նշում եք սույն հաշվետվական ձևը լրացնելու ամսաթիվը, ամիսը, տարին (թվերով):

33. (5.4) Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարը ՖԴԿ-ում: Այս կետում նշեք Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից Ձեր ապահովագրական ընկերությանը տրված հաշվառման համարը (թվերով):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
Ֆինանսական դիտարկումների կենտրոն
Վ. Սարգսյան 6, Երևան 375010
Հեռ. 545088, Էլ. փոստ info_fiu@cba.am

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի
թիվ 232-Ն որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ԿԱՐԳ

Սույն կարգի նպատակն է՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման ընդհանուր համակարգի (այսուհետ՝ հաշվառում), ինչպես նաև պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների (թիվ 002 հաշվետվական ձևի) տրամադրման միասնական, կենտրոնացված կարգի ստեղծումն ու կիրարկումը:

1. Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառումը

1) Հաշվառումն իրականացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնում հաշվետվություն տրամադրող անձանց գրանցման միջոցով:

2) Հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառումն իրականացվում է հետևյալ փուլերով.

ա. հաշվետվություն տրամադրող անձանց կողմից դիմումների ներկայացում,

բ. հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառում:

2. Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից դիմումների ներկայացումը

1) Հաշվետվություն տրամադրող անձինք հաշվառման համար Ֆինանսական դիտարկումների կենտրոնին սույն կարգի հավելվածով սահմանված դիմումը ներկայացնում են գրավոր: Դիմումը ստորագրվում է հաշվետվություն տրամադրող անձի ղեկավարի կողմից և հավաստվում հաշվետվություն տրամադրող անձի կնիքով:

2) Հաշվառման դիմումը պետք է պարունակի՝

ա. հաշվետվություն տրամադրող անձի լրիվ անվանումը,

բ. հաշվետվություն տրամադրող անձի գործունեության տեսակը,

գ. հաշվետվություն տրամադրող անձի գտնվելու վայրը և գործունեության վայրը,

դ. հաշվետվություն տրամադրող անձի հարկ վճարողի հաշվառման համարը, պետական գրանցման համարը,

ե. հաշվետվություն տրամադրող անձի լիցենզիայի համարը,

զ. ներքին հսկողության ստորաբաժանման ղեկավարի կամ պատասխանատու անձի տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, պաշտոնը, էլեկտրոնային հասցեն, հեռախոսը, ստորագրությունը),

է. հաշվառման դիմումի լրացման օրը, ամիսը, տարեթիվը:

3. Ֆինանսական դիտարկումների կենտրոնում հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառումը

1) Սույն կարգով նախատեսված դիմումը լրացնելուց և Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացնելուց հետո հաշվետվություն տրամադրող անձին տրվում է հաշվառման համար:

2) Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարը զետեղվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի միասնական տեղեկատվական շտեմարանում:

3) Հաշվետվություն տրամադրող այն անձանց, որոնք համակցված չեն «ՍիԲիէյՆեթ» միջբանկային կորպորատիվ ցանցին և միաժամանակ հաշվետվությունը ներկայացնելու են էլեկտրոնային տարբերակով, տրամադրվում է նաև Կենտրոնական բանկի «ՍիԲիէյՆեթ» սերվերում գրանցված անհատական նույնականացնող (իդենտիֆիկացնող) «բանալի», որի առկայության դեպքում հնարավոր է Կենտրոնական բանկի տարածքում տեղակայված համակարգչից էլեկտրոնային տեսքով հաշվետվությունն ուղարկել Ֆինանսական դիտարկումների կենտրոն:

4) Հաշվետվություն տրամադրող այն անձանց, որոնք հաշվետվությունները ներկայացնելու են էլեկտրոնային փոստի միջոցով, տրամադրվում են Կենտրոնական բանկում տեղակայված ինտերնետային սերվերում հաշվառման ժամանակ գրանցված անհատական նույնականացնող (իդենտիֆիկացնող) տվյալներ, որոնց մուտքագրման դեպքում կնույնականացվի հաշվետվություն տրամադրող անձանց ինքնությունը:

5) Եթե հաշվետվություն տրամադրող անձը միացած է համակարգչային «ՍիԲիէյՆեթ» կորպորատիվ ցանցին, կարող է օգտագործել այդ ցանցը հաշվառման դիմումի, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարի և հաշվետվական ձևերի էլեկտրոնային տարբերակով ստացման և ուղարկման համար:

4. Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը

1) Տեղեկությունները Ֆինանսական դիտարկումների կենտրոն են ներկայացվում թղթային և (կամ) էլեկտրոնային տարբերակով: Ներկայացվող հաշվետվություններին (թղթային և էլեկտրոնային տարբերակի համար) տրվում է անվանում: Հաշվետվության անվանումն ունի հետևյալ կառուցվածքը.

Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարը ՖԴԿ-ում (8 նիշ)	գծիկ	հաշվետվության ուղարկման ամսաթիվը՝ օօ/աա/տտ (6 նիշ)	գծիկ	տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (3 նիշ)
▼	▼	▼	▼	▼
XXXXXXXX	-	XXXXXX	-	XXX

Ընդ որում, հաշվետվական ձևը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում հետևյալ եղանակներից որևէ մեկով.

ա. ֆիզիկապես ներկայացնելու միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային և էլեկտրոնային (կրիչի վրա) տարբերակները Ֆինանսական դիտարկումների կենտրոն են ներկայացվում ՀՀ կենտրոնական բանկի փաստաթղթերի շրջանառության բաժնի միջոցով՝ փակ, կնքված և ստորագրված ծրարներով: Նշված ծրարների վրա պետք է լրացված լինեն ուղարկողի անվանումը, գտնվելու վայրը, ուղարկման ամսաթիվը, ինչպես նաև հետևյալ նշումը՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին»: Հաշվետվությունը ներկայացված է համարվում ՀՀ կենտրոնական բանկի փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից ստացականի տրամադրման պահին.

բ. «ՍԻԲԻԷՆԵԲ» ցանցին համակցված լինելու դեպքում՝ այդ ցանցի միջոցով, միաժամանակ այն հաշվետվություն տրամադրող անձանց համար, որոնք համակցված չեն «ՍԻԲԻԷՆԵԲ» ցանցին, կարող են ուղարկել հաշվետվական ձևերն էլեկտրոնային տարբերակով՝ Կենտրոնական բանկի մուտքի մոտ դրված «ՍԻԲԻԷՆԵԲ» ցանցի տերմինալի միջոցով: Հաշվետվությունը համարվում է ներկայացված Ֆինանսական դիտարկումների կենտրոնի էլեկտրոնային հասցեից հաշվետվություն տրամադրող անձի էլեկտրոնային հասցեին հետադարձ փոստի ստացման պահին: Եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը հետ է ուղարկվում հաշվետվություն տրամադրող անձին (հաշվետվության մեջ տեխնիկական սխալի առկայության պատճառով), ապա հաշվետվությունը համարվում է տվյալների բազա չմուտքագրված, իսկ ստացումը՝ չհաստատված, բացառությամբ Կենտրոնական բանկի մուտքի մոտ դրված «ՍԻԲԻԷՆԵԲ» ցանցի տերմինալի միջոցով ներկայացված հաշվետվությունների.

գ. ՀՀ կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով, որի դեպքում լրացվում են ՀՀ կենտրոնական բանկի վեբ կայքում հրապարակված կամ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվետվական ձևերի պաշտպանված էլեկտրոնային տարբերակները, որոնք փոփոխելն արգելվում է: Հաշվետվական ձևն ուղարկվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոն ՀՀ կենտրոնական բանկի վեբ կայքի ծրագրային համակարգի միջոցով և ներկայացված է համարվում ծրագրային համակարգի «Ուղարկման կարգավիճակը» դաշտում «Ուղարկված է» նշման առկայության դեպքում: Եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը հետ է ուղարկվում հաշվետվություն տրամադրող անձին (հաշվետվության մեջ տեխնիկական սխալի առկայության պատճառով), ապա հաշվետվությունը համարվում է տվյալների բազա չմուտքագրված, իսկ ստացումը՝ չհաստատված: ՀՀ կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով ուղարկվող հաշվետվությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու վերաբերյալ» կարգը.

դ. ֆաքսի միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային տարբերակն ուղարկվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ֆաքսի համարին և ներկայացված է համարվում ֆաքսի առաքման անդորրագրի ստացման պահին: Այս դեպքում հաշվետվությունը սույն կարգի 4.1 ենթակետի «ա», «բ», «գ» կամ «ե» պարբերություններից որևէ մեկով սահմանված կարգով մինչև տվյալ ամսվա վերջին օրը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.

ե. փոստի միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային և էլեկտրոնային (կրիչով) տարբերակներն ուղարկվում են Ֆինանսական դիտարկումների կենտրոնի փոստային հասցեին և ներկայացված են համարվում այն «Հայփոստի» բաժանմունք ներկայացնելու և համապատասխան անդորրագիր ստանալու պահին.

զ.* Ֆինանսական դիտարկումների կենտրոնի էլեկտրոնային փոստի (info_fiu@cba.am) միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակն ուղարկվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի էլեկտրոնային հասցեին և ներկայացված է համարվում նույն էլեկտրոնային հասցեից հետադարձ փոստի ստացման պահին: Այս դեպքում հաշվետվությունը սույն կարգի 4.1 ենթակետի «ա», «բ»,

* *Պաշտոնական հրապարակման մեջ համարակալման մեջ սպրդել է տեխնիկական վրիպակ:*

«գ» կամ «ե» պարբերություններից որևէ մեկով սահմանված կարգով մինչև տվյալ ամսվա վերջին օրը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

2) Սույն կարգը հաստատած Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշման 3-րդ հավելվածի համաձայն՝ հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետում հաշվետվություն տրամադրող անձը ներկայացված հաշվետվության մեջ սխալ կամ թերացում հայտնաբերելու դեպքում ներկայացնում է հաշվետվության ուղղված տարբերակը՝ պահպանելով սույն կարգի 4.1 կետով սահմանված հաշվետվության անվանումը և ավելացնելով ուղղման հերթական համարը: Գործարքի վերաբերյալ հաշվետվության վերջնական տարբերակ է համարվում միևնույն անվանումն ունեցող հաշվետվությունների ամենավերջին հերթական համարն ունեցող հաշվետվությունը: Փոփոխված և (կամ) ամբողջականացված հաշվետվության հետ մեկտեղ հաշվետվություն տրամադրող անձը Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին ներկայացնում է գրություն՝ թույլ տրված սխալների ուղղման և նախորդ հաշվետվությունը չեղյալ համարելու վերաբերյալ:

3) Սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված հաշվետվությունում սխալ կամ թերացում հայտնաբերելու դեպքում հաշվետու անձը դիմում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին՝ ուղարկված հաշվետվությունում ուղղում կատարելու խնդրանքով՝ նշելով սխալի կամ թերացման պատճառը և պահպանելով սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված ընթացակարգը:

Հավելված
«Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը» հավելված 2-ի

Ձեր հաշվառման համարը ՖԴԿ-ում

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի ֆինանսական
դիտարկումների կենտրոնի ղեկավար
պարոն _____-ին

Խնդրում եմ Ձեզ _____-ին տրամադրել հաշվառման համար:
Հաշվետվություն տրամադրող անձի լրիվ անվանումը

Հաշվետվություն տրամադրող անձի տվյալները՝

Գործունեության տեսակը _____

Գտնվելու վայրը _____

Գործունեության վայրը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Պետական գրանցման համարը _____

Լիցենզիայի համարը _____

Պատասխանատու անձի (անձանց) տվյալները՝

1. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍիԲիէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն
2. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍիԲիէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն
3. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍիԲիէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն
4. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍիԲիէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն

Հաշվետվություն տրամադրող անձի
գործադիր մարմնի ղեկավար՝ _____
ստորագրություն

__ _____ ____ թ.

քաղաք Երևան

Հավելված 3

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի
թիվ 232-Ն որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Սույն հավելվածի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված՝ պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների (թիվ 002 հաշվետվական ձևի) տրամադրման միասնական ժամկետների սահմանումը:

1. Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ժամկետները

1) Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը պարբերական բնույթ չի կրում:

2) Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են Օրենքով և (կամ) Լիազոր մարմնի ուղեցույցներով սահմանված կասկածելի գործարքի հիմքերի ու չափանիշների և (կամ) պարտադիր տեղեկացման գործարքների համար անհրաժեշտ գումարային սահմանաչափի առկայության դեպքում:

3) Հաշվետվություն տրամադրող անձը, գործարքում (գործառնությունում) կասկածելի գործարքի հիմքեր և չափանիշներ հայտնաբերելու դեպքում նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12.00-ն, ներկայացնում է այդ գործարքի վերաբերյալ հաշվետվություն:

4) Սույն կետով սահմանված գործաքների տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել.

ա. աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

բ. ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով,

գ. վիճելի (քննարկման ենթակա) դեպքերով և այլն:

5) Հաշվետվություն տրամադրող անձը, պարտադիր տեղեկացման գործարքի (գործառնության) վերաբերյալ տեղեկությունները Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացնում այդ գործարքը կնքելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

6) Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից ընդունվում են միայն այն անձի ստորագրությամբ ստացված հաշվետվությունները, ում տվյալները, սույն որոշմամբ սահմանված կարգով, նախապես ներկայացվել են Կենտրոնական բանկ:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Նոտարների (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 003 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի թիվ 57-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 71-րդ հոդվածները, ինչպես նաև ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 20-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հուլիսի 31-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 27.08.08 թ. (ՀՀԳՏ N31 (305), 26.09.08):

1. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 003 հաշվետվական ձև)»՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը»՝ համաձայն հավելված 2-ի (կցվում է):

3. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ժամկետները»՝ համաձայն հավելված 3-ի (կցվում է):

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի «Նոտարների (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 003 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի մարտի 28-ի թիվ 143-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 57-Ն որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի օգոստոսի 31-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 օգոստոսի 2008 թ., N 233-Ն

Հավելված 1
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի
թիվ 233-Ն որոշմամբ

Նոր հաշվետվություն ○
Լրացում հաշվետվություն ○
Լրացվող հաշվետվության համարը ☐ և ☐
և հերթական լրացում հաշվետվության տարբերակը

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎ 003

Հաշվետվական ձևը լրացվում և ներկայացվում է նոտարների կողմից՝ սույն ձևի լրացման և ներկայացման ուղեցույցի համաձայն

Հաշվետվական ձևում «»-ով նշված են պարտադիր տեղեկացման գործարքների համար անհրաժեշտ լրացման դաշտերը*

1. ԳՈՐԾԱՐՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

***1.1. Գործարքի կնքման ամսաթիվը** ☐☐ / ☐☐ / ☐☐☐☐
օ օ / ա ա / տ տ տ տ
Լրացրեք 1.2 և 1.3 կետերից միայն մեկը

***1.2. Պարտադիր տեղեկացման գործարք** ☐	**1.3. Կասկածելի գործարք** ☐

1.3.1. Գործարքը կասկածելի համարելու հիմքերը և չափանիշները
Հատկացված դաշտում մուտքագրվող տեղեկատվությունը չտեղավորվելու դեպքում ավելացրեք համարակալված թերթ, որի ձախ անկյունում նշեք 1.3.1 և լրացրեք անհրաժեշտ տեղեկությունները

Լրացրեք 1.3.2 և 1.3.3 կետերից միայն մեկը

1.3.2. Գործարքի վավերացումը կասեցվել է ☐	**1.3.3. Գործարքի վավերացումը մերժվել է** ☐

1.3.4. Գործարքի վավերացումը կասեցնելու (մերժելու) ամսաթիվը, կասեցման ժամկետը

օ օ / ա ա / տ տ տ տ և օր

1.3.5. Չկատարված կամ չավարտված գործարք

1.4. Գործարքի էությունը (լրացնել բառերով)

*1.5. Գումարը (ՀՀ դրամ)

2. ԳՈՐԾԱՐՔԻ ԿՈՂՄ(ԵՐ)

Գործարքի երկու և ավելի կողմերի առկայության դեպքում սույն բաժինը լրացրեք երկու և ավելի անգամ

*2.1. Գործարքի կողմերի քանակը Մեկից ավելի կողմերի դեպքում լրացրեք ***այստեղ***

2.1.1. Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր

*2.1.1.1. Լրիվ անվանումը (անունը)

*2.1.1.2. Գործարքի կողմի կարգավիճակը

*2.1.1.3. Գտնվելու (բնակության) վայրը

Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը / գյուղը | Երկիրը

*2.1.1.4. Հարկ վճարողի հաշվառման համարը

*2.1.1.5. Պետական գրանցման համարը

2.1.2. Եթե անձը, որը գործարքի կողմ է, ֆիզիկական անձ է

*2.1.2.1. Անուն *2.1.2.2. Ազգանուն

Նշեք գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի սեռը և ընտանեկան դրությունը և

*2.1.2.3. Գործարքի կողմի կարգավիճակը

*2.1.2.4. Բնակության վայրը

Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը / գյուղը | Երկիրը

*2.1.2.5. Ծննդյան ամսաթիվը օ օ / ա ա / տ տ 2.1.2.6. Քաղաքացիությունը Երկիրը

*2.1.2.7. Սոցիալական քարտի համարը

*2.1.2.8. Անձը հաստատող փաստաթղթի անվանումը

*2.1.2.8.1. Փաստաթղթի համարը

*2.1.2.8.2. Տրված է ում կողմից և երբ օ օ / ա ա / տ տ

ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ (ՈՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ԳՈՐԾԱՐՔԸ)

Այս բաժինը լրացրեք միայն այն դեպքում, երբ գործարքը կատարվում է լիազորված անձի միջոցով

*2.2. Լիազորված անձանց քանակը

Երկու և ավելի լիազորված անձանց դեպքում լիազորված անձի տվյալները լրացրեք երկու և ավելի անգամ

2.2.1. Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր

*2.2.1.1. Լրիվ անվանումը (անունը)

*2.2.1.2. Ում կողմից է հանդես գալիս լիազորված անձը

*2.2.1.3. Գտնվելու (բնակության) վայրը

Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը / գյուղը | Երկիրը

*2.2.1.4. Հարկ վճարողի հաշվառման համարը

*2.2.1.5. Պետական գրանցման համարը

2.2.2. Ֆիզիկական անձ

*2.2.2.1. Անուն | *2.2.2.2. Ազգանուն

Նշեք լիազորված անձ հանդիսացող ֆիզիկական անձի սեռը և ընտանեկան դրությունը և

*2.2.2.3. Բնակության վայրը
Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը / գյուղը | Երկիրը

*2.2.2.4. Ծննդյան ամսաթիվը
օ օ / ա ա / տ տ

2.2.2.5 Քաղաքացիություն
Երկիրը

*2.2.2.6. Սոցիալական քարտի համարը

*2.2.2.7. Անձը հաստատող փաստաթղթի անվանումը

*2.2.2.7.1. Փաստաթղթի համարը

*2.2.2.7.2. Տրված է ում կողմից և երբ
օ օ / ա ա / տ տ

3. ԱՆՁԸ (ՇԱՀԱՌՈՒ), ՈՒՄ ՕԳՏԻՆ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԳՈՐԾԱՐՔԸ

Այս բաժինը լրացրեք Ձեր կողմից միակողմանի գործարքի վավերացման դեպքում
Երկու և ավելի շահառուների դեպքում շահառուի անձնական տվյալները լրացրեք երկու և ավելի անգամ

3.1. Շահառուների քանակը
Մեկից ավելի շահառուների դեպքում լրացրեք ***այստեղ***

3.1.1. Եթե շահառուն իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր

3.1.1.1. Լրիվ անվանումը (անունը)

3.1.1.2. Գտնվելու (բնակության) վայրը
Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը / գյուղը | Երկիրը

3.1.1.3. Հարկ վճարողի հաշվառման համարը

3.1.1.4. Պետական գրանցման համարը

3.1.2. Եթե շահառուն ֆիզիկական անձ է

3.1.2.1. Անուն | 3.1.2.2. Ազգանուն

Նշեք գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի սեռը և ընտանեկան դրությունը և

3.1.2.3. Բնակության վայրը
Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը / գյուղը | Երկիրը

3.1.2.4. Ծննդյան ամսաթիվը
օ օ / ա ա / տ տ

3.1.2.5. Քաղաքացիությունը
Երկիրը

3.1.2.6. Սոցիալական քարտի համարը

3.1.2.7. Անձը հաստատող փաստաթղթի անվանումը

3.1.2.7.1. Փաստաթղթի համարը

3.1.2.7.2. Տրված է ում կողմից և երբ
օ օ / ա ա / տ տ

4. ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԿԱՐԵՎՈՐՎՈՂ՝ ԳՈՐԾԱՐՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Հատկացված դաշտում մուտքագրվող տեղեկատվությունը չտեղավորվելու դեպքում ավելացրեք համարակալված թերթ, որի ձախ անկյունում նշեք 4, և լրացրեք անհրաժեշտ տեղեկությունները)

*5. ՆՈՏԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

*5.1. Անուն | *5.2. Ազգանուն

*5.3. Լրացման ամսաթիվը				Ստորագրություն			
	օ օ	/	ա ա	/	տ տ	Կ.Տ	
*5.4. Նոտարի հաշվառման համարը ՖԴԿ-ում							

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
Ֆինանսական դիտարկումների կենտրոն
Վ. Սարգսյան 6, Երևան 375010
Հեռ. 545088, Էլ. փոստ info_fiu@cba.am


Հավելված
«Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 003 հաշվետվական ձև)» հավելված 1-ի

ԹԻՎ 003 ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՈՒՂԵՑՈՒՅՑ)

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն հաշվետվական ձևը լրացնել միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնից (այսուհետ նաև՝ ՖԴԿ) «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգի» հիման վրա հաշվառման հերթական համար ստանալուց հետո:

Հաշվետվական ձևի կառուցվածքը և ուղեցույցում հանդիպող հասկացությունները



Լրացրեք սույն հաշվետվական ձևը, եթե Դուք նոտար եք (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձ կամ հաշվետու անձ):

1. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հետևյալ 2 դեպքերում.

1) եթե նոտարի կողմից վավերացվող գործարքի արժեքը (դրամային գնահատում ունեցող գործարքների դեպքում).

ա. գերազանցում է 20 միլիոն դրամը, բացառությամբ.

բ. անշարժ գույքի հետ կապված գործարքների, որոնց վերաբերյալ հաշվետվական ձևը լրացվում է, եթե գործարքի արժեքը գերազանցում է 50 միլիոն դրամը:

գ) եթե նոտարի կողմից վավերացվող գործարքում առկա է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և (կամ) Լիազոր մարմնի ուղեցույցներով սահմանված կասկածելի գործարքների հիմքերից և չափանիշներից առնվազն մեկը՝ անկախ նրանից, թե գործարքի գումարը 20 միլիոն դրամը գերազանցում է, թե ոչ:

2. Սույն հաշվետվական ձևը պարբերական բնույթ չի կրում, այլ լրացվում է միայն 1-ին կետում նշված գործարքների առկայության դեպքում:

3. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ սույն հաշվետվական ձևը ներկայացվում է միայն հաճախորդի համար նախապատրաստվող կամ իրականացվող հետևյալ գործարքների մասով՝

1) անշարժ գույքի առուվաճառքի,

2) հաճախորդի դրամական միջոցների, արժեթղթերի կամ այլ գույքի կառավարման,

3) բանկային և արժեթղթային հաշիվների կառավարման,

4) իրավաբանական անձանց հիմնադրման, գործունեության կամ կառավարման համար դրամական միջոցների կամ այլ գույքի տրամադրման,

5) իրավաբանական անձանց հիմնադրման, գործունեության կամ կառավարման գործառույթների իրականացման, ինչպես նաև իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում (բաժնեհավաք կապիտալում և այլն) մասնակցության, փայի և այլնի օտարման (ձեռքբերման), կամ իրավաբանական անձանց անվանական կամ շուկայական արժեքով բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) օտարման (ձեռքբերման):

4. Եթե հաշվետվությունը ներկայացվում է կասկածելի գործարքի կապակցությամբ, ապա հաշվետվական ձևի բոլոր վանդակները համարվում են լրացման համար պարտադիր: Եթե հաշվետվությունը ներկայացվում է որպես պարտադիր տեղեկացման գործարք, ապա պարտադիր լրացման ենթակա են միայն աստղանիշով նշված վանդակները: Սակայն եթե հնարավոր չէ լրացնել տվյալ վանդակը համապատասխան տվյալների բացակայության դեպքում, ապա տվյալ վանդակում նշվում է աստղանիշ, և այդ մասին բացատրություն է տրվում հաշվետվական ձևի 4-րդ բաժնում:

5. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հնարավորինս պարզ, հակիրճ, ընթեռնելի հայերենով:

6. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հետևյալ երկու տարբերակներից որևէ մեկով.

1) թղթային տարբերակ. հաշվետվական ձևի թղթային տարբերակը կարող եք ձեռք բերել.

ա. ՖԴԿ-ին դիմելու միջոցով.

բ. ՖԴԿ (www.cba.am/fmc/index.htm) ինտերնետային կայքից ելքագրելու միջոցով:

1.1) Հաշվետվական ձևի թղթային տարբերակը լրացրեք գրիչով:

1.2) Բովանդակային ուղղումներ կատարելու դեպքում լրացրեք հաշվետվական նոր ձև: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրեք այդ ուղղումների կողքին:

1.3) Հաշվետվական ձևը լրացրեք թղթային տարբերակով տրված կետերի սահմաններում: Նոր բաժինների կամ առկա բաժիններում լրացուցիչ կետերի լրացման անհրաժեշտության դեպքում օգտվեք հավելյալ թղթերից: Այդ թղթերի վրա նշեք, թե որ բաժինը կամ կետն եք լրացնում, ստորագրեք դրանք և որպես հավելված՝ կցեք հիմնական հաշվետվական ձևին: Օրինակ՝ պարզել եք, որ գործարքում որպես լիազորված անձ հանդես են գալիս երեք անձինք. հաշվետվական ձևի 2.2 կետում նշեք 3 թիվը, առանձին թերթի վրա ևս երկու անգամ բազմացրեք 2.2 կետը ներառող հատվածը, լրացրեք համապատասխան տեղեկատվությունը, ստորագրեք և կցեք լրացված հաշվետվական ձևին:

1.4) Այն դեպքում, երբ հաշվետվական ձևի կետերի սահմանները բավարար չեն, այն լրացրեք լրացուցիչ թղթերի վրա հետևյալ կերպ՝ թղթի ձախ կողմում նշեք, թե որ կետին է վերաբերում տեղեկատվությունը, թերթերի համարակալումը շարունակեք հաշվետվական ձևի վերջին էջի համարից հաջորդող հերթական համարից սկսած: Օրինակ՝ 1.3.1 կետում գործարքը կասկածելի համարելու հիմքերը նշեք լրացուցիչ թղթի վրա, այն համարակալեք հերթական համարով, էջի վերևի ձախ անկյունում նշեք՝ 1.3.1, ստորագրեք և կցեք հաշվետվական ձևին:

2) էլեկտրոնային տարբերակ. հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակը կարող եք ձեռք բերել.

ա. ՖԴԿ-ին դիմելու միջոցով.

բ. ՖԴԿ (www.cba.am/fmc/index.htm) ինտերնետային կայքից ելքագրելու միջոցով:

2.1) Հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակը լրացրեք աղյուսակը ներառող պատուհանները ակտիվացնելու և տվյալները մուտքագրելու միջոցով:

2.2) Կախված նրանից, թե որ կետերը ներառող պատուհաններում եք նշումներ կատարել, կակտիվանան միայն այն պատուհանները (ավտոմատացված ծրագրային համակարգի ներդնումից հետո), որոնց աղյուսակները փոխլրացնում են (չեն բացառում) միմյանց:

2.3) Աղյուսակները ներառող պատուհանները, ըստ դրանցում լրացվող նյութի ծավալի, ընդլայնվում են:

2.4) Եթե նույն բաժինը (ասենք՝ բաժին 2-ը) պետք է լրացվի երկու և ավելի անգամ, ապա նշեք այդ բաժնի համապատասխան վանդակում (այս դեպքում կետ 2.1) օրինակների քանակը, և ավտոմատացված ծրագրային համակարգում (ներդնումից հետո) կակտիվանան համապատասխան թվով բաժիններ:

7. Հաշվետվական ձևի ներկայացման ժամկետները սահմանված են սույն որոշման հավելված 3-ում:

8. Հաշվետվական ձևի ներկայացման եղանակները սահմանված են սույն որոշման հավելված 2-ում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9. Նոր հաշվետվություն կամ «Լրացում հաշվետվություն»: Յուրաքանչյուր հաշվետվություն լրացնելու համար անհրաժեշտ է կատարել նշում այն մասին, թե արդյոք դա նոր հաշվետվություն է, թե նախկինում արդեն տրամադրված՝ «Լրացում հաշվետվություն»:

1) Եթե արդեն տրամադրված հաշվետվության հետ կապված՝ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ կամ փոփոխված տեղեկատվություն, ապա պետք է կատարել նշում «Լրացում հաշվետվություն» կետում: Համապատասխանաբար, էլեկտրոնային տարբերակում կավելանան նախկինում ուղարկված հաշվետվու-

թյան անվանումը և «լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտերը: «Հաշվետվության անվանումը» դաշտում նույնությամբ լրացվում է այն հաշվետվության էլեկտրոնային ֆայլի անվանումը, որին որպես լրացում ուղարկվում է «Լրացում հաշվետվությունը»: «Լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտում պետք է նշել (թվերով), թե որերորդ «Լրացում հաշվետվությունն» է ներկայացվում:

2) Լրացում հաշվետվությունը պետք է պարունակի նախկինում տրամադրված ամբողջ տեղեկատվությունը՝ ներառյալ կատարված փոփոխությունը:

3) Գործարքի վերաբերյալ հաշվետվության վերջնական տարբերակ է համարվում միևնույն անվանում ունեցող ֆայլերի «լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտում ամենավերջին հերթական համարն ունեցող ֆայլը:

4) Որպես լրացում է համարվում այն տեղեկատվությունը, որը՝

ա. հիմնական հաշվետվությունը լրացնելու պահին հասանելի չէ կամ հնարավոր չէ ստանալ, այսինքն՝ երբ հաշվետվությունը գործարքը կատարելու փաստի հիման վրա պետք է ներկայացվի ՖԴԿ-ին համապատասխան ժամկետում, սակայն պարտադիր լրացման ենթակա դաշտերի համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման նպատակով հարցումներ են կատարվել հաճախորդին կամ այլ անձանց.

բ. ներկայացվում է ՖԴԿ հարցման հիման վրա, եթե հարցվող տեղեկատվության համար համապատասխան դաշտեր չկան, ապա տեղեկատվությունը լրացվում է 4-րդ բաժնում.

գ. վերաբերում է կնքված, սակայն դեռևս չկատարված գործարքին. այս դեպքում նշում է կատարվում չավարտված կամ չկատարված գործարք դաշտում, իսկ 4-րդ բաժնում նշվում է գործարքի ընդհատման պատճառը (օրինակ՝ հաճախորդի կողմից պայմանագրի միակողմանի լուծում).

դ. ներառում է հաշվետու անձի կողմից կարևորվող այլ տվյալներ. այդ տվյալների տրամադրման անհրաժեշտությունն առաջանում է հաշվետու անձի կողմից ստացված նոր տեղեկատվության՝ ՖԴԿ-ին ներկայացման հանգամանքով, որոնք չեն ներառում պարտադիր լրացման ենթակա դաշտերի տեղեկատվությունը:

10. (1.1) Գործարքի կնքման ամսաթիվը: Այս կետում նշեք տեղեկացման ենթակա գործարքը կնքելու ամսաթիվը, ամիսը, տարին (թվերով), իսկ եթե գործարքը դեռևս չի կնքվել, ապա նշում եք այն ամսաթիվը, երբ ներկայացվել է գործարքի կնքման պահանջը, իսկ 4-րդ բաժնում նշեք, թե գործարքն ինչու չի կնքվել և կնքման ինչ փուլում է:

11. (1.2) Պարտադիր տեղեկացման գործարք: Այս կետում նշում եք կատարում այն բոլոր դեպքերում, երբ նոտարի կողմից վավերացվող գործարքի գինը (դրամական գնահատում ունեցող գործարքների դեպքում).

1) գերազանցում է 20 միլիոն դրամը, բացառությամբ.

2) անշարժ գույքի հետ կապված գործարքների, որոնց վերաբերյալ հաշվետվական ձևը լրացվում է, եթե գործարքի արժեքը գերազանցում է 50 միլիոն դրամը:

3) Այս կետում նշում կատարելու դեպքում 1.3 կետում նշում մի կատարեք: Այս կետում նշում կատարելու դեպքում լրացրեք միայն «*» -ով նշված դաշտերը:

Ընդ որում, եթե գործարքում նշված չէ դրա ամբողջական գինը, ապա գործարքի գին է համարվում գործարքով ժամկետային վճարումների համար նախատեսված գումարը (օրինակ՝ բնակարանի վարձակալության պայմանագրով՝ ամենամսյա վարձավճարը):

4) Եթե գործարքի գինը գերազանցում է սույն կետով սահմանված գումարային սահմանաչափը, և, բացի այդ, Ձեր կարծիքով, գործարքը նաև կասկածելի է, ապա բաց թողեք այս կետը, նշում կատարեք 1.3 կետում և շարունակեք հաշվետվական ձևը լրացնել որպես կասկածելի գործարք:

12. (1.3) Կասկածելի գործարք: Այս կետում նշում կատարելու դեպքում 1.2 կետում նշում մի կատարեք: Նշում կատարեք այն բոլոր դեպքերում, երբ գործարքի կնքման կամ իրականացման պայմաններում առկա է կասկածի հիմքերից և չափանիշներից առնվազն մեկը:

1) Այս կետում նշում կատարելու դեպքում նշեք նաև 1.3.1 կետում կասկածի հիմքերը և չափանիշները, ինչպես նաև նշեք, թե Ձեր կարծիքով՝ այդ կասկածը որն է:

2) Եթե Ձեր կողմից գործարքի վավերացումը կասեցվել կամ մերժվել է, ապա նշում կատարեք համապատասխան 1.3.2 կամ 1.3.3 կետերում, և կասեցման դեպքում 1.3.4 կետում նշեք կասեցման ամսաթիվը և ժամկետը:

3) 1.3.5 կետում նշում կատարեք, եթե որևէ այլ պատճառով, քան կասեցումը կամ մերժումը, գործարքը չի կատարվել կամ չի շարունակվել (օրինակ՝ ակնհայտ կասկածելի գործարքի վավերացումից կողմերը հրաժարվել են գործարքի ստորագրման և վավերացման պահին):

4) Եթե գործարքը չի կատարվել, ապա հաշվետվական ձևում լրացրեք այն տվյալները, որոնք հայտնի են դարձել գործարքի կնքման առաջարկի պահից սկսած մինչև գործարքի կողմի (կողմերի) կողմից այն կատարելու մտադրությունից հրաժարվելու պահը: 4-րդ բաժնում նշեք, թե Ձեզ հայտի ինչ պատճառներով այն չի կատարվել:

13. (1.4) Գործարքի էությունը: Այս կետում նշեք Ձեր կողմից վավերացվող գործարքի էությունը և առարկան (օրինակ՝ անշարժ գույքի առուվաճառք, մեքենայի վարձակալություն):

14. (1.5) Գործարքի գումարը: Այս կետում նշեք գործարքով նախատեսված գումարը միայն Հայաստանի Հանրապետության դրամով (թվերով):

15. (2) Գործարքի կողմ(եր): Այս բաժնում նշում եք գործարքի կողմ(եր)ին նկարագրող տվյալները՝ հաճախորդների նույնականացմանը վերաբերող կարգի դրույթներին համապատասխան: Կախված նրանից, թե գործարքի կողմը իրավաբանական անձ է, թե անհատ ձեռնարկատեր, լրացրեք 2.1.1 կետերը, իսկ եթե ֆիզիկական անձ է՝ 2.1.2 կետերը:

1) 2.1 կետում նշեք, թե քանի անձի անունից է կատարվում գործարքը, որից հետո 2.1 բաժինը լրացրեք բոլոր անձանց համար:

2) 2.1.1.3 կետում լրացվում է իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր գործարքի կողմի գտնվելու (բնակության) վայրը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ գործունեության վայրը: Հաճախորդի գործունեության վայրը կարող է նշվել նաև 4-րդ կետում՝ որպես լրացուցիչ տեղեկություն:

16. (2.2) Լիազորված անձի տվյալները, ով գործարքի կողմի անունից իրականացնում է գործարքը: Այս բաժնում նշեք հաճախորդի հանձնարարությամբ և նրա անունից գործարքի կատարման ընթացքում հանդես եկող լիազորված անձի (առկայության դեպքում) տվյալները: Այս բաժինը լրացրեք միայն այն դեպքում, երբ գործարքը կատարվում է լիազորված անձի միջոցով:

1) 2.2 կետում նշեք լիազորված անձանց քանակը: Նշեք, թե քանի լիազորված անձ է մասնակցում գործարքին և բոլորի համար լրացրեք 2.2 բաժինը:

2) Եթե հաշվետվությունը ներկայացվում է որպես պարտադիր տեղեկացման գործարք, ապա լիազորված անձի վերաբերյալ տվյալները համարվում են լրացման համար պարտադիր: Անկախ նրանից, հաշվետվությունը լրացվում է պարտադիր տեղեկացման, թե կասկածելի գործարքի վերաբերյալ, լիազորված անձի վերաբերյալ տվյալները համարվում են լրացման համար պարտադիր (առկայության դեպքում):

17. (3) Անձը (շահառուն), ում օգտին կատարվում է գործարքը: Այս բաժնում նշեք այն անձի (անձանց) տվյալները, ում օգտին կատարվում է միակողմանի գործարքը (օրինակ՝ լիազորագրի վավերացման գործարքում այն անձի տվյալները, ում օգտին լիազորված անձը պետք է կատարի գործարքի առարկան, կտակի վավերացման գործարքում՝ ժառանգների տվյալները):

1) 3.1 կետում նշեք, թե քանի շահառու է առկա գործարքում, և յուրաքանչյուրի համար լրացրեք 3-րդ բաժինը:

2) Եթե հաշվետվությունը ներկայացվում է որպես պարտադիր տեղեկացման գործարք, ապա շահառուի վերաբերյալ տվյալները համարվում են լրացման համար ոչ պարտադիր: Իսկ եթե հաշվետվությունը ներկայացվում է որպես կասկածելի գործարք, ապա հաշվետվական ձևում շահառուի վերաբերյալ բոլոր դաշտերը համարվում են լրացման համար պարտադիր (առկայության դեպքում):

18. (4) Ձեր կողմից կարևորվող՝ գործարքին առնչվող այլ տեղեկություններ: Այս կետում լրացրեք այն տեղեկությունները, որոնք, Ձեր կարծիքով, կարող են օգտակար լինել ներկայացվող գործարքի մասին ավելի կոնկրետ պատկերացում կազմելու կամ գործարքը վերլուծելու համար: Նշեք, թե լրացուցիչ տեղեկատվությունը որ բաժնի որ կետին է վերաբերում:

19. (5) Նոտարի տվյալները: Այս կետում նշեք գործարքը վավերացնող նոտարի տվյալները: Նոտարը պետք է ստորագրի և կնքի լրացված հաշվետվական ձևը:

20. (5.3) Լրացման ամսաթիվ: Այս դաշտում նշեք սույն հաշվետվական ձևը լրացնելու ամսաթիվը, ամիսը, տարին (թվերով):

21. (5.4) Նոտարի հաշվառման համարը ՖԴԿ-ում: Այս կետում նշում եք Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից Ձեզ տրված հաշվառման համարը (թվերով):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
Ֆինանսական դիտարկումների կենտրոն
Վ. Սարգսյան 6, Երևան, 375010
Հեռ. 545088, էլ. փոստ info_fiu@cba.am

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 233-Ն որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Կ Ա Ր Գ

Սույն կարգի նպատակն է՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման ընդհանուր համակարգի (այսուհետ՝ հաշվառում), ինչպես նաև պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների (թիվ 003 հաշվետվական ձևի) տրամադրման միասնական, կենտրոնացված կարգի ստեղծումն ու կիրարկումը:

1. Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառումը

1) Հաշվառումն իրականացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնում հաշվետվություն տրամադրող անձանց գրանցման միջոցով:

2) Հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառումն իրականացվում է հետևյալ փուլերով.

ա. հաշվետվություն տրամադրող անձանց կողմից դիմումների ներկայացում,

բ. հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառում:

2. Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից դիմումների ներկայացումը

1) Հաշվետվություն տրամադրող անձինք հաշվառման համար Ֆինանսական դիտարկումների կենտրոնին սույն կարգի հավելվածով սահմանված դիմումը ներկայացնում են գրավոր: Դիմումը ստորագրվում է նոտարի կողմից և հավաստվում նրա կնիքով:

2) Հաշվառման դիմումը պետք է պարունակի՝

ա) հաշվետվություն տրամադրող անձի լրիվ անվանումը,

բ) հաշվետվություն տրամադրող անձի գործունեության տեսակը,

գ) հաշվետվություն տրամադրող անձի գտնվելու վայրը և գործունեության վայրը,

դ) հաշվետվություն տրամադրող անձի հարկ վճարողի հաշվառման համարը, պետական գրանցման համարը,

ե) հաշվառման դիմումի լրացման օրը, ամիսը, տարեթիվը:

3. Ֆինանսական դիտարկումների կենտրոնում հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառումը

1) Սույն կարգով նախատեսված դիմումը լրացնելուց և Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացնելուց հետո հաշվետվություն տրամադրող անձին տրվում է հաշվառման համար:

2) Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարը զետեղվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի միասնական տեղեկատվական շտեմարանում:


3) Հաշվետվություն տրամադրող այն անձանց, որոնք համակցված չեն «ՍիԲիէյՆեթ» միջբանկային կորպորատիվ ցանցին և միաժամանակ հաշվետվությունը ներկայացնելու են էլեկտրոնային տարբերակով, տրամադրվում է նաև Կենտրոնական բանկի «ՍիԲիէյՆեթ» սերվերում գրանցված անհատական նույնականացնող (իդենտիֆիկացնող) «բանալի», որի առկայության դեպքում հնարավոր է Կենտրոնական բանկի տարածքում տեղակայված համակարգչից էլեկտրոնային տեսքով հաշվետվությունն ուղարկել Ֆինանսական դիտարկումների կենտրոն:

4) Հաշվետվություն տրամադրող այն անձանց, որոնք հաշվետվությունները ներկայացնելու են էլեկտրոնային փոստի միջոցով, տրամադրվում են Կենտրոնական բանկում տեղակայված ինտերնետային սերվերում հաշվառման ժամանակ գրանցված անհատական նույնականացնող (իդենտիֆիկացնող) տվյալներ, որոնց մուտքագրման դեպքում կնույնականացվի հաշվետվություն տրամադրող անձանց ինքնությունը:

5) Եթե հաշվետվություն տրամադրող անձը միացած է համակարգչային «ՍիԲիէյՆեթ» կորպորատիվ ցանցին, կարող է օգտագործել այդ ցանցը հաշվառման դիմումի, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարի և հաշվետվական ձևերի էլեկտրոնային տարբերակով ստացման և ուղարկման համար:

4. Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը

1) Տեղեկությունները Ֆինանսական դիտարկումների կենտրոն են ներկայացվում թղթային և (կամ) էլեկտրոնային տարբերակով: Ներկայացվող հաշվետվություններին (թղթային և էլեկտրոնային տարբերակի համար) տրվում է անվանում: Հաշվետվության անվանումն ունի հետևյալ կառուցվածքը.



Ընդ որում, հաշվետվական ձևը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում հետևյալ եղանակներից որևէ մեկով.

ա. ֆիզիկապես ներկայացնելու միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային և էլեկտրոնային (կրիչի վրա) տարբերակները Ֆինանսական դիտարկումների կենտրոն են ներկայացվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փաստաթղթերի շրջանառության բաժնի միջոցով՝ փակ, կնքված և ստորագրված ծրարներով: Նշված ծրարների վրա պետք է լրացված լինեն ուղարկողի անունը, գտնվելու վայրը, նոտարական տարածքը, ուղարկման ամսաթիվը, ինչպես նաև հետևյալ նշումը՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին»: Հաշվետվությունը ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից ստացականի տրամադրման պահին,

բ. «ՍիԲիէյՆեթ» ցանցին համակցված լինելու դեպքում՝ այդ ցանցի միջոցով, միաժամանակ այն հաշվետվություն տրամադրող անձանց համար, որոնք համակցված չեն «ՍիԲիէյՆեթ» ցանցին, կարող են ուղարկել հաշվետվական ձևերը էլեկտրոնային տարբերակով՝ Կենտրոնական բանկի մուտքի մոտ դրված «ՍիԲիէյՆեթ» ցանցի տերմինալի միջոցով: Հաշվետվությունը համարվում է ներկայացված Ֆինանսական դիտարկումների կենտրոնի էլեկտրոնային հասցեից հաշվետվություն տրամադրող անձի էլեկտրոնային հասցեին հետադարձ փոստի ստացման պահին: Եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը հետ է ուղարկվում հաշվետվություն տրամադրող անձին (հաշվետվության մեջ տեխնիկական սխալի առկայության պատճառով), ապա հաշվետվությունը համարվում է տվյալների բազա չմուտքագրված, իսկ ստացումը՝ չհաստատված, բացառությամբ Կենտրոնական բանկի մուտքի մոտ դրված «ՍիԲիէյՆեթ» ցանցի տերմինալի միջոցով ներկայացված հաշվետվությունների,

գ. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով, որի դեպքում լրացվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքում հրապարակված կամ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվետվական ձևերի պաշտպանված էլեկտրոնային տարբերակները, որոնք փոփոխելը արգելվում է: Հաշվետվական ձևն ուղարկվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի ծրագրային համակարգի միջոցով և ներկայացված է համարվում ծրագրային համակարգի «Ուղարկման կարգավիճակը» դաշտում «Ուղարկված է» նշման առկայության դեպքում: Եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը հետ է ուղարկվում հաշվետվություն տրամադրող անձին (հաշվետվության մեջ տեխնիկական սխալի առկայության պատճառով), ապա հաշվետվությունը համարվում է տվյալների բազա չմուտքագրված, իսկ ստացումը՝ չհաստատված: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով ուղարկվող հաշվետվությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու վերաբերյալ» կարգը,

դ. ֆաքսի միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային տարբերակն ուղարկվում է ՖԴԿ ֆաքսի համարին և ներկայացված է համարվում ֆաքսի առաքման անդորրագրի ստացման պահին: Այս դեպքում հաշվետվությունը սույն կարգի 4.1 ենթակետի «ա», «բ», «գ» կամ «ե» պարբերություններից որևէ մեկով սահմանված կարգով մինչև տվյալ ամսվա վերջին օրը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,

ե. փոստի միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային և էլեկտրոնային (կրիչով) տարբերակներն ուղարկվում են Ֆինանսական դիտարկումների կենտրոնի փոստային հասցեին և ներկայացված են համարվում այն «Հայփոստի» բաժանմունք ներկայացնելու և համապատասխան անդորրագիր ստանալու պահին,

զ. Ֆինանսական դիտարկումների կենտրոնի էլեկտրոնային փոստի (info_fiu@cba.am) միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակն ուղարկվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի էլեկտրոնային հասցեին և ներկայացված է համարվում նույն էլեկտրոնային հասցեից հետադարձ փոստի ստացման պահին: Այդ դեպքում հաշվետվությունը սույն կարգի 4.1 ենթակետի «ա», «բ», «գ» կամ «ե» պարբերություններից որևէ մեկով սահմանված կարգով մինչև տվյալ ամսվա վերջին օրը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

2) Սույն կարգը հաստատած Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշման 3-րդ հավելվածի համաձայն՝ հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետում հաշվետվություն տրամադրող անձը ներկայացված հաշվետվության մեջ սխալ կամ թերացում հայտնաբե-

րելու դեպքում ներկայացնում է հաշվետվության ուղղված տարբերակը՝ պահպանելով սույն կարգի 4.1 կետով սահմանված հաշվետվության անվանումը և ավելացնելով ուղղման հերթական համարը: Գործարքի վերաբերյալ հաշվետվության վերջնական տարբերակ է համարվում միևնույն անվանումն ունեցող հաշվետվությունների ամենավերջին հերթական համարն ունեցող հաշվետվությունը: Փոփոխված և (կամ) ամբողջականացված հաշվետվության հետ մեկտեղ հաշվետվություն տրամադրող անձը Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին ներկայացնում է գրություն՝ թույլ տրված սխալների ուղղման և նախորդ հաշվետվությունը չեղյալ համարելու վերաբերյալ:

3) Սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված հաշվետվությունում սխալ կամ թերացում հայտնաբերելու դեպքում հաշվետու անձը դիմում է ՀՀ կենտրոնական բանկի նախագահին՝ ուղարկված հաշվետվությունում ուղղում կատարելու խնդրանքով՝ նշելով սխալի կամ թերացման պատճառը և պահպանելով սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված ընթացակարգը:

Հավելված
«Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման
և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը» հավելված 2-ի

Ձեր հաշվառման համարը ՖԴԿ-ում

ՀԱՇՎԱՌՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի ֆինանսական
դիտարկումների կենտրոնի ղեկավար
պարոն _____-ին

Խնդրում եմ Ձեզ _____-ին տրամադրել հաշվառման համար:
Հաշվետվություն տրամադրող անձի լրիվ անվանումը

Հաշվետվություն տրամադրող անձի տվյալները՝

Գործունեության տեսակը _____

Գտնվելու վայրը _____

Գործունեության վայրը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Պետական գրանցման համարը _____

Նոտարի տվյալները՝

_____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍիԲիէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն

Նոտար՝ _____
ստորագրություն

__ _____ ____ թ.

քաղաք Երևան

Հավելված 3
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 233-Ն որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Սույն հավելվածի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների (թիվ 003 հաշվետվական ձևի) տրամադրման միասնական ժամկետների սահմանումը:

1. Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ժամկետները

1) Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը պարբերական բնույթ չի կրում:

2) Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են Օրենքով և (կամ) Լիազոր մարմնի ուղեցույցներով սահմանված կասկածելի գործարքի հիմքերի ու չափանիշների և (կամ) պարտադիր տեղեկացման գործարքների համար անհրաժեշտ գումարային սահմանաչափի առկայության դեպքում:

3) Հաշվետվություն տրամադրող անձը, գործարքում (գործառնությունում) կասկածելի գործարքի հիմքեր և չափանիշներ հայտնաբերելու դեպքում նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12.00-ն, ներկայացնում է այդ գործարքի վերաբերյալ հաշվետվություն:

4) Սույն կետով սահմանված գործաքների տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել.

ա. աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

բ. ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով,

գ. վիճելի (քննարկման ենթակա) դեպքերով և այլն:

5) Հաշվետվություն տրամադրող անձը, պարտադիր տեղեկացման գործարքի (գործառնության) վերաբերյալ տեղեկությունները Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացնում այդ գործարքը կնքելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

6) Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից ընդունվում են միայն այն անձի ստորագրությամբ ստացված հաշվետվությունները, ում տվյալները սույն որոշմամբ սահմանված կարգով նախապես ներկայացվել են Կենտրոնական բանկ:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«Խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձանց (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 004 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի թիվ 58-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»[*]

Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 71-րդ հոդվածները, ինչպես նաև ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 20-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հուլիսի 31-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.08.08 թ. (ՀՀԳՏ N28 (302), 27.08.08):

1. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 004 հաշվետվական ձև)»՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը»՝ համաձայն հավելված 2-ի (կցվում է):

3. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ժամկետները»՝ համաձայն հավելված 3-ի (կցվում է):

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի «Խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 004 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի մարտի 28-ի թիվ 140-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 58-Ն որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի օգոստոսի 31-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 օգոստոսի 2008 թ., N 234-Ն

Հավելված 1

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի
թիվ 234-Ն որոշմամբ

Նոր հաշվետվություն ◯
Լրացում հաշվետվություն ◯
Լրացվող հաշվետվության համարը ☐ և ☐
և հերթական լրացում հաշվետվության տարբերակը

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎ 004

Հաշվետվական ձևը լրացվում և ներկայացվում է խաղատների, շահումով խաղ կազմակերպող անձանց, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձանց կողմից՝ սույն ձևի լրացման և ներկայացման ուղեցույցի համաձայն

Հաշվետվական ձևում «»-ով նշված են պարտադիր տեղեկացման գործարքների համար անհրաժեշտ լրացման դաշտերը*

1. ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

***1.1. Գործարքի կատարման ամսաթիվը** ☐☐ / ☐☐ / ☐☐☐☐ Նշեք վերջին խաղադրույքի ամսաթիվը
Լրացրեք 1.2 և 1.3 կետերից միայն մեկը
օ օ / ա ա / տ տ տ տ

***1.2. Պարտադիր տեղեկացման գործարք** ☐	**1.3. Կասկածելի գործարք** ☐

1.3.1. Գործարքը կասկածելի համարելու հիմքերը և չափանիշները
Հատկացված դաշտում մուտքագրվող տեղեկատվությունը չտեղավորվելու դեպքում ավելացրեք համարակալված թերթ, որի ձախ անկյունում նշեք 1.3.1, և լրացրեք անհրաժեշտ տեղեկությունները. էջը համարակալեք՝ սկսած 4-ից

1.3.2. Գործարքը կասեցվել է ☐	**1.3.3. Դադարեցվել է** ☐

1.3.4. Կասեցման կամ դադարեցման ամսաթիվը և ժամկետը

օ օ / ա ա / տ տ տ տ և օր

1.3.5. Չկատարված կամ չավարտված գործարք

*1.4. Շահումով խաղի տեսակը (տեսակները)

Նշեք շահումով այն խաղերի տեսակները, որին մասնակցել է խաղացողը:
Նշում կատարեք այն վանդակում, որին համապատասխանող խաղին մասնակցել է խաղացողը:
Ըստ անհրաժեշտության՝ ավելացրեք նոր դաշտեր:

1.4.1. Կենդանի խաղ 1.4.2. Մեքենայացված խաղ 1.4.3. Բինգո խաղ

*1.5.1. Խաղացողի կողմից գնված խաղանիշերի (միավորների) ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)

*1.5.2. Շահումների (խաղադրույքների) գումարը (ՀՀ դրամ)

1.6.1. Գնված խաղանիշերի (միավորների) համար վճարման եղանակը

Կանխիկ

Անկախիկ Նշեք անկանխիկ վճարման եղանակը

1.6.2. Շահումների վճարման եղանակը

Կանխիկ

Անկախիկ Նշեք անկանխիկ վճարման եղանակը

2. ՀԱՃԱԽՈՐԴԻ (ԽԱՂԱՑՈՂԻ) ՏՎՅԱԼՆԵՐԸ

*2.1. Անուն *2.2. Ազգանուն

Նշեք գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի սեռը և ընտանեկան դրությունը և

*2.3. Բնակության վայրը

Լրացրեք բնակարանը, շենքը, փողոցը Քաղաքը / գյուղը Երկիրը

2.4. Ծննդյան ամսաթիվը

օ օ / ա ա / տ տ

2.5. Քաղաքացիությունը

Երկիրը

2.6. Սոցիալական քարտի համարը

*2.7.1. Փաստաթղթի համարը

*2.7.2. Տրված է ում կողմից և երբ

օ օ / ա ա / տ տ

2.8.1. Բանկային հաշվի համարը

2.8.2. Բանկի անվանումը և երկիրը

3. ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԿԱՐԵՎՈՐՎՈՂ՝ ԳՈՐԾԱՐՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Հատկացված դաշտում մուտքագրվող տեղեկատվությունը չտեղավորվելու դեպքում ավելացրեք համարակալված թերթ, որի ձախ անկյունում նշեք 3, և լրացրեք անհրաժեշտ տեղեկությունները)

*4.ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

*4.1. Անուն *4.2. Ազգանուն

*4.3. Լրացման ամսաթիվը

օ օ / ա ա / տ տ

Ստորագրություն

Կ.Տ

*4.4. Հաշվետու անձի հաշվառման համարը ՖԴԿ-ում

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
Ֆինանսական դիտարկումների կենտրոն
Վ. Սարգսյան 6, Երևան 375010
Հեռ. 545088, Էլ. փոստ info_fiu@cba.am

Հավելված


«Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 004 հաշվետվական ձև)» հավելված 1-ի

ԹԻՎ 004 ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՈՒՂԵՑՈՒՅՑ)

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն հաշվետվական ձևը լրացնել միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնից (այսուհետ նաև՝ ՖԴԿ) «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգի» հիման վրա հաշվառման հերթական համար ստանալուց հետո:

Հաշվետվական ձևի կառուցվածքը և ուղեցույցում հանդիպող հասկացությունները



Լրացրեք սույն հաշվետվական ձևը, եթե Ձեր կազմակերպությունը (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձ կամ հաշվետու անձ) իրականացնում է՝

1) խաղատան կազմակերպման գործունեություն,

2) շահումով խաղի (խաղերի), ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղի (խաղերի) կազմակերպման գործունեություն:

1. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հետևյալ 2 դեպքերում.

1) եթե խաղասրահում հաճախորդի կողմից՝

ա. խաղանիշերի (միավորների) մեկ գնումը կամ 1 միլիոն դրամը գերազանցող խաղանիշերի (միավորների) առաջին գնմանը հաջորդող 24 ժամվա ընթացքում խաղանիշերի (միավորների) գնումների հանրագումարը գերազանցում է 20 միլիոն դրամը.

բ. ստացված մեկ շահումը կամ 1 միլիոն դրամը գերազանցող ստացված առաջին շահումին հաջորդող 24 ժամվա ընթացքում ստացված շահումների հանրագումարը գերազանցում է 20 միլիոն դրամը.

2) եթե խաղանիշերի (միավորների) գնումներում, խաղադրույքներում կամ շահումներում առկա է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և (կամ) Լիազոր մարմնի ուղեցույցերով սահմանված կասկածելի գործարքների հիմքերից և չափանիշներից առնվազն մեկը՝ անկախ նրանից, թե գործարքի գումարը 20 միլիոն դրամը գերազանցում է, թե ոչ:

2. Եթե հաշվետվությունը ներկայացվում է որպես կասկածելի գործարք, ապա հաշվետվական ձևի բոլոր դաշտերը համարվում են լրացման համար պարտադիր: Եթե հաշվետվությունը ներկայացվում է որպես պարտադիր տեղեկացման գործարք, ապա պարտադիր լրացման ենթակա են միայն աստղանիշով դաշտերը, սակայն, եթե պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների դեպքում հնարավոր չէ լրացնել տվյալ դաշտը, ապա տվյալ դաշտում նշվում է աստղանիշ, և բացատրություն է տրվում հաշվետվական ձևի 4-րդ բաժնում:

3. Սույն հաշվետվական ձևը պարբերական բնույթ չի կրում, այլ լրացվում է միայն 1-ին կետում նշված գործարքների (գործառնությունների) առկայության դեպքում:

4. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հնարավորինս պարզ, հակիրճ և ընթեռնելի հայերենով:

5. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հետևյալ երկու տարբերակներից որևէ մեկով.

1) թղթային տարբերակ. հաշվետվական ձևի թղթային տարբերակը կարող եք ձեռք բերել.

ա. ՖԴԿ-ին դիմելու միջոցով.

բ. ՖԴԿ (www.cba.am/fmc/index.htm) ինտերնետային կայքից ելքագրելու միջոցով:

1.1) Հաշվետվական ձևի թղթային տարբերակը լրացրեք գրիչով:

1.2) Բովանդակային ուղղումներ կատարելու դեպքում լրացրեք հաշվետվական նոր ձև: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրեք այդ ուղղումների կողքին:

1.3) Հաշվետվական ձևը լրացրեք թղթային տարբերակով տրված կետերի սահմաններում: Նոր բաժինների լրացման անհրաժեշտության դեպքում օգտվեք հավելյալ թղթերից: Այդ թղթերի վրա նշեք, թե որ բաժինը և (կամ) կետն եք լրացնում, ստորագրեք դրանք և որպես հավելված կցեք հիմնական հաշվետվական ձևին:

1.4) Այն դեպքում, երբ հաշվետվական ձևի կետերի սահմանները բավարար չեն, այն լրացրեք լրացուցիչ թղթերի վրա հետևյալ կերպ՝ թղթի ձախ կողմում նշեք, թե որ կետին է վերաբերում տեղեկատվությունը, թերթերի համարակալումը շարունակեք հաշվետվական ձևի վերջին էջի համարին հաջորդող հերթական համարից սկսած:

2) էլեկտրոնային տարբերակ. հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակը կարող եք ձեռք բերել.

ա. ՖԴԿ-ին դիմելու միջոցով.

բ. ՖԴԿ (www.cba.am/fmc/index.htm) ինտերնետային կայքից ելքագրելու միջոցով:

2.1) Հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակը լրացրեք աղյուսակը ներառող պատուհանները ակտիվացնելու և տվյալները մուտքագրելու միջոցով:

2.2) Կախված նրանից, թե որ կետերը ներառող պատուհաններում եք նշումներ կատարել, կակտիվացան միայն այն պատուհանները (ավտոմատացված ծրագրային համակարգի ներդնումից հետո), որոնց աղյուսակները փոխլրացնում են (չեն բացառում) միմյանց:

2.3) Աղյուսակները ներառող պատուհանները, ըստ դրանցում լրացվող նյութի ծավալի, ընդլայնվում են:

6. Հաշվետվական ձևի ներկայացման ժամկետները սահմանված են սույն որոշման հավելված 3-ում:

7. Հաշվետվական ձևի ներկայացման եղանակները սահմանված են սույն որոշման հավելված 2-ում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8. Նոր հաշվետվություն կամ «Լրացում հաշվետվություն»: Յուրաքանչյուր հաշվետվություն լրացնելու համար անհրաժեշտ է կատարել նշում այն մասին, թե արդյոք դա նոր հաշվետվություն է, թե նախկինում արդեն տրամադրված «Լրացում հաշվետվություն»:

1) Եթե արդեն իսկ տրամադրված հաշվետվության հետ կապված՝ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ կամ փոփոխված տեղեկատվություն, ապա անհրաժեշտ է կատարել նշում «Լրացում հաշվետվություն» կետում: Համապատասխանաբար էլեկտրոնային տարբերակում կավելանան նախկինում ուղարկված հաշվետվության անվանումը և «լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտերը: «Հաշվետվության անվանումը» դաշտում նույնությամբ լրացվում է այն հաշվետվության էլեկտրոնային ֆայլի անվանումը, որին որպես լրացում ուղարկվում է «Լրացում հաշվետվությունը»: «Լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտում պետք է նշել (թվերով), թե որերորդ «Լրացում հաշվետվությունն» է ներկայացվում:

2) Լրացում հաշվետվությունը պետք է պարունակի նախկինում տրամադրված ամբողջ տեղեկատվությունը՝ կատարված փոփոխությունը ներառյալ:

3) Գործարքի վերաբերյալ հաշվետվության վերջնական տարբերակ է համարվում միևնույն անվանում ունեցող ֆայլերի «լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտում ամենավերջին հերթական համարն ունեցող ֆայլը:

4) Որպես լրացում է համարվում այն տեղեկատվությունը, որը՝

ա. հիմնական հաշվետվությունը լրացնելու պահին հասանելի չէ կամ հնարավոր չէ ստանալ, այսինքն, երբ հաշվետվությունը գործարքը կատարելու փաստի հիման վրա պետք է ներկայացվի ՖԴԿ-ին համապատասխան ժամկետում, սակայն պարտադիր լրացման ենթակա դաշտերի համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման նպատակով հարցումներ են կատարվել հաճախորդին կամ այլ անձանց.

բ. ներկայացվում է ՖԴԿ հարցման հիման վրա. եթե հարցվող տեղեկատվության համար համապատասխան դաշտեր չկան, ապա տեղեկատվությունը լրացվում է 4-րդ բաժնում.

գ. վերաբերում է կնքված, սակայն դեռևս չկատարված գործարքին. այս դեպքում նշում է կատարվում չավարտված կամ չկատարված գործարք դաշտում, իսկ 4-րդ բաժնում նշվում է գործարքի ընդհատման պատճառը (օրինակ՝ հաճախորդի կողմից պայմանագրի միակողմանի լուծում).

դ. ներառում է հաշվետու անձի կողմից կարևորվող այլ տվյալներ. այդ տվյալների տրամադրման անհրաժեշտությունն առաջանում է հաշվետու անձի կողմից ստացված նոր տեղեկատվության՝ ՖԴԿ-ին ներկայացման հանգամանքով, որոնք չեն ներառում պարտադիր լրացման ենթակա դաշտերի տեղեկատվությունը:

9. (1.1) Շահումը ստանալու գործարքի կնքման ամսաթիվ: Այս կետում նշեք.

1) պարտադիր տեղեկացման գործարքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու դեպքում՝ հաճախորդի կողմից 20 միլիոն դրամը գերազանցող խաղանիշերի (միավորների) մեկ գնման (մեկ շահման)

կամ խաղանիշերի (միավորների) վերջին այն գնման (վերջին շահման) կատարման ամսաթիվը, ամիսը, տարին (թվերով), որից սկսած՝ հանրագումարը գերազանցել է 20 միլիոն դրամը.

2) կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու դեպքում՝ խաղանիշերի (միավորների) այն գնման, խաղադրույքի կամ շահման ամսաթիվը, ամիսը, տարին, որից առաջացել է կասկածը:

10. (1.2) Պարտադիր տեղեկացման գործարք: Այս կետում նշում կատարեք, եթե խաղասրահում խաղացողի կողմից.

1) խաղանիշերի (միավորների) մեկ գնումը կամ 1 միլիոն դրամը գերազանցող խաղանիշերի (միավորների) առաջին գնմանը հաջորդող 24 ժամվա ընթացքում խաղանիշերի (միավորների) գնումների հանրագումարը գերազանցում է 20 միլիոն դրամը.

2) ստացված մեկ շահումը կամ 1 միլիոն դրամը գերազանցող ստացված առաջին շահումին հաջորդող 24 ժամվա ընթացքում ստացված շահումների հանրագումարը գերազանցում է 20 միլիոն դրամը.

3) 1.2 կետում նշում կատարելու դեպքում 1.3 կետում նշում մի կատարեք: Այս կետում նշում կատարելու դեպքում լրացրեք միայն «*» -ով նշված դաշտերը.

4) եթե գործարքի (գործառնության) վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում եք և՛ որպես պարտադիր, և՛ որպես կասկածելի, ապա բաց թողեք այս կետը և նշում կատարեք 1.3 կետում ու շարունակեք հաշվետվական ձևը լրացնել որպես կասկածելի գործարք (գործառնություն):

11. (1.3) Կասկածելի գործարք: Այս կետում նշում կատարելու դեպքում 1.2 կետում նշում մի կատարեք: Նշում կատարեք այն բոլոր դեպքերում, երբ գործարքի կնքման կամ իրականացման պայմաններում առկա է կասկածելի գործարքի հիմքերից և չափանիշներից առնվազն մեկը:

1) Այս կետում նշում կատարեք նաև այն դեպքերում, երբ գործարքում (գործառնությունում) առկա են և՛ պարտադիր տեղեկացման գործարքի, և՛ կասկածելի գործարքի միաժամանակյա առկայությունը վկայող հանգամանքներ: Այս դեպքում մի նշեք 1.2 կետը:

2) Այս կետում նշում կատարելու դեպքում նշեք նաև 1.3.1 կետում կասկածի հիմքերը և չափանիշները, ինչպես նաև նշեք, թե Ձեր կարծիքով այդ կասկածը որն է:

3) Եթե Ձեր կողմից գործարքը կասեցվել կամ դադարեցվել է, ապա նշում կատարեք համապատասխան 1.3.2 և 1.3.3 կետերում և 1.3.4 կետում նշեք կասեցման կամ դադարեցման ամսաթիվը և ժամկետը:

4) 1.3.5 կետում նշում կատարեք, եթե ինչ-որ պատճառով գործարքը չի կատարվել կամ չի շարունակվել. եթե գործարքը չի կատարվել, ապա հաշվետվական ձևում լրացրեք այն տվյալները, որոնք հայտնի են դարձել գործարքի կնքման առաջարկի պահից սկսած մինչև հաճախորդի կողմից այն կատարելու մտադրությունից հրաժարվելու պահը: 3-րդ բաժնում նշեք, թե Ձեզ հայտնի ինչ պատճառներով այն չի կատարվել:

5) Այս կետում նշում կատարելու դեպքում ամբողջ հաշվետվությունը համարվում է կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն և 1.4 կետից սկսած՝ տեղեկությունները լրացվում են կասկածելի գործարքի վերաբերյալ:

12. (1.4) Շահումով խաղի տեսակը (տեսակները): Այս կետում նշեք շահումով խաղերի այն տեսակները, որին մասնակցել է խաղացողը: Լրացնել 1.4 կետում՝ նշում կատարելով նաև 1.4.1, 1.4.2 կամ 1.4.3 կետերում:

13. (1.4.1) Կենդանի խաղ: Այս կետում նշում կատարեք այն դեպքերում, երբ հաճախորդի կողմից խաղադրույք է կատարվել որևէ կենդանի խաղում:

14. (1.4.2) Մեքենայացված խաղ: Այս կետում նշում կատարեք այն դեպքում, երբ հաճախորդի կողմից խաղադրույք է կատարվել որևէ մեքենայացված խաղում:

15. (1.4.3) Բինգո խաղ: Այս կետում նշում կատարեք այն դեպքում, երբ հաճախորդի կողմից խաղադրույք է կատարվել բինգո խաղում:

1) Եթե առաջին խաղադրույքին հաջորդող 24 ժամվա ընթացքում խաղադրույքներ են կատարվել կենդանի խաղում, մեքենայացված խաղում և (կամ) բինգո խաղում, ապա միաժամանակ նշում կատարեք համապատասխան վանդակներում:

16. (1.5.1) Խաղացողի կողմից գնված խաղանիշերի (միավորների) ընդհանուր գումարը: Այս կետում նշեք խաղացողի կողմից 20 միլիոն դրամը գերազանցող խաղանիշերի (միավորների) միանվագ գնման գումարը կամ 1 միլիոն դրամը գերազանցող խաղանիշերի (միավորների) առաջին գնմանը հաջորդող 24 ժամվա ընթացքում 20 միլիոն դրամը գերազանցող խաղանիշերի (միավորների) գնումների հանրագումարը Հայաստանի Հանրապետության դրամով (թվերով): Կասկածելի գործարքի համար նշեք խաղանիշերի (միավորների) կասկածելի գումարը:

17. (1.5.2) Շահումների (խաղադրույքների) գումարը: Այս կետում նշեք խաղացողի կողմից 20 միլիոն դրամը գերազանցող ստացված միանվագ շահումի գումարը կամ 1 միլիոն դրամը գերազանցող առաջին շահումին հաջորդող 24 ժամվա ընթացքում 20 միլիոն դրամը գերազանցող ստացված շահումների հանրագումարը՝ Հայաստանի Հանրապետության դրամով (թվերով): Կասկածելի գործարքի համար նշեք կասկածելի շահումների գումարը 3-րդ բաժնում:

18. (1.6.1) Գնված խաղամիշերի (միավորների) համար վճարման եղանակը: Այս կետում, եթե խաղամիշերի գնման համար խաղացողի կողմից վճարումը կատարվել է կանխիկ, ապա նշում եք կատարում համապատասխան վանդակում, իսկ եթե անկանխիկ, ապա նշում եք կատարում համապատասխան վանդակում և, միաժամանակ, նշում եք անկանխիկ վճարման եղանակը (բանկային փոխանցում, չեկի դուրսգրում և այլն):

19. (1.6.2) Շահումների վճարման եղանակը: Այս կետում, եթե շահումի (շահումների) համար վճարումը կատարվել է կանխիկ, ապա նշում եք կատարում համապատասխան վանդակում, իսկ եթե անկանխիկ, ապա նշում եք կատարում համապատասխան վանդակում և, միաժամանակ, նշում եք անկանխիկ վճարման եղանակը (բանկային փոխանցում, չեկի դուրսգրում և այլն):

20. (2) Հաճախորդի (խաղացողի) տվյալները: Այս բաժնում նշում եք հաճախորդին նկարագրող տվյալները՝ հաճախորդների նույնականացմանը վերաբերող կարգի դրույթներին համապատասխան:

1) 2.6, 2.8.1 և 2.8.2 կետերում հաճախորդի (խաղացողի) սոցիալական քարտի համարը, բանկային հաշվի համարը և հաշիվը սպասարկող բանկի անվանումն ու երկիրը լրացվում են դրանց առկայության դեպքում: Եթե հաճախորդի (խաղացողի) մոտ առկա է երկու և ավելի հաշվի համար, ապա համարակալեք և նշեք դրանք 3-րդ բաժնում:

21. (3) Ձեր կողմից կարևորվող՝ գործարքին առնչվող այլ տեղեկություններ: Այս կետում լրացրեք այն տեղեկությունները, որոնք, Ձեր կարծիքով, կարող են օգտակար լինել ներկայացվող գործարքի մասին ավելի կոնկրետ պատկերացում կազմելու կամ գործարքը վերլուծելու համար. նշեք, թե լրացուցիչ տեղեկատվությունը որ բաժնի որ կետին է վերաբերում:

22. (4) Պատասխանատու աշխատակցի տվյալները: Այս կետում նշեք հաշվետու անձի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի պատասխանատու աշխատակցի տվյալները: Այդ աշխատակիցը պետք է ստորագրի լրացված հաշվետվական ձևը:

Հաշվետվական ձևի թղթային տարբերակը պետք է կնքված լինի հաշվետու անձի կնիքով:

23. (4.3) Լրացման ամսաթիվ: Այս կետում նշում եք սույն հաշվետվական ձևը լրացնելու ամսաթիվը, ամիսը, տարին (թվերով):

24. (4.4) Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարը ՖԴԿ-ում: Այս կետում նշում եք Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից Ձեզ տրված հաշվառման համարը (թվերով):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
Ֆինանսական դիտարկումների կենտրոն
Վ. Սարգսյան 6, Երևան 375010
Հեռ. 545088, Էլ. փոստ info_fiu@cba.am

Հավելված 2

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի
թիվ 234-Ն որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳ

Սույն կարգի նպատակն է՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման ընդհանուր համակարգի (այսուհետ՝ հաշվառում), ինչպես նաև պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների (թիվ 004 հաշվետվական ձևի) տրամադրման միասնական, կենտրոնացված կարգի ստեղծումն ու կիրարկումը:

1. Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ նաև Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառումը

1) Հաշվառումն իրականացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնում հաշվետվություն տրամադրող անձանց գրանցման միջոցով:

2) Հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառումն իրականացվում է հետևյալ փուլերով.

ա. հաշվետվություն տրամադրող անձանց կողմից դիմումների ներկայացում,

բ. հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառում:

2. Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից դիմումների ներկայացումը

1) Հաշվետվություն տրամադրող անձինք հաշվառման համար Ֆինանսական դիտարկումների կենտրոնին սույն կարգի հավելվածով սահմանված դիմումը ներկայացնում են գրավոր: Դիմումը ստորագրվում է հաշվետվություն տրամադրող անձի ղեկավարի կողմից և հավաստվում հաշվետվություն տրամադրող անձի կնիքով:

2) Հաշվառման դիմումը պետք է պարունակի՝

ա) հաշվետվություն տրամադրող անձի լրիվ անվանումը,

բ) հաշվետվություն տրամադրող անձի գործունեության տեսակը,

գ) հաշվետվություն տրամադրող անձի գտնվելու վայրը և գործունեության վայրը,

դ) հաշվետվություն տրամադրող անձի հարկ վճարողի հաշվառման համարը, պետական գրանցման համարը,

ե) հաշվետվություն տրամադրող անձի լիցենզիայի համարը,

զ) ներքին հսկողության ստորաբաժանման ղեկավարի կամ պատասխանատու անձի տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, պաշտոնը, էլեկտրոնային հասցեն, հեռախոսը, ստորագրությունը),

է) հաշվառման դիմումի լրացման օրը, ամիսը, տարեթիվը:

3. Ֆինանսական դիտարկումների կենտրոնում հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման իրականացումը

1) Սույն կարգով նախատեսված դիմումը լրացնելուց և Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացնելուց հետո հաշվետվություն տրամադրող անձին տրվում է հաշվառման համար:

2) Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարը զետեղվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի միասնական տեղեկատվական շտեմարանում:

3) Հաշվետվություն տրամադրող այն անձանց, որոնք համակցված չեն «ՍիԲիէյՆեթ» միջբանկային կորպորատիվ ցանցին և միաժամանակ հաշվետվությունը ներկայացնելու են էլեկտրոնային տարբերակով, տրամադրվում է նաև Կենտրոնական բանկի «ՍիԲիէյՆեթ» սերվերում գրանցված անհատական նույնականացնող (իդենտիֆիկացնող) «բանալի», որի առկայության դեպքում հնարավոր է Կենտրոնական բանկի տարածքում տեղակայված համակարգչից էլեկտրոնային տեսքով հաշվետվությունն ուղարկել Ֆինանսական դիտարկումների կենտրոն:

4) Հաշվետվություն տրամադրող այն անձանց, որոնք հաշվետվությունները ներկայացնելու են էլեկտրոնային փոստի միջոցով, տրամադրվում են Կենտրոնական բանկում տեղակայված ինտերնետային սերվերում հաշվառման ժամանակ գրանցված անհատական նույնականացնող (իդենտիֆիկացնող) տվյալներ, որոնց մուտքագրման դեպքում կնույնականացվի հաշվետվություն տրամադրող անձանց ինքնությունը:

5) Եթե հաշվետվություն տրամադրող անձը միացած է համակարգչային «ՍիԲիէյՆեթ» կորպորատիվ ցանցին, կարող է օգտագործել այդ ցանցը հաշվառման դիմումի, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարի և հաշվետվական ձևերի էլեկտրոնային տարբերակով ստացման և ուղարկման համար:

4. Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը

1) Տեղեկությունները Ֆինանսական դիտարկումների կենտրոն են ներկայացվում թղթային և (կամ) էլեկտրոնային տարբերակով: Ներկայացվող հաշվետվություններին (թղթային և էլեկտրոնային տարբերակի համար) տրվում է անվանում: Հաշվետվության անվանումն ունի հետևյալ կառուցվածքը.

Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարը ՖԴԿ-ում (8 նիշ)	գծիկ	հաշվետվության ուղարկման ամսաթիվը՝ օօ/աա/տտ (6 նիշ)	գծիկ	տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (3 նիշ)
XXXXXXXX	-	XXXXXX	-	XXX

Ընդ որում, հաշվետվական ձևը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում հետևյալ եղանակներից որևէ մեկով.

ա) ֆիզիկապես ներկայացնելու միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային և էլեկտրոնային (կրիչի վրա) տարբերակները Ֆինանսական դիտարկումների կենտրոն են ներկայացվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փաստաթղթերի շրջանառության բաժնի միջոցով՝ փակ, կնքված և ստորագրված ծրարներով: Նշված ծրարների վրա պետք է լրացված լինեն ուղարկողի անվանումը, գտնվելու վայրը, ուղարկման ամսաթիվը, ինչպես նաև հետևյալ նշումը՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին»: Հաշվետվությունը ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից ստացականի տրամադրման պահին,

բ) «ՍիԲիէյՆեթ» ցանցին համակցված լինելու դեպքում այդ ցանցի միջոցով, միաժամանակ այն հաշվետվություն տրամադրող անձանց համար, որոնք համակցված չեն «ՍիԲիէյՆեթ» ցանցին, կարող են ուղարկել հաշվետվական ձևերն էլեկտրոնային տարբերակով՝ Կենտրոնական բանկի մուտքի մոտ դրված «ՍիԲիէյՆեթ» ցանցի տերմինալի միջոցով: Հաշվետվությունը համարվում է ներկայացված Ֆինանսական դիտարկումների կենտրոնի էլեկտրոնային հասցեից հաշվետվություն տրամադրող անձի էլեկտրոնային հասցեին հետադարձ փոստի ստացման պահին: Եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը հետ է ուղարկվում հաշվետվություն տրամադրող անձին (հաշվետվության մեջ տեխնիկական սխալի առկայության պատճառով), ապա հաշվետվությունը համարվում է տվյալների բազա չմուտքագրված, իսկ ստացումը՝ չհաստատված, բացառությամբ Կենտրոնական բանկի մուտքի մոտ դրված «ՍիԲիէյՆեթ» ցանցի տերմինալի միջոցով ներկայացված հաշվետվությունների,

գ) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով, որի դեպքում լրացվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքում հրապարակված կամ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվետվական ձևերի պաշտպանված էլեկտրոնային տարբերակները, որոնք փոփոխելն արգելվում է: Հաշվետվական ձևն ուղարկվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի ծրագրային համակարգի միջոցով և ներկայացված է համարվում ծրագրային համակարգի «Ուղարկման կարգավիճակը» դաշտում «Ուղարկված է» նշման առկայության դեպքում: Եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը հետ է ուղարկվում հաշվետվություն տրամադրող անձին (հաշվետվության մեջ տեխնիկական սխալի առկայության պատճառով), ապա հաշվետվությունը համարվում է տվյալների բազա չմուտքագրված, իսկ ստացումը՝ չհաստատված: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով ուղարկվող հաշվետվությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու վերաբերյալ» կարգը,

դ) ֆաքսի միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային տարբերակն ուղարկվում է ՖԴԿ ֆաքսի համարին և ներկայացված է համարվում ֆաքսի առաքման անդորրագրի ստացման պահին: Այս դեպքում հաշվետվությունը սույն կարգի 4.1 ենթակետի «ա», «բ», «գ» կամ «ե» պարբերություններից որևէ մեկով սահմանված կարգով մինչև տվյալ ամսվա վերջին օրը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,

ե) փոստի միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային և էլեկտրոնային (կրիչով) տարբերակներն ուղարկվում են Ֆինանսական դիտարկումների կենտրոնի փոստային հասցեին և ներկայացված են համարվում այն «Հայփոստի» բաժանմունք ներկայացնելու և համապատասխան անդորրագիր ստանալու պահին,

զ) Ֆինանսական դիտարկումների կենտրոնի էլեկտրոնային փոստի (info_fiu@cba.am) միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակն ուղարկվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի էլեկտրոնային հասցեին և ներկայացված է համարվում նույն էլեկտրոնային հասցեից հետադարձ փոստի ստացման պահին: Այս դեպքում հաշվետվությունը սույն կարգի 4.1 ենթակետի «ա», «բ», «գ» կամ «ե» պարբերություններից որևէ մեկով սահմանված կարգով մինչև տվյալ ամսվա վերջին օրը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

2) Սույն կարգը հաստատած Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշման 3-րդ հավելվածի համաձայն հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետում հաշվետվություն տրամադրող անձը ներկայացված հաշվետվության մեջ սխալ կամ թերացում հայտնաբերելու դեպքում ներկայացնում է հաշվետվության ուղղված տարբերակը՝ պահպանելով սույն կարգի 4.1 կետով սահմանված հաշվետվության անվանումը և ավելացնելով ուղղման հերթական համարը: Գործարքի վերաբերյալ հաշվետվության վերջնական տարբերակ է համարվում միևնույն անվանումն ունեցող հաշվետվությունների ամենավերջին հերթական համարն ունեցող հաշվետվությունը: Փոփոխված և (կամ) ամբողջականացված հաշվետվության հետ մեկտեղ, հաշվետվություն տրամադրող անձը Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին ներկայացնում է գրություն՝ թույլ տրված սխալների ուղղման և նախորդ հաշվետվությունը չեղյալ համարելու վերաբերյալ:

3) Սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված հաշվետվությունում սխալ կամ թերացում հայտնաբերելու դեպքում հաշվետու անձը դիմում է ՀՀ կենտրոնական բանկի նախագահին՝ ուղարկված հաշվետվությունում ուղղում կատարելու խնդրանքով՝ նշելով սխալի կամ թերացման պատճառը և պահպանելով սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված ընթացակարգը:

<u>Հավելված</u>
«Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը» հավելված 2-ի

Ձեր հաշվառման համարը ՖԴԿ-ում

Հ Ա Շ Վ Ա Ռ Մ Ա Ն Դ Ի Մ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի ֆինանսական
դիտարկումների կենտրոնի ղեկավար
պարոն _____-ին

Խնդրում եմ Ձեզ _____-ին տրամադրել հաշվառման համար:
Հաշվետվություն տրամադրող անձի լրիվ անվանումը

Հաշվետվություն տրամադրող անձի տվյալները՝

Գործունեության տեսակը _____

Գտնվելու վայրը _____

Գործունեության վայրը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Պետական գրանցման համարը _____

Լիցենզիայի համարը _____

Պատասխանատու անձի (անձանց) տվյալները՝

1. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍիԲիէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն
2. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍիԲիէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն
3. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍիԲիէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն
4. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍիԲիէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն

Հաշվետվություն տրամադրող անձի
գործադիր մարմնի ղեկավար՝ _____
ստորագրություն

__ _____ ____ թ.

քաղաք Երևան

Հավելված 3

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի
թիվ 234-Ն որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Սույն հավելվածի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված՝ պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների (թիվ 004 հաշվետվական ձևի) տրամադրման միասնական ժամկետների սահմանումը:

1. Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ժամկետները

1) Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը պարբերական բնույթ չի կրում:

2) Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են Օրենքով և (կամ) Լիազոր մարմնի ուղեցույցներով սահմանված կասկածելի գործարքի հիմքերի ու չափանիշների և (կամ) պարտադիր տեղեկացման գործարքների համար անհրաժեշտ գումարային սահմանաչափի առկայության դեպքում:

3) Հաշվետվություն տրամադրող անձը, գործարքում (գործառնությունում) կասկածելի գործարքի հիմքեր և չափանիշներ հայտնաբերելու դեպքում, նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12.00-ն, ներկայացնում է այդ գործարքի վերաբերյալ հաշվետվություն:

4) Սույն կետով սահմանված գործաքների տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել.

ա) աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

բ) ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով,

գ) վիճելի (քննարկման ենթակա) դեպքերով և այլն:

5) Հաշվետվություն տրամադրող անձը պարտադիր տեղեկացման գործարքի (գործառնության) վերաբերյալ տեղեկությունները Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացնում այդ գործարքը կնքելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

6) Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից ընդունվում են միայն այն անձի ստորագրությամբ ստացված հաշվետվությունները, ում տվյալները, սույն որոշմամբ սահմանված կարգով, նախապես ներկայացվել են Կենտրոնական բանկ:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Վիճակախաղ կազմակերպող անձանց (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 005 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի թիվ 59-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաս-

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հուլիսի 31-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.08.08 թ. (ՀՀԳՏ N28 (302), 27.08.08):

տանի Հանրապետության օրենքի 16-րդ և 71-րդ հոդվածները, ինչպես նաև ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 20-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 005 հաշվետվական ձև)»՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը»՝ համաձայն հավելված 2-ի (կցվում է):

3. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ժամկետները»՝ համաձայն հավելված 3-ի (կցվում է):

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի փետրվարի 20-ի «Վիճակախաղ կազմակերպող անձանց (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 005 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի մարտի 28-ի թիվ 141-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 59-Ն որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի օգոստոսի 31-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 օգոստոսի 2008 թ., N 235-Ն

Հավելված 1

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի
թիվ 235-Ն որոշմամբ

Նոր հաշվետվություն ◯
Լրացում հաշվետվություն ◯
Լրացվող հաշվետվության համարը ☐ և ☐
և հերթական լրացում հաշվետվության տարբերակը

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎ 005

Հաշվետվական ձևը լրացվում և ներկայացվում է վիճակախաղ կազմակերպող անձանց կողմից՝ սույն ձևի լրացման և ներկայացման ուղեցույցի համաձայն

Հաշվետվական ձևում «»-ով նշված են պարտադիր տեղեկացման գործարքների համար անհրաժեշտ լրացման դաշտերը*

1. ՇԱՀՈՒՄԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

***1.1. Շահումը ստանալու գործարքի կնքման ամսաթիվը** ☐☐ / ☐☐ / ☐☐☐☐ (օօ / աա / տտտտ)

***1.2. Պարտադիր տեղեկացման գործարք** ☐	**1.3. Կասկածելի գործարք** ☐

1.3.1. Գործարքը կասկածելի համարելու հիմքերը և չափանիշները
Հատկացված դաշտում մուտքագրվող տեղեկատվությունը չտեղավորվելու դեպքում ավելացրեք համարակալված թերթ, որի ձախ անկյունում նշեք 1.3.1, և լրացրեք անհրաժեշտ տեղեկությունները

1.3.2. Գործարքը կասեցվել է ☐	**1.3.3. դադարեցվել է** ☐

1.3.4. Կասեցման կամ դադարեցման ամսաթիվը և ժամկետը

օ օ / ա ա / տ տ տ տ և օր

1.3.5. Չկատարված կամ չավարտված գործարք

*1.4. Վիճակախաղի տեսակը (տեսակները)

1.4.1. Ոչ խաղարկությամբ վիճակախաղ		
1.4.2. Խաղարկությամբ վիճակախաղ		
1.4.3. Համակցված վիճակախաղ		
1.4.4. Տոտալիզատոր		

*1.5. Շահման (շահումների) գումարը (*ՀՀ դրամ*)

*1.6. Շահման (շահումների) վճարման եղանակը

Կանխիկ Անկախիկ

Անկանխիկի վճարման եղանակը

2. ՀԱՃԱԽՈՐԴԻ (ՇԱՀՈՂԻ) ՏՎՅԱԼՆԵՐԸ

*2.1. Անուն *2.2. Ազգանուն

Նշեք գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի սեռը և ընտանեկան դրությունը և

*2.3. Բնակության վայրը

Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը Քաղաքը / գյուղը Երկիրը

*2.4. Ծննդյան ամսաթիվը

օ օ / ա ա / տ տ

* 2.5. Քաղաքացիությունը

Երկիրը

*2.6. Սոցիալական քարտի համարը

*2.7. Անձը հաստատող փաստաթղթի անվանումը

*2.7.1. Փաստաթղթի համարը

*2.7.2. Տրված է ում կողմից և երբ

օ օ / ա ա / տ տ

2.8.1. Բանկային հաշվի համարը

2.8.2. Բանկի անվանումը և երկիրը

3. ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԿԱՐԵՎՈՐՎՈՂ՝ ԳՈՐԾԱՐՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Հատկացված դաշտում մուտքագրվող տեղեկատվությունը չտեղավորվելու դեպքում ավելացրեք համարակալված թերթ, որի ձախ անկյունում նշեք՝ 3 և լրացրեք անհրաժեշտ տեղեկությունները)

*4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

*4.1. Անուն *4.2. Ազգանուն

*4.3. Լրացման ամսաթիվը

օ օ / ա ա / տ տ

Ստորագրություն

Կ.Տ

*4.4. Հաշվետու անձի հաշվառման համարը ՖԴԿ-ում

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
Ֆինանսական դիտարկումների կենտրոն
Վ. Սարգսյան 6, Երևան 375010
Հեռ. 545088, Էլ. փոստ info_fiu@cba.am


Հավելված
«Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 005 հաշվետվական ձև)» հավելված 1-ի

ԹԻՎ 005 ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՈՒՂԵՑՈՒՅՑ)

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն հաշվետվական ձևը լրացնել միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնից (այսուհետ նաև՝ ՖԴԿ) «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգի» հիման վրա հաշվառման հերթական համար ստանալուց հետո:

Հաշվետվական ձևի կառուցվածքը և ուղեցույցում հանդիպող հասկացությունները



Լրացրեք սույն հաշվետվական ձևը, եթե Ձեր կազմակերպությունը (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձ կամ հաշվետու անձ) իրականացնում է վիճակախաղի կազմակերպման գործունեություն:

1. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հետևյալ 2 դեպքում.

1) եթե որպես մեկանգամյա շահում ստացված անշարժ գույքի պայմանագրային արժեքը գերազանցում է 50 միլիոն դրամը, կամ եթե մեկ շահման կամ մեկ անձի կողմից մեկամսյա ժամկետում շահումների հանրագումարը դրամային արտահայտությամբ գերազանցում է 20 միլիոն դրամը,

2) եթե շահումում առկա է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և (կամ) Լիազոր մարմնի ուղեցույցներով սահմանված կասկածելի գործարքի հիմքերից և չափանիշներից առնվազն մեկը՝ անկախ նրանից, թե գործարքի գումարը 20 միլիոն դրամը գերազանցում է, թե ոչ:

2. Եթե հաշվետվությունը ներկայացվում է որպես կասկածելի գործարք, ապա հաշվետվական ձևի բոլոր դաշտերը համարվում են լրացման համար պարտադիր: Եթե հաշվետվությունը ներկայացվում է որպես պարտադիր տեղեկացման գործարք, ապա պարտադիր լրացման ենթակա են միայն աստղանիշով դաշտերը, սակայն եթե պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների դեպքում հնարավոր չէ լրացնել տվյալ դաշտը, ապա տվյալ դաշտում նշվում է աստղանիշ, և բացատրություն է տրվում հաշվետվական ձևի 3-րդ բաժնում:

3. Սույն հաշվետվական ձևը պարբերական բնույթ չի կրում, այլ լրացվում է միայն 1-ին կետում նշված գործարքների (գործառնությունների) առկայության դեպքում:

4. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հնարավորինս պարզ, հակիրճ, ընթեռնելի հայերենով:

5. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հետևյալ երկու տարբերակներից որևէ մեկով.

1) թղթային տարբերակ. հաշվետվական ձևի թղթային տարբերակը կարող եք ձեռք բերել.

ա. ՖԴԿ-ին դիմելու միջոցով.

բ. ՖԴԿ (www.cba.am/fmc/index.htm) ինտերնետային կայքից ելքագրելու միջոցով:

1.1) Հաշվետվական ձևի թղթային տարբերակը լրացրեք գրիչով:

1.2) Բովանդակային ուղղումների կատարման դեպքում լրացրեք հաշվետվական նոր ձև: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրեք այդ ուղղումների կողքին:

1.3) Հաշվետվական ձևը լրացրեք թղթային տարբերակով տրված կետերի սահմաններում: Նոր բաժինների լրացման անհրաժեշտության դեպքում օգտվեք հավելյալ թղթերից: Այդ թղթերի վրա նշեք, թե որ բաժինն եք լրացնում, ստորագրեք դրանք և որպես հավելված կցեք հիմնական հաշվետվական ձևին:

1.4) Այն դեպքում, երբ հաշվետվական ձևի կետերի սահմանները բավարար չեն, այն լրացրեք լրացուցիչ թղթերի վրա հետևյալ կերպ՝ թղթի ձախ կողմում նշեք, թե որ կետին է վերաբերում տեղեկատվությունը, թերթերի համարակալումը շարունակեք հաշվետվական ձևի վերջին էջի համարին հաջորդող հերթական համարից սկսած:

2) էլեկտրոնային տարբերակ. հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակը կարող եք ձեռք բերել.

ա. ՖԴԿ-ին դիմելու միջոցով.

բ. ՖԴԿ (www.cba.am/fmc/index.htm) ինտերնետային կայքից ելքագրելու միջոցով:

2.1) Հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակը լրացրեք աղյուսակը ներառող պատուհանները ակտիվացնելու և տվյալները մուտքագրելու միջոցով:

2.2) Կախված նրանից, թե որ կետերը ներառող պատուհաններում եք նշումներ կատարել, կակտիվանան միայն այն պատուհանները (ավտոմատացված ծրագրային համակարգի ներդնումից հետո), որոնց աղյուսակները փոխլրացնում են (չեն բացառում) միմյանց:

2.3) Աղյուսակները ներառող պատուհանները, ըստ դրանցում լրացվող նյութի ծավալի, ընդլայնվում են:

6. Հաշվետվական ձևի ներկայացման ժամկետները սահմանված են սույն որոշման հավելված 3-ում:

7. Հաշվետվական ձևի ներկայացման եղանակները սահմանված են սույն որոշման հավելված 2-ում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8. Նոր հաշվետվություն կամ «Լրացում հաշվետվություն»: Յուրաքանչյուր հաշվետվություն լրացնելու համար անհրաժեշտ է կատարել նշում այն մասին, թե արդյոք դա նոր հաշվետվություն է, թե նախկինում արդեն տրամադրված «Լրացում հաշվետվություն»:

1) Եթե արդեն իսկ տրամադրված հաշվետվության հետ կապված՝ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ կամ փոփոխված տեղեկատվություն, ապա անհրաժեշտ է կատարել նշում «Լրացում հաշվետվություն» կետում: Համապատասխանաբար էլեկտրոնային տարբերակում կավելանան նախկինում ուղարկված հաշվետվության անվանումը և «լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտերը: «Հաշվետվության անվանումը» դաշտում նույնությամբ լրացվում է այն հաշվետվության էլեկտրոնային ֆայլի անվանումը, որին որպես լրացում ուղարկվում է «Լրացում հաշվետվությունը»: «Լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտում պետք է նշել (թվերով), թե որերորդ «լրացում հաշվետվությունն» է ներկայացվում:

2) Լրացում հաշվետվությունը պետք է պարունակի նախկինում տրամադրված ամբողջ տեղեկատվությունը՝ ներառյալ կատարված փոփոխությունը:

3) Գործարքի վերաբերյալ հաշվետվության վերջնական տարբերակ է համարվում միևնույն անվանում ունեցող ֆայլերի «լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտում ամենավերջին հերթական համարն ունեցող ֆայլը:

4) Որպես լրացում է համարվում այն տեղեկատվությունը, որը՝

ա. հիմնական հաշվետվությունը լրացնելու պահին հասանելի չէ կամ հնարավոր չէ ստանալ, այսինքն՝ երբ հաշվետվությունը գործարքը կատարելու փաստի հիման վրա պետք է ներկայացվի ՖԴԿ-ին համապատասխան ժամկետում, սակայն պարտադիր լրացման ենթակա դաշտերի համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման նպատակով հարցումներ են կատարվել հաճախորդին կամ այլ անձանց.

բ. ներկայացվում է ՖԴԿ հարցման հիման վրա. եթե հարցվող տեղեկատվության համար համապատասխան դաշտեր չկան, ապա տեղեկատվությունը լրացվում է 4-րդ բաժնում.

գ. վերաբերում է կնքված, սակայն դեռևս չկատարված գործարքին. այս դեպքում նշում է կատարվում չավարտված կամ չկատարված գործարք դաշտում, իսկ 4-րդ բաժնում նշվում է գործարքի ընդհատման պատճառը (օրինակ՝ հաճախորդի կողմից պայմանագրի միակողմանի լուծում).

դ. ներառում է հաշվետու անձի կողմից կարևորվող այլ տվյալներ. այդ տվյալների տրամադրման անհրաժեշտությունն առաջանում է հաշվետու անձի կողմից ստացված նոր տեղեկատվության՝ ՖԴԿ-ին ներկայացման հանգամանքով, որոնք չեն ներառում պարտադիր լրացման ենթակա դաշտերի տեղեկատվությունը:

9. (1.1) Շահումը ստանալու գործարքի կնքման ամսաթիվը: Այս կետում նշեք.

1) պարտադիր տեղեկացման գործարքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու դեպքում՝ հաճախորդի կողմից 20 միլիոն դրամը գերազանցող վերջին շահումը ստանալու ամսաթիվը, ամիսը, տարին (թվերով).

2) կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու դեպքում՝ այն շահման ամսաթիվը, ամիսը, տարին, որից առաջացել է կասկածը:

10. (1.2) Պարտադիր տեղեկացման գործարք: Այս կետում նշում եք կատարում այն բոլոր դեպքերում, երբ որպես մեկանգամվա շահում ստացված անշարժ գույքի պայմանագրային արժեքը գերազանցում է 50 միլիոն դրամը, կամ եթե վիճակախաղում մեկ շահման կամ մեկ ամսվա ընթացքում միևնույն անձի շահումների հանրագումարը դրամային արտահայտությամբ գերազանցում է 20 միլիոն դրամը.

1) Այս կետում նշում կատարելու դեպքում 1.3 կետում նշում մի կատարեք: Այս կետում նշում կատարելու դեպքում լրացրեք միայն « * » -ով նշված դաշտերը:

2) Եթե գործարքի (գործառնության) վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում եք և՛ որպես պարտադիր, և՛ որպես կասկածելի, ապա բաց թողեք այս կետը և նշում կատարեք 1.3 կետում, շարունակեք հաշվետվական ձևը լրացնել որպես կասկածելի գործարք (գործառնություն):

11. (1.3) Կասկածելի գործարք: Այս կետում նշում կատարելու դեպքում 1.2 կետում նշում մի կատարեք: Նշում կատարեք այն բոլոր դեպքերում, երբ շահման պայմաններում առկա են կասկածի հիմքերից և չափանիշներից առնվազն մեկը:

1) Այս կետում նշում կատարեք նաև այն դեպքերում, երբ շահման պայմաններում առկա են և՛ պարտադիր տեղեկացման գործարքի, և՛ կասկածելի գործարքի միաժամանակյա առկայությունը վկայող հանգամանքներ: Այս դեպքում մի նշեք 1.2 կետը:

2) Այս կետում նշում կատարելու դեպքում նշեք նաև 1.3.1 կետում կասկածի հիմքերը և չափանիշները, ինչպես նաև նշեք, թե Ձեր կարծիքով՝ այդ կասկածը որն է:

3) Եթե Ձեր կողմից գործարքը կասեցվել կամ դադարեցվել է, ապա նշում կատարեք համապատասխան 1.3.2 և 1.3.3 կետերում, և 1.3.4 կետում նշեք կասեցման կամ դադարեցման ամսաթիվը և ժամկետը:

4) 1.3.5 կետում նշում կատարեք, եթե ինչ-որ պատճառով գործարքը չի կատարվել կամ չի շարունակվել, եթե գործարքը չի կատարվել, ապա հաշվետվական ձևում լրացրեք այն տվյալները, որոնք հայտնի են դարձել գործարքի կնքման առաջարկի պահից սկսած մինչև հաճախորդի կողմից այն կատարելու մտադրությունից հրաժարվելու պահը: 3-րդ բաժնում նշեք, թե Ձեզ հայտնի ինչ պատճառներով այն չի կատարվել:

5) Այս կետում նշում կատարելու դեպքում ամբողջ հաշվետվությունը համարվում է կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն, և 1.4 կետից սկսած տեղեկությունները լրացվում են կասկածելի գործարքի վերաբերյալ:

12. (1.4) Վիճակախաղի տեսակը: Այս կետում նշեք վիճակախաղի այն տեսակը (տեսակները), որի արդյունքում կայացել է շահումը (շահումները): Նշեք նաև, թե վիճակախաղի տեսակին համապատասխան ինչ խաղարկության արդյունքում է ստացվել շահումը կամ այդ մասով գումարը (օրինակ՝ մարտի 8-ին նվիրված հեռուստախաղի խաղարկությունում):

13. (1.5) Շահման (շահումների) գումարը: Այս կետում նշեք շահման (շահումների) ընդհանուր գումարը՝ Հայաստանի Հանրապետության դրամային արժեքով (թվերով), իսկ գույքային շահման դեպքում այս կետը բաց թողեք և շահման տեսակի ու նկարագրության մասին տվյալները լրացրեք 3-րդ բաժնում:

14. (1.6) Շահման (շահումների) վճարման եղանակը: Այս կետում եթե շահման (շահումների) վճարումը կատարվել է կանխիկ, ապա նշում եք կատարում համապատասխան վանդակում, իսկ եթե՝ անկանխիկ, ապա նշում եք կատարում համապատասխան վանդակում և, միաժամանակ, նշում եք անկանխիկ վճարման եղանակը (բանկային փոխանցում, չեկի դուրսգրում և այլն):

15. (2) Հաճախորդի (շահողի) տվյալները: Այս բաժնում նշում եք հաճախորդին (շահողին) նկարագրող տվյալները՝ հաճախորդների նույնականացմանը վերաբերող կարգի դրույթներին համապատասխան:

1) 2.6, 2.8.1 և 2.8.2 կետերում հաճախորդի (խաղացողի) սոցիալական քարտի համարը, բանկային հաշվի համարը և հաշիվը սպասարկող բանկի անվանումն ու երկիրը լրացվում են դրանց առկայության դեպքում:

2) Եթե հաճախորդի (խաղացողի) մոտ առկա է երկու և ավելի հաշվի համար, ապա համարակալեք և նշեք դրանք 3-րդ բաժնում:

16. (3) Ձեր կողմից կարևորվող՝ գործարքին առնչվող այլ տեղեկություններ: Այս կետում լրացրեք այն տեղեկությունները, որոնք Ձեր կարծիքով կարող են օգտակար լինել ներկայացվող գործարքի մասին ավելի կոնկրետ պատկերացում կազմելու կամ գործարքը վերլուծելու համար, նշեք, թե լրացուցիչ տեղեկատվությունը որ բաժնի որ կետին է վերաբերում:

17. (4) Պատասխանատու աշխատակցի տվյալները: Այս կետում նշեք հաշվետու անձի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի պատասխանատու աշխատակցի տվյալները: Այդ աշխատակիցը պետք է ստորագրի և կնքի լրացված հաշվետվական ձևը:

1) Հաշվետվական ձևի թղթային տարբերակը պետք է կնքված լինի հաշվետու անձի կնիքով:

18. (4.3) Լրացման ամսաթիվ: Այս դաշտում նշում եք սույն հաշվետվական ձևը լրացնելու ամսաթիվը, ամիսը, տարին (թվերով):

19. (4.4) Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարը ՖԴԿ-ում: Այս դաշտում նշեք Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից Ձեզ տրված հաշվառման համարը (թվերով):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
Ֆինանսական դիտարկումների կենտրոն
Վ. Սարգսյան 6, Երևան 375010
Հեռ. 545088, Էլ. փոստ info_fiu@cba.am

Հավելված 2

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի
թիվ 235-Ն որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ԿԱՐԳ

Սույն կարգի նպատակն է՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման ընդհանուր համակարգի (այսուհետ՝ հաշվառում), ինչպես նաև պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների (թիվ 005 հաշվետվական ձևի) տրամադրման միասնական, կենտրոնացված կարգի ստեղծումն ու կիրարկումը:

1. Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառումը

1) Հաշվառումն իրականացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնում հաշվետվություն տրամադրող անձանց գրանցման միջոցով:

2) Հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառումն իրականացվում է հետևյալ փուլերով.

ա. հաշվետվություն տրամադրող անձանց կողմից դիմումների ներկայացում,

բ. հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառում:

2. Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից դիմումների ներկայացումը

1) Հաշվետվություն տրամադրող անձինք հաշվառման համար Ֆինանսական դիտարկումների կենտրոնին սույն կարգի հավելվածով սահմանված դիմումը ներկայացնում են գրավոր: Դիմումը ստորագրվում է հաշվետվություն տրամադրող անձի ղեկավարի կողմից և հավաստվում հաշվետվություն տրամադրող անձի կնիքով:

2) Հաշվառման դիմումը պետք է պարունակի՝

ա. հաշվետվություն տրամադրող անձի լրիվ անվանումը,

բ. հաշվետվություն տրամադրող անձի գործունեության տեսակը,

գ. հաշվետվություն տրամադրող անձի գտնվելու վայրը և գործունեության վայրը,

դ. հաշվետվություն տրամադրող անձի հարկ վճարողի հաշվառման համարը, պետական գրանցման համարը,

ե. հաշվետվություն տրամադրող անձի լիցենզիայի համարը,

զ. ներքին հսկողության ստորաբաժանման ղեկավարի կամ պատասխանատու անձի տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, պաշտոնը, էլեկտրոնային հասցեն, հեռախոսը, ստորագրությունը),

է. հաշվառման դիմումի լրացման օրը, ամիսը, տարեթիվը:

3. Ֆինանսական դիտարկումների կենտրոնում հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառում

1) Սույն կարգով նախատեսված դիմումը լրացնելուց և Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացնելուց հետո հաշվետվություն տրամադրող անձին տրվում է հաշվառման համար:

2) Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարը զետեղվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի միասնական տեղեկատվական շտեմարանում:

3) Հաշվետվություն տրամադրող այն անձանց, որոնք համակցված չեն «ՍիԲիէյՆեթ» միջբանկային կորպորատիվ ցանցին և միաժամանակ հաշվետվությունը ներկայացնելու են էլեկտրոնային տարբերակով, տրամադրվում է նաև Կենտրոնական բանկի «ՍիԲիէյՆեթ» սերվերում գրանցված անհատական նույնականացնող (իդենտիֆիկացնող) «բանալի», որի առկայության դեպքում հնարավոր է Կենտրոնական բանկի տարածքում տեղակայված համակարգչից էլեկտրոնային տեսքով հաշվետվությունն ուղարկել Ֆինանսական դիտարկումների կենտրոն:

4) Հաշվետվություն տրամադրող այն անձանց, որոնք հաշվետվությունները ներկայացնելու են էլեկտրոնային փոստի միջոցով, տրամադրվում են Կենտրոնական բանկում տեղակայված ինտերնետային սերվերում հաշվառման ժամանակ գրանցված անհատական նույնականացնող (իդենտիֆիկացնող) տվյալներ, որոնց մուտքագրման դեպքում կնույնականացվի հաշվետվություն տրամադրող անձանց ինքնությունը:

5) Եթե հաշվետվություն տրամադրող անձը միացած է համակարգչային «ՍիԲիէյՆեթ» կորպորատիվ ցանցին, կարող է օգտագործել այդ ցանցը հաշվառման դիմումի, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարի և հաշվետվական ձևերի էլեկտրոնային տարբերակով ստացման և ուղարկման համար:

4. Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը

1) Տեղեկությունները Ֆինանսական դիտարկումների կենտրոն են ներկայացվում թղթային և (կամ) էլեկտրոնային տարբերակով: Ներկայացվող հաշվետվություններին (թղթային և էլեկտրոնային տարբերակի համար) տրվում է անվանում: Հաշվետվության անվանումն ունի հետևյալ կառուցվածքը.

Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարը ՖԴԿ-ում (8 նիշ)	գծիկ	հաշվետվության ուղարկման ամսաթիվը՝ օօ/աա/տտ (6 նիշ)	գծիկ	տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (3 նիշ)
↓	↓	↓	↓	↓
XXXXXXXX	-	XXXXXX	-	XXX

Ընդ որում, հաշվետվական ձևը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում հետևյալ եղանակներից որևէ մեկով.

ա. ֆիզիկապես ներկայացնելու միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային և էլեկտրոնային (կրիչի վրա) տարբերակները Ֆինանսական դիտարկումների կենտրոն են ներկայացվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փաստաթղթերի շրջանառության բաժնի միջոցով՝ փակ, կնքված և ստորագրված ծրարներով: Նշված ծրարների վրա պետք է լրացված լինեն ուղարկողի անվանումը, գտնվելու վայրը, ուղարկման ամսաթիվը, ինչպես նաև հետևյալ արտահայտությունը՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին»: Հաշվետվությունը ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից ստացականի տրամադրման պահին,

բ. «ՍԻԲԻԷյՆԵթ» ցանցին համակցված լինելու դեպքում՝ այդ ցանցի միջոցով, միաժամանակ այն հաշվետվություն տրամադրող անձանց համար, որոնք համակցված չեն «ՍԻԲԻԷյՆԵթ» ցանցին, կարող են ուղարկել հաշվետվական ձևերը էլեկտրոնային տարբերակով՝ Կենտրոնական բանկի մուտքի մոտ դրված «ՍԻԲԻԷյՆԵթ» ցանցի տերմինալի միջոցով: Հաշվետվությունը համարվում է ներկայացված Ֆինանսական դիտարկումների կենտրոնի էլեկտրոնային հասցեից հաշվետվություն տրամադրող անձի էլեկտրոնային հասցեին հետադարձ փոստի ստացման պահին: Եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը հետ է ուղարկվում հաշվետվություն տրամադրող անձին (հաշվետվության մեջ տեխնիկական սխալի առկայության պատճառով), ապա հաշվետվությունը համարվում է տվյալների բազա չմուտքագրված, իսկ ստացումը՝ չհաստատված, բացառությամբ Կենտրոնական բանկի մուտքի մոտ դրված «ՍԻԲԻԷյՆԵթ» ցանցի տերմինալի միջոցով ներկայացված հաշվետվությունների,

գ. ՀՀ կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով, որի դեպքում լրացվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքում հրապարակված կամ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվետվական ձևերի պաշտպանված էլեկտրոնային տարբերակները, որոնք փոփոխելն արգելվում է: Հաշվետվական ձևն ուղարկվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի ծրագրային համակարգի միջոցով և ներկայացված է համարվում ծրագրային համակարգի «Ուղարկման կարգավիճակը» դաշտում «Ուղարկված է» նշման առկայության դեպքում: Եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը հետ է ուղարկվում հաշվետվություն տրամադրող անձին (հաշվետվության մեջ տեխնիկական սխալի առկայության պատճառով), ապա հաշվետվությունը համարվում է տվյալների բազա չմուտքագրված, իսկ ստացումը՝ չհաստատված: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով ուղարկվող հաշվետվությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու վերաբերյալ» կարգը,

դ. ֆաքսի միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային տարբերակն ուղարկվում է ՖԴԿ ֆաքսի համարին և ներկայացված է համարվում ֆաքսի առաքման անդորրագրի ստացման պահին: Այս դեպքում հաշվետվությունը սույն կարգի 4.1 ենթակետի «ա», «բ», «գ» կամ «ե» պարբերություններից որևէ մեկով սահմանված կարգով մինչև տվյալ ամսվա վերջին օրը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,

ե. փոստի միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային և էլեկտրոնային (կրիչով) տարբերակներն ուղարկվում են Ֆինանսական դիտարկումների կենտրոնի փոստային հասցեին և ներկայացված են համարվում այն «Հայփոստի» բաժանմունք ներկայացնելու և համապատասխան անդորրագիր ստանալու պահին,

զ. Ֆինանսական դիտարկումների կենտրոնի էլեկտրոնային փոստի (info_fiu@cba.am) միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակն ուղարկվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի էլեկտրոնային հասցեին և ներկայացված է համարվում նույն էլեկտրոնային հասցեից հետադարձ փոստի ստացման պահին: Այս դեպքում հաշվետվությունը սույն կարգի 4.1 ենթակետի «ա», «բ»,

«գ» կամ «ե» պարբերություններից որևէ մեկով սահմանված կարգով մինչև տվյալ ամսվա վերջին օրը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

2) Սույն կարգը հաստատած Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշման 3-րդ հավելվածի համաձայն՝ հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետում հաշվետվություն տրամադրող անձը ներկայացված հաշվետվության մեջ սխալ կամ թերացում հայտնաբերելու դեպքում ներկայացնում է հաշվետվության ուղղված տարբերակը՝ պահպանելով սույն կարգի 4.1 կետով սահմանված հաշվետվության անվանումը և ավելացնելով ուղղման հերթական համարը: Գործարքի վերաբերյալ հաշվետվության վերջնական տարբերակ է համարվում միևնույն անվանում ունեցող հաշվետվությունների ամենավերջին հերթական համարն ունեցող հաշվետվությունը: Փոփոխված և (կամ) ամբողջականացված հաշվետվության հետ մեկտեղ հաշվետվություն տրամադրող անձը Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին ներկայացնում է գրություն՝ թույլ տրված սխալների ուղղման և նախորդ հաշվետվության չեղյալ համարելու վերաբերյալ:

3) Սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված հաշվետվությունում սխալ կամ թերացում հայտնաբերելու դեպքում հաշվետու անձը դիմում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին՝ ուղարկված հաշվետվությունում ուղղում կատարելու խնդրանքով՝ նշելով սխալի կամ թերացման պատճառը և պահպանելով սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված ընթացակարգը:

Հավելված

«Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը» հավելված 2-ի

Ձեր հաշվառման համարը ՖԴԿ-ում

ՀԱՇՎԱՌՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի ֆինանսական
դիտարկումների կենտրոնի ղեկավար
պարոն _____-ին

Խնդրում եմ Ձեզ _____-ին տրամադրել հաշվառման համար:
Հաշվետվություն տրամադրող անձի լրիվ անվանումը

Հաշվետվություն տրամադրող անձի տվյալները՝

Գործունեության տեսակը _____

Գտնվելու վայրը _____

Գործունեության վայրը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Պետական գրանցման համարը _____

Լիցենզիայի համարը _____

Պատասխանատու անձի (անձանց) տվյալները՝

1. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍիԲիէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն
2. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍիԲիէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն
3. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍիԲիէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն
4. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍիԲիէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն

Հաշվետվություն տրամադրող անձի
գործադիր մարմնի ղեկավար՝ _____
ստորագրություն

__ _____ ____ թ.

քաղաք Երևան

Հավելված 3

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի
թիվ 235-Ն որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Սույն հավելվածի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված՝ պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների (թիվ 005 հաշվետվական ձևի) տրամադրման միասնական ժամկետների սահմանումը:

1. Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ժամկետները

1) Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը պարբերական բնույթ չի կրում:

2) Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են Օրենքով և (կամ) Լիազոր մարմնի ուղեցույցներով սահմանված կասկածելի գործարքի հիմքերի ու չափանիշների և/կամ պարտադիր տեղեկացման գործարքների համար անհրաժեշտ գումարային սահմանաչափի առկայության դեպքում:

3) Հաշվետվություն տրամադրող անձը, գործարքում (գործառնությունում) կասկածելի գործարքի հիմքեր և չափանիշներ հայտնաբերելու դեպքում նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12.00-ն, ներկայացնում է այդ գործարքի վերաբերյալ հաշվետվություն:

4) Սույն կետով սահմանված գործաքների տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել.

ա. աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

բ. ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով,

գ. վիճելի (քննարկման ենթակա) դեպքերով և այլն:

5) Հաշվետվություն տրամադրող անձը պարտադիր տեղեկացման գործարքի (գործառնության) վերաբերյալ տեղեկությունները Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացնում այդ գործարքը կնքելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

6) Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից ընդունվում են միայն այն անձի ստորագրությամբ ստացված հաշվետվությունները, ում տվյալները, սույն որոշմամբ սահմանված կարգով, նախապես ներկայացվել են Կենտրոնական բանկ:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազորված մարմնի տարածքային ստորաբաժանումների (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձինք) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 007 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի թիվ 61-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»[*]

Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 71-րդ հոդվածները, ինչպես նաև ղեկավարվելով «Հայաստանի

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. հուլիսի 31-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 14.08.08 թ. (ՀՀԳՏ N28 (302), 27.08.08):

Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 20-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 007 հաշվետվական ձև)»՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը»՝ համաձայն հավելված 2-ի (կցվում է):

3. Հաստատել «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ժամկետները»՝ համաձայն հավելված 3-ի (կցվում է):

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումների (այսուհետ՝ հաշվետվություն տրամադրող անձանց) կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 007 հաշվետվական ձև), տեղեկությունների տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու մասին» թիվ 61-Ն որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի օգոստոսի 31-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
4 օգոստոսի 2008 թ., N 236-Ն

Հավելված 1

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի
թիվ 236-Ն որոշմամբ

Նոր հաշվետվություն ◯
Լրացում հաշվետվություն ◯
Լրացվող հաշվետվության համարը ☐ և ☐
և հերթական լրացում հաշվետվության տարբերակը

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎ 007

Հաշվետվական ձևը լրացվում և ներկայացվում է անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմնի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումների կողմից՝ սույն ձևի լրացման և ներկայացման ուղեցույցի համաձայն

Հաշվետվական ձևում «*»-ով նշված են պարտադիր տեղեկացման գործարքների համար անհրաժեշտ լրացման դաշտերը

1. ԳՈՐԾԱՐՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

***1.1. Գրանցման ամսաթիվը** ☐☐ / ☐☐ / ☐☐☐☐
Լրացրեք 1.2 և 1.3 կետերից միայն մեկը

***1.2. Պարտադիր տեղեկացման գործարք** ☐	**1.3. Կասկածելի գործարք** ☐

1.3.1. Գործարքը կասկածելի համարելու հիմքերը և չափանիշները
(հատկացված դաշտում մուտքագրվող տեղեկատվությունը չտեղավորվելու դեպքում ավելացրեք համարակալված թերթ, որի ծախ անկյունում նշեք 1.3.1, և լրացրեք անհրաժեշտ տեղեկությունները)

Լրացրեք 1.3.2 և 1.3.3 կետերից միայն մեկը

1.3.2. Գրանցումը մերժվել է ☐ | Մերժման ամսաթիվը ☐☐ / ☐☐ / ☐☐☐☐ (օ օ / ա ա / տ տ տ տ)

1.3.3. Չկատարված կամ չավարտված գործարք ☐

1.4. Գործարքի էությունը (լրացնել բառերով)՝

*1.5. Գործարքի գինը (արժեքը)՝ ՀՀ դրամով ☐

2. ԳՈՐԾԱՐՔԻ ԿՈՂՄ(ԵՐ)

Գործարքի երկու և ավելի կողմերի առկայության դեպքում սույն բաժինը լրացրեք երկու և ավելի անգամ

*2.1. Գործարքի կողմերի քանակը ☐

2.1.1. Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր

*2.1.1.1. Լրիվ անվանումը (անունը) ☐

*2.1.1.2. Գործարքի կողմի կարգավիճակը ☐

*2.1.1.3. Գտնվելու (բնակության) վայրը ☐ (Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը) ☐ (Քաղաքը / գյուղը) ☐ (Երկիրը)

*2.1.1.4. Հարկ վճարողի հաշվառման համարը ☐

*2.1.1.5. Պետական գրանցման համարը ☐

2.1.2. Եթե անձը, որը գործարքի կողմ է, ֆիզիկական անձ է

*2.1.2.1. Անուն ☐ *2.1.2.2. Ազգանուն ☐

Նշեք գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի սեռը և ընտանեկան դրությունը ☐ և ☐

*2.1.2.3. Գործարքի կողմի կարգավիճակը ☐

*2.1.2.4. Բնակության վայրը ☐ (Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը) ☐ (Քաղաքը / գյուղը) ☐ (Երկիրը)

*2.1.2.5. Ծննդյան ամսաթիվը ☐☐ / ☐☐ / ☐☐ (օ օ / ա ա / տ տ) 2.1.2.6. Քաղաքացիությունը ☐ (Երկիրը)

*2.1.2.7. Սոցիալական քարտի համարը ☐

*2.1.2.8. Անձը հաստատող փաստաթղթի անվանումը ☐

*2.1.2.8.1. Փաստաթղթի համարը ☐

*2.1.2.8.2. Տրված է ում կողմից և երբ ☐ ☐☐ / ☐☐ / ☐☐ (օ օ / ա ա / տ տ)

ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ (ՈՎ ՀԱՇՎԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ԳՈՐԾԱՐՔԸ)

Այս բաժինը լրացրեք միայն այն դեպքում, երբ գործարքը կատարվում է լիազորված անձի միջոցով

*2.2. Լիազորված անձանց քանակը ☐

Երկու և ավելի լիազորված անձանց դեպքում լիազորված անձի տվյալները լրացրեք երկու և ավելի անգամ

2.2.1. Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր

*2.2.1.1. Լրիվ անվանումը (անունը) ☐

*2.2.1.2. Ում կողմից է հանդես գալիս լիազորված անձը ☐

*2.2.1.3. Գտնվելու (բնակության) վայրը ☐ (Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը) ☐ (Քաղաքը / գյուղը) ☐ (Երկիրը)

*2.2.1.4. Հարկ վճարողի հաշվառման համարը ☐

*2.1.1.5. Պետական գրանցման համարը ☐

2.1.2. Ֆիզիկական անձ

*2.1.2.1. Անուն *2.1.2.2 Ազգանուն

*2.1.2.3. Գործարքի կողմի կարգավիճակը

*2.2.1.4. Բնակության վայրը
Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը / գյուղը | Երկիրը

*2.1.2.5. Ծննդյան ամսաթիվը
օ օ / ա ա / տ տ
2.1.2.6 Քաղաքացիությունը
Երկիրը

*2.1.2.7. Սոցիալական քարտի համարը

*2.1.2.8. Անձը հաստատող փաստաթղթի անվանումը

*2.1.2.8.1. Փաստաթղթի համարը

*2.1.2.8.2. Տրված է ում կողմից և երբ
օ օ / ա ա / տ տ

*2.2. ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ (ՈՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ԳՈՐԾԱՐՔԸ)
Այս բաժինը լրացրեք միայն այն դեպքում, երբ գործարքը կատարվում է լիազորված անձի միջոցով
Լիազորված անձանց թիվը
Երկու և ավելի լիազորված անձանց դեպքում լիազորված անձի տվյալները լրացրեք երկու և ավելի անգամ

2.2.1. Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր

*2.2.1.1. Լրիվ անվանումը (անունը)

*2.2.1.2. Ում կողմից է հանդես գալիս լիազորված անձը

*2.2.1.3. Գտնվելու (բնակության) վայրը
Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը / գյուղը | Երկիրը

*2.2.1.4. Հարկ վճարողի հաշվառման համարը

*2.2.1.5. Պետական գրանցման համարը

2.2.2. Ֆիզիկական անձ

*2.2.2.1. Անուն *2.2.2.2. Ազգանուն

Նշեք լիազորված անձ հանդիսացող ֆիզիկական անձի սեռը և ընտանեկան դրությունը և

*2.2.2.3. Ում կողմից է հանդես գալիս լիազորված անձը

*2.2.2.4. Բնակության վայրը
Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը / գյուղը | Երկիրը

*2.2.2.5. Ծննդյան ամսաթիվը
օ օ / ա ա / տ տ
2.2.2.6 Քաղաքացիություն
Երկիրը

*2.2.2.7. Սոցիալական քարտի համարը

*2.2.2.8. Անձը հաստատող փաստաթղթի անվանումը

*2.2.2.8.1. Անձը հաստատող փաստաթղթի համարը

*2.2.2.8.2. Տրված է ում կողմից և երբ
օ օ / ա ա / տ տ

3. ԱՆՁԸ (ՇԱՀԱՌՈՒ), ՈՒՄ ՕԳՏԻՆ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԳՈՐԾԱՐՔԸ
Երկու և ավելի շահառուների դեպքում շահառուի անձնական տվյալները լրացրեք երկու և ավելի անգամ

3.1. Շահառուների քանակը
Մեկ/մեկ և ավելի շահառուների դեպքում լրացրեք ***այստեղ***

3.1.1. Եթե շահառուն իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր

3.1.1.1. Լրիվ անվանումը (անունը)

3.1.1.2. Գտնվելու (բնակության) վայրը
Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը / գյուղը | Երկիրը

3.1.1.3. Հարկ վճարողի հաշվառման համարը

3.1.1.4. Պետական գրանցման համարը

3.1.2. Եթե շահառուն ֆիզիկական անձ է

3.1.2.1. Անուն 3.1.2.2 Ազգանուն

Նշեք գործարքի կողմ հանդիսացող ֆիզիկական անձի սեռը և ընտանեկան դրությունը և

3.1.2.3. Բնակության վայրը
Լրացրեք՝ բնակարանը, շենքը, փողոցը | Քաղաքը / գյուղը | Երկիրը

3.1.2.4. Ծննդյան ամսաթիվը օ օ / ա ա / տ տ 3.1.2.5. Քաղաքացիությունը Երկիրը

3.1.2.6. Սոցիալական քարտի համարը

3.1.2.7. Անձը հաստատող փաստաթղթի անվանումը

3.1.2.7.1. Անձը հաստատող փաստաթղթի համարը

3.1.2.7.2. Տրված է ում կողմից և երբ օ օ / ա ա / տ տ

4. ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԿԱՐԵՎՈՐՎՈՂ՝ ԳՈՐԾԱՐՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Հատկացված դաշտում մուտքագրվող տեղեկատվությունը չտեղավորվելու դեպքում ավելացրեք համարակալված թերթ, որի ձախ անկյունում նշեք 4, և լրացրեք անհրաժեշտ տեղեկությունները)

***5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

*5.1. Անուն *5.2. Ազգանուն

*5.3. Լրացման ամսաթիվը օ օ / ա ա / տ տ Ստորագրություն Կ.Տ.

*5.4. Հաշբետու անձի հաշվառման համարը ՖԴԿ -ում

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
Ֆինանսական դիտարկումների կենտրոն
Վ. Սարգսյան 6, Երևան 375010
Հեռ. 545088, Էլ. փոստ info_fiu@cba.am


<u>Հավելված</u>
«Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 005 հաշվետվական ձև)» հավելված 1-ի

ԹԻՎ 007 ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՈՒՂԵՑՈՒՅՑ)

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն հաշվետվական ձևը լրացնել միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնից (այսուհետ՝ նաև ՖԴԿ) «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգի» հիման վրա հաշվառման հերթական համար ստանալուց հետո:

Հաշվետվական ձևի կառուցվածքը և ուղեցույցում հանդիպող հասկացությունները



Սույն հաշվետվական ձևը լրացվում է ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումների կողմից:

1. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հետևյալ 2 դեպքերում.

1) եթե գործարքի արժեքը (դրամային գնահատում ունեցող գործարքների դեպքում)՝

ա. գերազանցում է 20 միլիոն դրամը, բացառությամբ.

բ. անշարժ գույքի հետ կապված գործարքների, որոնց վերաբերյալ հաշվետվական ձևը լրացվում է, եթե գործարքի արժեքը գերազանցում է 50 միլիոն դրամը:

2) եթե գործարքում առկա է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով (Օրենք) և (կամ) Լիազոր մարմնի ուղեցույցներով սահմանված կասկածելի գործարքների հիմքերից և չափանիշներից առնվազն մեկը՝ անկախ նրանից, թե գործարքի գումարը 20 միլիոն դրամը գերազանցում է, թե ոչ:

Սույն հաշվետվական ձևը պարբերական բնույթ չի կրում, այլ լրացվում է միայն 1-ին կետում նշված գործարքների առկայության դեպքում:

2.* Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ սույն հաշվետվական ձևը ներկայացվում է միայն հաճախորդի համար նախապատրաստվող կամ իրականացվող հետևյալ գործարքների մասով՝

1) անշարժ գույքի առուվաճառքի,

2) հաճախորդի դրամական միջոցների, արժեթղթերի կամ այլ գույքի կառավարման,

3) բանկային և արժեթղթային հաշիվների կառավարման,

4) իրավաբանական անձանց հիմնադրման, գործունեության կամ կառավարման համար դրամական միջոցների կամ այլ գույքի տրամադրման,

5) իրավաբանական անձանց հիմնադրման, գործունեության կամ կառավարման գործառույթների իրականացման, ինչպես նաև իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում (բաժնեհավաք կապիտալում և այլն) մասնակցության, փայի և այլնի օտարման (ձեռքբերման), կամ իրավաբանական անձանց անվանական կամ շուկայական արժեքով բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) օտարման (ձեռքբերման):

3. Եթե հաշվետվությունը ներկայացվում է կասկածելի գործարքի կապակցությամբ, ապա հաշվետվական ձևի բոլոր վանդակները համարվում են լրացման համար պարտադիր: Եթե հաշվետվությունը ներկայացվում է որպես պարտադիր տեղեկացման գործարք, ապա պարտադիր լրացման ենթակա են միայն աստղանիշով նշված վանդակները: Սակայն, եթե հնարավոր չէ լրացնել տվյալ վանդակը, համապատասխան տվյալների բացակայության դեպքում, ապա տվյալ վանդակում նշվում է աստղանիշ, և այդ մասին բացատրություն է տրվում հաշվետվական ձևի 4-րդ բաժնում:

4. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հնարավորինս պարզ, հակիրճ, ընթեռնելի և միանշանակ ընկալվող լեզվով:

5. Սույն հաշվետվական ձևը լրացրեք հետևյալ երկու տարբերակներից որևէ մեկով.

1) թղթային տարբերակ. հաշվետվական ձևի թղթային տարբերակը կարող եք ձեռք բերել.

ա. ՖԴԿ-ին դիմելու միջոցով.

բ. ՖԴԿ (www.cba.am/fmc) ինտերնետային կայքից ելքագրելու միջոցով:

1.1) Հաշվետվական ձևի թղթային տարբերակը լրացրեք գրիչով և տպատառերով:

1.2) Բովանդակային ուղղումներ կատարելու դեպքում լրացրեք հաշվետվական նոր ձև: Տեխնիկական բնույթի ուղղումների կատարման դեպքում ստորագրեք այդ ուղղումների կողքին:

1.3) Հաշվետվական ձևը լրացրեք թղթային տարբերակով տրված կետերի սահմաններում: Նոր բաժինների կամ առկա բաժիններում լրացուցիչ կետերի լրացման անհրաժեշտության դեպքում օգտվեք հավելյալ թղթերից: Այդ թղթերի վրա նշեք, թե որ բաժինը կամ կետն եք լրացնում, ստորագրեք դրանք և որպես հավելված կցեք հիմնական հաշվետվական ձևին: Օրինակ՝ պարզել եք, որ գործարքում որպես լիազորված անձ հանդես են գալիս երեք անձինք. հաշվետվական ձևի 2.2 կետում նշեք 3 թիվը, առանձին թերթի վրա ևս երկու անգամ բազմացրեք 2.2 կետը ներառող հատվածը, լրացրեք համապատասխան տեղեկատվությունը, ստորագրեք և կցեք լրացված հաշվետվական ձևին:

* *Պաշտոնական հրապարակման համարակալման մեջ սպրդել է տեխնիկական վրիպակ:*

1.4) Այն դեպքում, երբ հաշվետվական ձևի կետերի սահմանները բավարար չեն, այն լրացրեք լրացուցիչ թղթերի վրա հետևյալ կերպ. թղթի ձախ կողմում նշեք, թե որ կետին է վերաբերում տեղեկատվությունը, թերթերի համարակալումը շարունակեք հաշվետվական ձևի վերջին էջի համարին հաջորդող հերթական համարից սկսած: Օրինակ՝ 1.3.1 կետում գործարքը կասկածելի համարելու հիմքերը նշեք լրացուցիչ թղթի վրա, այն համարակալեք հերթական համարով, էջի վերևի ձախ անկյունում նշեք 1.3.1, ստորագրեք և կցեք հաշվետվական ձևին:

2) էլեկտրոնային տարբերակ. հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակը կարող եք ձեռք բերել.

ա. ՖԴԿ-ին դիմելու միջոցով.

բ. ՖԴԿ (www.cba.am/fmc) ինտերնետային կայքից ելքագրելու միջոցով:

2.1) Հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակը լրացրեք աղյուսակը ներառող պատուհանները ակտիվացնելու և տվյալները մուտքագրելու միջոցով:

2.2) Կախված նրանից, թե որ կետերը ներառող պատուհաններում եք նշումներ կատարել, կակտիվանան միայն այն պատուհանները (ավտոմատացված ծրագրային համակարգի ներդնումից հետո), որոնց աղյուսակները փոխլրացնում են (չեն բացառում) միմյանց:

2.3) Աղյուսակները ներառող պատուհանները, ըստ դրանցում լրացվող նյութի ծավալի, ընդլայնվում են:

2.4) Եթե նույն բաժինը (օրինակ՝ բաժին 2-ը) պետք է լրացվի երկու և ավելի անգամ, ապա այդ բաժնի համապատասխան վանդակում (այս դեպքում՝ կետ 2.1) նշեք օրինակների քանակը, և ավտոմատացված ծրագրային համակարգում (ներդնումից հետո) կակտիվանան համապատասխան թվով բաժիններ:

6. Հաշվետվական ձևի ներկայացման ժամկետները սահմանված են սույն որոշման հավելված 3-ում:

7. Հաշվետվական ձևի ներկայացման եղանակները սահմանված են սույն որոշման հավելված 2-ում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8. Նոր հաշվետվություն կամ «Լրացում հաշվետվություն»: Յուրաքանչյուր հաշվետվություն լրացնելու համար անհրաժեշտ է կատարել նշում այն մասին, թե արդյոք դա նոր հաշվետվություն է, թե նախկինում արդեն տրամադրված՝ «Լրացում հաշվետվություն»:

1) Եթե արդեն իսկ տրամադրված հաշվետվության հետ կապված անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ կամ փոփոխված տեղեկատվություն, ապա անհրաժեշտ է կատարել նշում «Լրացում հաշվետվություն» կետում: Համապատասխանաբար էլեկտրոնային տարբերակում կավելանան նախկինում ուղարկված հաշվետվության անվանումը և «լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտերը: «Հաշվետվության անվանումը» դաշտում նույնությամբ լրացվում է այն հաշվետվության էլեկտրոնային ֆայլի անվանումը, որին որպես լրացում ուղարկվում է «Լրացում հաշվետվությունը»: «Լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտում պետք է նշել (թվերով), թե որերորդ «Լրացում հաշվետվությունն» է ներկայացվում:

2) Լրացում հաշվետվությունը պետք է պարունակի նախկինում տրամադրված ամբողջ տեղեկատվությունը՝ ներառյալ կատարված փոփոխությունը:

3) Գործարքի վերաբերյալ հաշվետվության վերջնական տարբերակ է համարվում միևնույն անվանում ունեցող ֆայլերի «լրացում հաշվետվության հերթական տարբերակը» դաշտում ամենավերջին հերթական համարն ունեցող ֆայլը:

4) Որպես լրացում է համարվում այն տեղեկատվությունը, որը՝

ա. հիմնական հաշվետվությունը լրացնելու պահին հասանելի չէ կամ հնարավոր չէ ստանալ, այսինքն, երբ հաշվետվությունը գործարքը կատարելու փաստի հիման վրա պետք է ներկայացվի ՖԴԿ-ին համապատասխան ժամկետում, սակայն պարտադիր լրացման ենթակա դաշտերի համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման նպատակով հարցումներ են կատարվել հաճախորդին կամ այլ անձանց,

բ. ներկայացվում է ՖԴԿ-ի հարցման հիման վրա. եթե հարցվող տեղեկատվության համար համապատասխան դաշտեր չկան, ապա տեղեկատվությունը լրացվում է 4-րդ բաժնում,

գ. վերաբերում է կնքված, սակայն դեռևս չկատարված գործարքին. այս դեպքում նշում է կատարվում չավարտված կամ չկատարված գործարք դաշտում, իսկ 4-րդ բաժնում նշվում է գործարքի ընդհատման պատճառը (օրինակ՝ հաճախորդի կողմից պայմանագրի միակողմանի լուծում),

դ. ներառում է հաշվետու անձի կողմից կարևորվող այլ տվյալներ. այդ տվյալների տրամադրման անհրաժեշտությունն առաջանում է հաշվետու անձի կողմից ստացված նոր տեղեկատվության՝ ՖԴԿ-ին ներկայացման հանգամանքով, որոնք չեն ներառում պարտադիր լրացման ենթակա դաշտերի տեղեկատվությունը:

9. (1.1) Գրանցման ամսաթիվը: Այս կետում նշեք տեղեկացման ենթակա գործարքի նկատմամբ իրավունքների գրանցման ամսաթիվը, ամիսը, տարին (թվերով), իսկ եթե գրանցումը դեռևս չի կատարվել, ապա նշեք այն ամսաթիվը, երբ ներկայացվել է գործարքի նկատմամբ իրավունքների գրանցման դիմումը, իսկ 4-րդ բաժնում նշեք, թե գործարքի նկատմամբ իրավունքները ինչու չեն գրանցվել, և գրանցումն ինչ փուլում է:

10. (1.2) Պարտադիր տեղեկացման գործարք: Այս կետում նշում եք կատարում այն բոլոր դեպքերում, երբ գործարքի գինը (դրամական գնահատում ունեցող գործարքների դեպքում)՝

- գերազանցում է 20 միլիոն դրամը, բացառությամբ.
- անշարժ գույքի հետ կապված գործարքների, որոնց վերաբերյալ հաշվետվական ձևը լրացվում է, եթե գործարքի արժեքը գերազանցում է 50 միլիոն դրամը:

1) Այս կետում նշում կատարելու դեպքում 1.3 կետում նշում մի կատարեք: Այս կետում նշում կատարելու դեպքում լրացրեք միայն «* » -ով նշված դաշտերը:

2) Ընդ որում, եթե գործարքում նշված չէ դրա ամբողջական գինը, ապա գործարքի գին է համարվում գործարքով ժամկետային վճարումների համար նախատեսված գումարը (օրինակ՝ բնակարանի վարձակալության պայմանագրով՝ ամենամսյա վարձավճարը):

3) Եթե գործարքի գինը գերազանցում է սույն կետով սահմանված գումարային սահմանաչափը, և, բացի այդ, Ձեր կարծիքով, գործարքը նաև կասկածելի է, ապա բաց թողեք այս կետը, նշում կատարեք 1.3 կետում և շարունակեք հաշվետվական ձևը լրացնել որպես կասկածելի գործարք:

11. (1.3) Կասկածելի գործարք: Այս կետում նշում կատարելու դեպքում 1.2 կետում նշում մի կատարեք: Նշում կատարեք այն բոլոր դեպքերում, երբ գործարքի կնքման կամ իրականացման պայմաններում առկա է կասկածի հիմքերից և չափանիշներից առնվազն մեկը:

1) Այս կետում նշում կատարելու դեպքում նշեք նաև 1.3.1 կետում կասկածի հիմքերը և չափանիշները, ինչպես նաև նշեք, թե Ձեր կարծիքով՝ այդ կասկածը որն է:

2) Եթե Ձեր կողմից գործարքը մերժվել է, ապա նշում կատարեք 1.3.2 վանդակում՝ լրացնելով նաև մերժման ամսաթիվը:

3) 1.3.3 կետում նշում կատարեք, եթե որևէ այլ պատճառով, քան կասեցումը կամ դադարեցումը, գործարքը չի կատարվել կամ չի շարունակվել (օրինակ՝ ակնհայտ կասկածելի գործարքի նկատմամբ իրավունքների գրանցումից կողմերը հրաժարվել են իրավունքների գրանցման պահին): Եթե գործարքը չի կատարվել, ապա հաշվետվական ձևում լրացրեք այն տվյալները, որոնք հայտնի են դարձել գործարքի կնքման առաջարկի պահից սկսած մինչև գործարքի կողմի (կողմերի) կողմից այն կատարելու մտադրությունից հրաժարվելու պահը: 4-րդ բաժնում նշեք, թե Ձեզ հայտնի ինչ պատճառներով այն չի կատարվել:

12. (1.4) Գործարքի էությունը: Այս կետում նշեք գործարքի էությունը և առարկան (օրինակ՝ անշարժ գույքի առուվաճառք, վարձակալություն):

13. (1.5) Գործարքի գումարը: Այս կետում նշեք գործարքով նախատեսված գումարը միայն Հայաստանի Հանրապետության դրամով (թվերով):

14. (2) Գործարքի կողմ(եր)ը: Այս բաժնում նշում եք գործարքի կողմ(եր)ին նկարագրող տվյալները: Կախված նրանից, թե գործարքի կողմը իրավաբանական անձ է կամ անհատ ձեռնարկատեր, լրացրեք 2.1.1 կետերը, եթե ֆիզիկական անձ է՝ 2.1.2 կետերը: 2.1 կետում նշեք, թե քանի անձի անունից է կատարվում գործարքը, որից հետո 2.1 կետը լրացրեք բոլոր անձանց համար:

1) 2.1.1.3 կետում լրացվում է իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող գործարքի կողմի գտնվելու (բնակության) վայրը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ գործունեության վայրը: Հաճախորդի գործունեության վայրը կարող է նշվել նաև 4-րդ բաժնում որպես լրացուցիչ տեղեկություն:

15. (2.2) Լիազորված անձի տվյալները, ով հաճախորդի անունից իրականացնում է գործարքը: Այս կետում նշեք հաճախորդի հանձնարարությամբ և նրա անունից գործարքի կատարման ընթացքում հանդես եկող լիազորված անձի (առկայության դեպքում) տվյալները: Այս բաժինը լրացրեք միայն այն դեպքում, երբ գործարքը կատարվում է լիազորված անձի միջոցով:

1) 2.2 կետում նշեք լիազորված անձանց քանակը: Նշեք, թե քանի լիազորված անձ է մասնակցում գործարքին և բոլորի համար լրացրեք 2.2 կետը:

2) Անկախ նրանից՝ հաշվետվությունը լրացվում է պարտադիր տեղեկացման, թե կասկածելի գործարքի վերաբերյալ, լիազորված անձի վերաբերյալ տվյալները համարվում են լրացման համար պարտադիր (առկայության դեպքում):

16. (3) Անձը (շահառուն), ում օգտին կատարվում է գործարքը: Այս բաժնում նշեք այն անձի (անձանց) տվյալները, ում օգտին կատարվում է գործարքը:

1) 3.1 կետում նշեք, թե քանի շահառու կա գործարքում, և յուրաքանչյուրի համար լրացրեք 3-րդ բաժինը:

2) Եթե հաշվետվությունը ներկայացվում է որպես պարտադիր տեղեկացման գործարք, ապա շահառուի վերաբերյալ տվյալները համարվում են լրացման համար ոչ պարտադիր: Իսկ եթե հաշվետվությունը ներկայացվում է որպես կասկածելի գործարք, ապա հաշվետվական ձևում շահառուի վերաբերյալ բոլոր դաշտերը համարվում են լրացման համար պարտադիր (առկայության դեպքում):

17. (4) Ձեր կողմից կարևորվող՝ գործարքին առնչվող այլ տեղեկություններ: Այս կետում լրացրեք այն տեղեկությունները, որոնք, Ձեր կարծիքով, կարող են օգտակար լինել ներկայացվող գործարքի մասին ավելի կոնկրետ պատկերացում կազմելու կամ գործարքը վերլուծելու համար: Նշեք, թե լրացուցիչ տեղեկատվությունը որ բաժնի որ կետին է վերաբերում:

18. (5) Պատասխանատու աշխատակցի տվյալներ: Այս կետում նշեք Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման այն աշխատակցի տվյալները, ով իրավասու է լրացնել և ներկայացնել հաշվետվական ձևը: Այդ աշխատակիցը պետք է ստորագրի և կնքի լրացված հաշվետվական ձևը (թղթային տարբերակի դեպքում):

19. (5.3) Լրացման ամսաթիվ: Այս կետում նշեք սույն հաշվետվական ձևը լրացնելու ամսաթիվը, ամիսը, տարին (թվերով):

20. (5.4) Հաշվետու անձի հաշվառման համարը ՖԴԿ-ում: Այս կետում նշեք Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից Ձեզ տրված հաշվառման համարը (թվերով):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
Ֆինանսական դիտարկումների կենտրոն
Վ. Սարգսյան 6, Երևան 375010
Հեռ. 545088, էլ. փոստ info_fiu@cba.am

Հավելված 2

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի
թիվ 236-Ն որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳ

Սույն կարգի նպատակն է՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման ընդհանուր համակարգի (այսուհետ՝ հաշվառում), ինչպես նաև պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների (թիվ 007 հաշվետվական ձևի) տրամադրման միասնական, կենտրոնացված կարգի ստեղծումն ու կիրարկումը:

1. Կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնում (այսուհետ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն) հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառումը

1) Հաշվառումն իրականացվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնում հաշվետվություն տրամադրող անձանց գրանցման միջոցով:

2) Հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառումն իրականացվում է հետևյալ փուլերով.

ա. հաշվետվություն տրամադրող անձանց կողմից դիմումների ներկայացում,

բ. հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառում:

2. Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից դիմումների ներկայացումը

1) Հաշվետվություն տրամադրող անձինք հաշվառման համար Ֆինանսական դիտարկումների կենտրոնին սույն կարգի հավելվածով սահմանված դիմումը ներկայացնում են գրավոր: Դիմումը ստորագրվում է հաշվետվություն տրամադրող անձի ղեկավարի կողմից և հավաստվում հաշվետվություն տրամադրող անձի կնիքով:

2) Հաշվառման դիմումը պետք է պարունակի՝

ա. հաշվետվություն տրամադրող անձի լրիվ անվանումը,

բ. հաշվետվություն տրամադրող անձի գործունեության տեսակը,

գ. հաշվետվություն տրամադրող անձի գտնվելու վայրը և գործունեության վայրը,

դ. հաշվետվություն տրամադրող անձի հարկ վճարողի հաշվառման համարը, պետական գրանցման համարը,

ե. հաշվետվություն տրամադրող անձի լիցենզիայի համարը,

զ. ներքին հսկողության ստորաբաժանման ղեկավարի կամ պատասխանատու անձի տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, պաշտոնը, էլեկտրոնային հասցեն, հեռախոսը, ստորագրությունը),

է. հաշվառման դիմումի լրացման օրը, ամիսը, տարեթիվը:

3. Ֆինանսական դիտարկումների կենտրոնում հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման իրականացումը

1) Սույն կարգով նախատեսված դիմումը լրացնելուց և Ֆինանսական դիտարկումների կենտրոն ներկայացնելուց հետո հաշվետվություն տրամադրող անձին տրվում է հաշվառման համար:

2) Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարը զետեղվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի միասնական տեղեկատվական շտեմարանում:

3) Հաշվետվություն տրամադրող այն անձանց, որոնք համակցված չեն «ՍիԲիէյՆեթ» միջբանկային կորպորատիվ ցանցին և միաժամանակ հաշվետվությունը ներկայացնելու են էլեկտրոնային տարբերակով, տրամադրվում է նաև Կենտրոնական բանկի «ՍիԲիէյՆեթ» սերվերում գրանցված անհատական նույնականացնող (իդենտիֆիկացնող) «բանալի», որի առկայության դեպքում հնարավոր է Կենտրոնական բանկի տարածքում տեղակայված համակարգչից էլեկտրոնային տեսքով հաշվետվությունն ուղարկել Ֆինանսական դիտարկումների կենտրոն:

4) Հաշվետվություն տրամադրող այն անձանց, որոնք հաշվետվությունները ներկայացնելու են էլեկտրոնային փոստի միջոցով, տրամադրվում են Կենտրոնական բանկում տեղակայված ինտերնետային սերվերում հաշվառման ժամանակ գրանցված անհատական նույնականացնող (իդենտիֆիկացնող) տվյալներ, որոնց մուտքագրման դեպքում կնույնականացվի հաշվետվություն տրամադրող անձանց ինքնությունը:

5) Եթե հաշվետվություն տրամադրող անձը միացած է համակարգչային «ՍիԲիէյՆեթ» կորպորատիվ ցանցին, կարող է օգտագործել այդ ցանցը հաշվառման դիմումի, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարի և հաշվետվական ձևերի էլեկտրոնային տարբերակով ստացման և ուղարկման համար:

4. Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը

1) Տեղեկությունները Ֆինանսական դիտարկումների կենտրոն են ներկայացվում թղթային և (կամ) էլեկտրոնային տարբերակով: Ներկայացվող հաշվետվություններին (թղթային և էլեկտրոնային տարբերակի համար) տրվում է անվանում: Հաշվետվության անվանումն ունի հետևյալ կառուցվածքը.

Հաշվետվություն տրամադրող անձի հաշվառման համարը ՖԴԿ-ում (8 նիշ)	գծիկ	հաշվետվության ուղարկման ամսաթիվը՝ օօ/աա/տտ (6 նիշ)	գծիկ	տվյալ օրվա դրությամբ ուղարկված հաշվետվության հերթական համարը (3 նիշ)
▼	▼	▼	▼	▼
XXXXXXXX	-	XXXXXX	-	XXX

Ընդ որում, հաշվետվական ձևը Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվում հետևյալ եղանակներից որևէ մեկով.

ա. ֆիզիկապես ներկայացնելու միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային և էլեկտրոնային (կրիչի վրա) տարբերակները Ֆինանսական դիտարկումների կենտրոն են ներկայացվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փաստաթղթերի շրջանառության բաժնի միջոցով՝ փակ, կնքված և ստորագրված ծրարներով: Նշված ծրարների վրա պետք է լրացված լինեն ուղարկողի անվանումը, գտնվելու վայրը, ուղարկման ամսաթիվը, ինչպես նաև հետևյալ նշումը՝ «Անձամբ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին»: Հաշվետվությունը ներկայացված է համարվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից ստացականի տրամադրման պահին,

բ. Հայաստանի Հանրապետության Կառավարության տեղեկատվական կորպորատիվ ցանցի կամ «ՍիԲիէյՆեթ» ցանցի միջոցով: Հաշվետվություն տրամադրող այն անձինք, որոնք համակցված չեն «ՍիԲիէյՆեթ» ցանցին, հաշվետվական ձևերը կարող են ուղարկել էլեկտրոնային տարբերակով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մուտքի մոտ դրված «ՍիԲիէյՆեթ» ցանցի տերմինալի միջոցով: Հաշվետվությունը «ՍիԲիէյՆեթ» ցանցով ուղարկելու դեպքում այն համարվում է ներկայացված Ֆինանսական դիտարկումների կենտրոնի էլեկտրոնային հասցեից հաշվետվություն տրամադրող անձի էլեկտրոնային հասցեին հետադարձ փոստի ստացման պահին: Եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը հետ է ուղարկվում հաշվետվություն տրամադրող անձին (հաշվետվության մեջ տեխնիկական սխալի առկայության պատճառով), ապա հաշվետվությունը համարվում է տվյալների բազա չմուտքագրված, իսկ ստացումը՝ չհաստատված, բացառությամբ Կենտրոնական բանկի մուտքի մոտ դրված «ՍիԲիէյՆեթ» ցանցի տերմինալի միջոցով ներկայացված հաշվետվությունների,

գ. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով, որի դեպքում լրացվում են ՀՀ կենտրոնական բանկի վեբ կայքում հրապարակված կամ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից տրամադրված հաշվետվական ձևերի պաշտպանված էլեկտրոնային տարբերակները, որոնք փոփոխելն արգելվում է: Հաշվետվական ձևն ուղարկվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոն Հայաս-

տանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի ծրագրային համակարգի միջոցով և ներկայացված է համարվում ծրագրային համակարգի «Ուղարկման կարգավիճակը» դաշտում «Ուղարկված է» նշման առկայության դեպքում: Եթե մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունը հետ է ուղարկվում հաշվետվություն տրամադրող անձին (հաշվետվության մեջ տեխնիկական սխալի առկայության պատճառով), ապա հաշվետվությունը համարվում է տվյալների բազա չմուտքագրված, իսկ ստացումը՝ չհաստատված: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով ուղարկվող հաշվետվությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մարտի 20-ի թիվ 81-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վեբ կայքի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվությունների ներկայացման ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությունը կիրառելու վերաբերյալ» կարգը,

դ. ֆաքսի միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային տարբերակն ուղարկվում է ՖԴԿ ֆաքսի համարին և ներկայացված է համարվում ֆաքսի առաքման անդորրագրի ստացման պահին: Այս դեպքում հաշվետվությունը սույն կարգի 4.1 ենթակետի «ա», «բ», «գ» կամ «ե» պարբերություններից որևէ մեկով սահմանված կարգով մինչև տվյալ ամսվա վերջին օրը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,

ե. փոստի միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի թղթային և էլեկտրոնային (կրիչով) տարբերակներն ուղարկվում են Ֆինանսական դիտարկումների կենտրոնի փոստային հասցեին և ներկայացված են համարվում այն «Հայփոստի» բաժանմունք ներկայացնելու և համապատասխան անդորրագիր ստանալու պահին,

զ. Ֆինանսական դիտարկումների կենտրոնի էլեկտրոնային փոստի (info_fiu@cba.am) միջոցով, որի դեպքում հաշվետվական ձևի էլեկտրոնային տարբերակն ուղարկվում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի էլեկտրոնային հասցեին և ներկայացված է համարվում նույն էլեկտրոնային հասցեից հետադարձ փոստի ստացման պահին: Այդ դեպքում հաշվետվությունը սույն կարգի 4.1 ենթակետի «ա», «բ», «գ» կամ «ե» պարբերություններից որևէ մեկով սահմանված կարգով՝ մինչև տվյալ ամսվա վերջին օրը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

2) Սույն կարգը հաստատած Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշման 3-րդ հավելվածի համաձայն՝ հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետում հաշվետվություն տրամադրող անձը ներկայացված հաշվետվության մեջ սխալ կամ թերացում հայտնաբերելու դեպքում ներկայացնում է հաշվետվության ուղղված տարբերակը՝ պահպանելով սույն կարգի 4.1 կետով սահմանված հաշվետվության անվանումը և ավելացնելով ուղղման հերթական համարը: Գործարքի վերաբերյալ հաշվետվության վերջնական տարբերակ է համարվում միևնույն անվանումն ունեցող հաշվետվությունների ամենավերջին հերթական համարն ունեցող հաշվետվությունը: Փոփոխված և (կամ) ամբողջականացված հաշվետվության հետ մեկտեղ, հաշվետվություն տրամադրող անձը Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին ներկայացնում է գրություն՝ թույլ տրված սխալների ուղղման և նախորդ հաշվետվությունը չեղյալ համարելու վերաբերյալ:

3) Սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված հաշվետվությունում սխալ կամ թերացում հայտնաբերելու դեպքում հաշվետու անձը դիմում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին՝ ուղարկված հաշվետվությունում ուղղում կատարելու խնդրանքով՝ նշելով սխալի կամ թերացման պատճառը և պահպանելով սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված ընթացակարգը:

Հավելված
«Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը» հավելված 2-ի

Ձեր հաշվառման համարը ՖԴԿ-ում

ՀԱՇՎԱՌՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի ֆինանսական
դիտարկումների կենտրոնի ղեկավար
պարոն _____-ին

Խնդրում եմ Ձեզ _____-ին տրամադրել հաշվառման համար:
Հաշվետվություն տրամադրող անձի լրիվ անվանումը

Հաշվետվություն տրամադրող անձի տվյալները՝

Գործունեության տեսակը _____

Գտնվելու վայրը _____

Գործունեության վայրը _____

Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Պետական գրանցման համարը _____

Լիցենզիայի համարը _____

Պատասխանատու անձի (անձանց) տվյալները՝

1. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍԻԲԻէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն
2. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍԻԲԻէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն
3. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍԻԲԻէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն
4. _____
Անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, էլեկտրոնային հասցե (ինտերնետ, «ՍԻԲԻէյՆեթ»), հեռախոս, ստորագրություն

Հաշվետվություն տրամադրող անձի
գործադիր մարմնի ղեկավար՝ _____
ստորագրություն

__ _____ ____ թ.

քաղաք Երևան

Հավելված 3
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 236-Ն որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Սույն հավելվածի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված՝ պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների (թիվ 007 հաշվետվական ձևի) տրամադրման միասնական ժամկետների սահմանումը:

1. Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ժամկետները

1) Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը պարբերական բնույթ չի կրում:

2) Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են Օրենքով և (կամ) Լիազոր մարմնի ուղեցույցներով սահմանված կասկածելի գործարքի հիմքերի ու չափանիշների և (կամ) պարտադիր տեղեկացման գործարքների համար անհրաժեշտ գումարային սահմանաչափի առկայության դեպքում:

3) Հաշվետվություն տրամադրող անձը գործարքում (գործառնությունում) կասկածելի գործարքի հիմքեր և չափանիշներ հայտնաբերելու դեպքում նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12.00-ն, ներկայացնում է այդ գործարքի վերաբերյալ հաշվետվություն:

4) Սույն կետով սահմանված գործաքների տրամադրման անհնարինությունը կարող է պայմանավորված լինել.

ա. աշխատանքային (գործառնական) օրվա ավարտով,

բ. ծրագրաապարատային կամ հաղորդակցության անհաղթահարելի խնդիրներով,

գ. վիճելի (քննարկման ենթակա) դեպքերով և այլն:

5) Հաշվետվություն տրամադրող անձը պարտադիր տեղեկացման գործարքի (գործառնության) վերաբերյալ տեղեկությունները Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացնում այդ գործարքը կնքելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

6) Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից ընդունվում են միայն այն անձի ստորագրությամբ ստացված հաշվետվությունները, ում տվյալները, սույն որոշմամբ սահմանված կարգով, նախապես ներկայացվել են Կենտրոնական բանկ:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի մասնակցությունը «Վեսթերն Յունիոն» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում արգելելու մասին

Քննարկելով առաջացած այն խնդիրը, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից իրականացվող վերահսկողության ընթացքում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերից ստացված գրություններից պարզվել է, որ «Վեսթերն Յունիոն» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգը, անհիմն և առանց որևէ պատճառաբնության, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի որոշ մասնաճյուղերում դադարեցրել է իր համակարգից օգտվելու՝ բանկերի իրավունքը:

«Վեսթերն Յունիոն» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի նման վարվելակերպը և ռազմավարությունը վտանգում են Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունությունը և բնականոն գործունեությունը, քանի որ նշված կազմակերպությունը ցանկացած պահի կարող է հաշվի չառնելով պայմանագրային դրույթները կամ առանց հիմնավոր պատճառաբանությունների դադարեցնել բանկերի՝ վճարահաշվարկային համակարգից օգտվելու իրավունքը:

Վերը նշված պատճառներով «Վեսթերն Յունիոն» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հետագա մասնակցությունը կրում է ռիսկային բնույթ: Վերջինիս գործողությունները թափանցիկ ու կանխատեսելի չեն և կարող են հանգեցնել բանկերի բնականոն գործունեության խաթարմանը: Բացի այդ, կարևորվում է Հայաստանի Հանրապետության բնակչության համար փոխանցումների համակարգերի սահուն և կանոնավոր աշխատանքը: Նշված արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի անկանխատեսելի գործելակերպը տեսանելի ապագայում կարող է հանգեցնել երկրի տնտեսության ֆինանսական և իրական հատվածների համար զգալի ցնցումների, հանկարծակի խափանումների և, ի վերջո, առնվազն դրամական փոխանցումների ոլորտում անկառավարելի իրավիճակների, քանի որ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 4-ի թիվ 342-Ն որոշմամբ հաստատված «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական համակարգի կայունությունը և/կամ իրացվելիությունը և/կամ վճարունակությունը վտանգելու մասին» ուղեցույցի, հանդիսանում է հանրային նշանակություն ունեցող վճարահաշվարկային համակարգ:

Հաշվի առնելով նաև, որ «Վեսթերն Յունիոն» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի նման վարվելակերպը վտանգում է սպառողների շահերը, հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածը և «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի դրույթները և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի ա և բ կետերով, 35-րդ հոդվածի 1-ին մասով և 20-րդ հոդվածի իդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից արգելել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի մասնակցությունը «Վեսթերն Յունիոն» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերին՝ սույն որոշման առաջին կետում նշված պահանջը կատարելու նպատակով սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից անհապաղ համապատասխան միջոցառումներ ձեռնարկել «Վեսթերն Յունիոն» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի հետ կնքված պայմանագրերով սահմանված կարգով, սակայն ոչ ուշ, քան նույն պայմանագրերով նախատեսված ամենակարճ ժամկետներում, «Վեսթերն Յունիոն» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի հետ կնքված պայմանագրերը լուծելու ուղղությամբ և այդ միջոցառումները իրականացնելու ընթացքի մասին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում մուտքագրվելու պահից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 օգոստոսի 2008 թ., N 251Ա

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՕԳՈՍՏՈՍ 2008)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 2-ի նիստի «2008 թվականի սեպտեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին առևտրի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի (բացառությամբ արտաքին առևտրի), դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում: Դրամավարկային ցուցանիշները և ՀՀ միջազգային պահուստները հաշվարկված են հաշվեգրման սկզբունքով:

Դրամավարկային ցուցանիշների և ՀՀ միջազգային պահուստների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 583-631
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2008 թվականի սեպտեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ (ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թ. սեպտեմբերի 2-ի նիստի արձանագրություն) 92

Իրական հատվածի ցուցանիշներ 97

Պետական բյուջեի ցուցանիշներ 100

Արտաքին հատվածի ցուցանիշներ 101

Դրամավարկային ցուցանիշներ 103

Ֆինանսական շուկա 115

Վարկային ներդրումներ 138

Առևտրային բանկերի ավանդներ 151

Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 153

Վճարահաշվարկային համակարգ 157

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (02.09.2008)

2008 թվականի սեպտեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2008 թվականի սեպտեմբերի 2-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Գ. Ղոնջեյանը, Ա. Նորեկյանը և Վ. Աբրահամյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից սեպտեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց մինչև սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում մակրոտնտեսական իրավիճակի, գնաճի, տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ցուցանիշների զարգացումների և ապագա ժամանակահատվածի ռիսկերի ներկայացումը:

Գնաճ

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ թեև 2008 թվականի օգոստոսին արձանագրվել է 0.7% գնանկում, այնուհանդերձ 12-ամսյա գնաճի ցուցանիշը ավելացել է 0.8 տոկոսային կետով՝ կազմելով 11.5%: Արձանագրված գնանկումը բացառապես պայմանավորվել է «Միրգ և բանջարեղեն» ապրանքախմբի գների սեզոնային նվազմամբ: «Հացամթերք» ապրանքախմբի գների անփոփոխ վարքագծի պայմաններում պարենային ապրանքների գները օգոստոսին նվազել են ընդամենը 1.5%-ով, իսկ ոչ պարենային ապրանքների գները և ծառայությունների սակագները աճել համապատասխանաբար 0.4%-ով և 0.1%-ով: 12-ամսյա բարձր գնաճին շարունակել են էապես նպաստել «Հացամթերք», «Կենդանական ու բուսական յուղեր», «Բենզին և դիզելային վառելիք» ապրանքախմբերը, որոնց գնաճը կազմել է համապատասխանաբար 34.6% (նպաստումը գնաճին՝ 5.14%), 38.3% (նպաստումը գնաճին՝ 1.55%) և 24.3% (նպաստումը գնաճին՝ 0.66%): Միաժամանակ, ծառայությունների սակագների բարձրացումը՝ պայմանավորված հիմնականում բուժսպասարկմամբ և կոմունալ ծառայություններով, ևս նշանակալի էր՝ կազմելով շուրջ 11% և նպաստելով ընդհանուր գնաճին 3.3%-ով:

Օգոստոսի միտումները վկայում են, որ թեև բնականոն գնաճը նախորդ ամսվա համեմատ ավելացել է 0.1 տոկոսային կետով, սակայն 12-ամսյա կտրվածքով դեռևս շարունակում է 3.9 տոկոսային կետով բարձր մնալ նախորդ տարվա վերջին արձանագրված մակարդակից՝ կազմելով 7.0%:

Արտաքին միջավայր

2008 թվականի օգոստոսին արտաքին հատվածի գնաճային ճնշումները պահպանել են թուլացման միտումները: Նավթի գների շարունակվող նվազումը տարածվել է նաև թանկարժեք և արդյունաբերական մետաղների շուկաներում, մասնավորապես՝ ոսկու և պղնձի շուկաներում:

Հուլիսին ձևավորված նավթի միջազգային գների աստիճանական անկումը պահպանվել է նաև օգոստոսին՝ Լոնդոնի բորսայում միջինը կազմելով 113.9 ԱՄՆ դոլար՝ Brent տեսակի հում նավթի բարելի դիմաց (նախորդ ամսվա 133.9 ԱՄՆ դոլարի համեմատ), ինչի պատճառ թերևս կարելի է համարել զարգացած երկրների սպառման աճի տեմպերի սպասվող դանդաղումը, որը ուղեկցվել է նաև նավթ արդյունահանող երկրների կողմից առաջարկի ավելացմամբ:

Ինչպես արդեն նշվեց, թանկարժեք մետաղների շուկայում նույնպես նկատվել է գների նվազում. ոսկու գինը մեկ տրոյական ունցիայի դիմաց ամսվա սկզբի 910.9 ԱՄՆ դոլարից ամսվա վերջի դրությամբ նվազել է մինչև 833.5 ԱՄՆ դոլար: Պղնձի գները ևս նվազել են՝ միջինը կազմելով 7517.7 ԱՄՆ դոլար՝ նախորդ ամսվա 8205.2 ԱՄՆ դոլարի համեմատ՝ ելնելով համաշխարհային պահանջարկի նվազման սպասումներից:

Ի տարբերություն նավթի և մետաղների՝ պարենային ապրանքների գները մի փոքր աճել են. Չիկագոյի ապրանքահումքային բորսայում օգոստոսին հացահատիկի գները միջինը կազմել են 8.97 ԱՄՆ դոլար՝ բուշելի դիմաց: 2008/2009 մարքեթինգային տարում հացահատիկի համաշխարհային առաջարկի գնահատվող աճը ներկայումս կազմում է 9.0%, որը հանգեցրել է գների աճի տեմպերի նվազման՝ տարեսկզբին արձանագրված տ/տ 88.5%-ից մինչև 26.6% տ/տ օգոստոսին: Բրնձի գինը նույնպես փոքր-ինչ աճել է՝ կազմելով մոտ 17.2 ԱՄՆ դոլար՝ ամերիկյան ցենտի (45.3 կգ) դիմաց:

Ինչ վերաբերում է մյուս ապրանքներին, մասնավորապես՝ շաքարավազին և կարագին, այստեղ նույնպես գրանցվել է որոշակի աճ:

Ֆինանսական ակտիվ հանդիսացող ապրանքների (նավթ, ոսկի) գների նվազումը համաշխարհային շուկայում ուղեկցվել է ԱՄՆ դոլարի դիրքերի ամրապնդմամբ, որը, ֆինանսական պայմանների հարաբերական անփոփոխ իրավիճակում, հիմնականում պայմանավորվել է մակրոտնտեսական նորություններով: Ֆինանսական շուկաներում ԱՄՆ դոլարի փոխարժեքը եվրոյի նկատմամբ արժևորվել է հուլիսի 1.58 մակարդակից օգոստոսին հասնելով մինչև 1.49: Դա հիմնականում արդյունք էր շուկայի մասնակիցների սպասումների փոփոխության Եվրոգոտու տնտեսության հեռանկարի առումով, որը, 2008 թ. երկրորդ եռամսյակի եռ./եռ. 0.2% տնտեսական աճի գնահատումից հետո դարձել է բացասական: Միաժամանակ, բարձր գնաճի մտահոգությունը ո՛չ Եվրոպական կենտրոնական բանկին, ո՛չ էլ Ֆեդերալ պահուստային համակարգին թույլ չեն տալիս նվազեցնել տոկոսադրույքները տնտեսական աճը խթանելու համար, ինչի արդյունքում վերջիններիս դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղվածությունն օգոստոսին մնացել է անփոփոխ:

Միջազգային գների նշված զարգացումները Հայաստանի ներքին շուկայում էական ազդեցություն չեն ունեցել՝ հիմնականում պայմանավորված առանձին ապրանքների շուկաների անկատարության հետևանքով ներքին գների շարունակվող դանդաղ արձագանքով: Ի լրումն դրա՝ նոր ռիսկեր են առաջացել վրաց-օսեթական հակամարտության և դրա հետևանքով դեպի Հայաստան ապրանքների ներմուծման արգելքների պատճառով:

Համախառն առաջարկ

2008 թվականի հունվար-հուլիսին շարունակվել է տնտեսական աճի երկնիշ ցուցանիշի արձանագրման միտումը, որի արդյունքում ՀՆԱ-ն ավելացել է 10.6%-ով: Ընդորում, աճի տեմպի արագացում է արձանագրվել արդյունաբերության ճյուղում և ծառայությունների ոլորտում, իսկ գյուղատնտեսությունում և շինարարությունում պահպանվել են աճի բարձր տեմպերը:

Գյուղատնտեսության ավելացված արժեքի աճը հունվար-հուլիսին կազմել է 7.0% և 0.9 տոկոսային կետով նպաստել տնտեսական աճին՝ պայմանավորված հիմնականում բուսաբուծության ենթաճյուղում արձանագրված աճով: Մասնավորապես, մրգի բերքն ավելացել է մոտ 3 անգամ, բանջարեղենինը՝ մոտ 14%-ով և կարտոֆիլինը՝ մոտ 9.7%-ով: Անասնապահության ենթաճյուղում բոլոր մթերքների աճի տեմպերը պահպանվել են: Ճյուղի ազդեցությունը գնաճի վրա զսպողական էր՝ պայմանավորված սպառողական շուկայում մրգի և բանջարեղենի առաջարկի էական ավելացմամբ:

Արդյունաբերության ճյուղում արձանագրվել է աճի տեմպերի որոշակի վերականգնում, որի արդյունքում ավելացված արժեքի աճը հունվար-հուլիսին կազմել է 2.2%, իսկ նպաստումը տնտեսական աճին՝ մոտ 0.4 տոկոսային կետ: Այն հիմնականում պայմանավորվել է հանքագործական և էներգետիկայի ճյուղերում գրանցված աճի տեմպի արագացմամբ, մինչդեռ մշակող արդյունաբերության ենթաճյուղում արտադրության ծավալները պահպանվել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մակարդակին: Այնուհանդերձ, մշակող արդյունաբերությունում ոգելից խմիչքների, բնական հյութերի և պահածոների աճ է արձանագրվել, այնինչ ալյուրի, հրուշակեղենի արտադրության մեջ և ոսկերչության ենթաճյուղում պահպանվել է դեռևս տարեսկզբից արձանագրվող արտադրության ծավալների նվազումը:

Շինարարությունում շարունակել է արձանագրվել աճի բարձր տեմպ, որը հունվար-հուլիսին կազմել է 17.9%՝ 4 տոկոսային կետով նպաստելով տնտեսական աճին: Ինչպես տարեսկզբին, այն շարունակել է պայմանավորվել բնակարանային շինարարության, մշակող արդյունաբերության ճյուղերում և ծառայության ոլորտում կապիտալ ներդրումների ավելացմամբ:

Ծառայությունների ոլորտում արձանագրվել է աճի տեմպերի որոշակի վերականգնում՝ պայմանավորված մանրածախ ապրանքաշրջանառության, ինչպես նաև զբոսաշրջությունը սպասարկող ծառայությունների ծավալների ավելացմամբ: Արդյունքում, հունվար-հուլիսին ծառայությունների ավելացված արժեքի աճը կազմել է 9.2%, որը նպաստել է տնտեսական աճին 3.4 տոկոսային կետով: Այն արձանագրվել է ինչպես առևտրի, այնպես էլ կապի և այլ ծառայությունների, իսկ առավել մեծ՝ ավտոմեքենաների առևտրի ենթաոլորտում:

Ամփոփենք՝ 2008 թվականի հունվար-հուլիսին տնտեսության ճյուղային զարգացումներն արձանագրվել են կանխատեսվածի շրջանակում:

Համախառն պահանջարկ

Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ երրորդ եռամսյակում մասնավոր հատվածի ծախսումների իրական աճը կկազմի շուրջ 11.6%, ընդ որում, մասնավոր ներդրումներն իրական արտահայտությամբ կավելանան շուրջ 15.3%-ով, իսկ մասնավոր սպառումը՝ 10.1%-ով: Կան որոշակի ռիսկեր մասնավոր ծախսումների աճի տեմպերի նվազման ուղղությամբ՝ պայմանավորված օգոստոսին տարածաշրջանում ստեղծված անկայուն իրավիճակով. կրճատվելով Հայաստան ներկրվող բեռների ծավալը՝ կարող է որոշակի բացասական ազդեցություն արձանագրվել մասնավոր ծախսումների աճի ցուցանիշում՝ հատկապես մասնավոր սպառման առումով:

Երրորդ եռամսյակում, առանց վերոնշյալ ռիսկերի դրսևորումների, մասնավոր հատվածի ծախսումները որոշակիորեն կգերազանցեն հավասարակշիռ մակարդակը, սակայն լրացուցիչ գնաճային ճնշումներ չեն առաջացնի:

2008 թ. հունվար-հուլիսին արձանագրվել է ապրանքների արտահանման դոլարային ծավալների նվազում տ/տ 0.2%-ով, ինչը ցածր է վերջին գնահատումներից: Ընդ որում, ապրանքների արտահանումը հուլիսին ավելացել է տ/տ 3.2%-ով: Կուտակային նվազումը հիմնականում պայմանավորվել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման նվազմամբ:[1]

Ներմուծման աճի բարձր տեմպերը պահպանվել են նաև հուլիսին՝ կազմելով տ/տ 44.1%, մինչդեռ հունվար-հուլիսին աճը կազմել է 40.9%: Տարեսկզբից աճի հիմնական գործոն է միջազգային շուկաներում հումքային ապրանքների գների բարձրացումը, որը լրացրել է իրական եկամուտների աճով պայմանավորված իրական ծավալների աճը:

Հուլիսին ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքի աճի տեմպը էապես արագացել է՝ կազմելով 56.6%, ինչը բավականին բարձր է Կենտրոնական բանկի գնահատումներից: Դա տեղի է ունեցել ոչ առևտրային բնույթի փոխանցումների ներհոսքի տ/տ 45.9% աճի և արտահոսքի տ/տ 3.1% նվազման պայմաններում:

2008 թվականի երրորդ եռամսյակում աշխատանքի շուկայի կողմից շարունակվում են արձանագրվել գնաճային ճնշումներ՝ պայմանավորված աշխատավարձի՝ արտադրողականության նկատմամբ շարունակական բարձր աճով: Տնտեսության միջին անվանական աշխատավարձի աճը կազմել է մոտ 20%՝ հիմնականում պայմանավորված գնաճի երկրորդային ազդեցությունների դրսևորումներով, իսկ աշխատանքի արտադրողականության աճը կազմել է 10.3%: Այս պայմաններում գնաճը խթանվել է շուրջ 0.5 տոկոսային կետով:

2008 թվականի երրորդ եռամսյակում հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը համախառն պահանջարկի վրա կլինի կանխատեսվածի շրջանակում՝ կազմելով շուրջ 1% ընդլայնող[2]:

---

[1] Արտահանման նվազում է տեղի ունեցել նաև որոշ փոքր կշիռ կազմող ապրանքախմբերում:

[2] Երրորդ եռամսյակի հարկաբյուջետային ազդակի ցուցանիշը հաշվարկվել է պետական հատվածի հուլիս, օգոստոս ամիսների նախնական փաստացի ցուցանիշների և ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրած սեպտեմբերի նախնական ծրագրի հիման վրա:

Ամփոփենք. եթե դեպի Հայաստան ապրանքների ներմուծման խոչընդոտները շարունակական բնույթ չկրեն, ներքին պահանջարկի աճը, որոշակիորեն գերազանցելով հավասարակշիռ մակարդակը, կգտնվի կանխատեսվածի շրջանակում և լրացուցիչ գնաճային ճնշումներ չի առաջացնի: Հակառակ պարագայում տարածաշրջանում ձևավորված իրավիճակի հնարավոր շարունակական բնույթն էական ռիսկ կարող է հանդիսանալ տնտեսական աճի տեմպերի նվազման առումով:

Փող և վարկ

Դրամավարկային պայմանների աստիճանական խստացման և դրամայնացման գործընթացի փոքր-ինչ դանդաղման պարագայում շարունակվել է դեռևս տարեսկզբից նկատվող փողի ագրեգատների աճի տեմպերի նվազումը՝ մասնավորապես դրամային բաղադրիչների մասով: Ընդ որում, եթե նախորդ ամիսներին դա հիմնականում արտահայտվել է շրջանառությունում կանխիկի աճի տեմպերի դանդաղմամբ, ապա հուլիս-օգոստոսին դիտվել է նաև դրամային ավանդների՝ սպասվածից ցածր և արտարժութային ավանդների ավելի բարձր աճ: Փողի և դրամային զանգվածների տ/տ աճը որոշ չափով զիջել է երրորդ եռամսյակի համար կանխատեսված աճի տեմպերը՝ համապատասխանաբար 35.6%-ի և 43.1%-ի փոխարեն օգոստոսին կազմելով 32.3% և 36.6%: Վերջիններիս կառուցվածքում դրամային ավանդներն ավելացել են տ/տ 44.4%-ով, իսկ շրջանառությունում գտնվող կանխիկ դրամը՝ 31.2%-ով, որոնք ավելի քան 6 տոկոսային կետով ցածր են սպասվող աճի տեմպից: Ընդհակառակը՝ արտարժութային ավանդները դրամային արտահայտությամբ շուրջ 6.9 տոկոսային կետով գերազանցել են կանխատեսված ցուցանիշը՝ ավելանալով 18.1%-ով, իսկ դոլարային արտահայտությամբ՝ 31%-ով:

Չնայած վերոնշյալ զարգացումներին՝ առևտրային բանկերի կողմից տնտեսության՝ դրամով վարկավորման ցուցանիշի աճի բարձր տեմպերը պահպանվել են՝ կազմելով տ/տ 87.5%: Ընդ որում, տնտեսության՝ դրամով վարկավորման աճի տեմպերը շարունակել են գերազանցել արտարժույթով վարկավորման աճի տեմպերը (տնտեսության վարկավորումը հուլիս-օգոստոսին միջին հաշվով ավելացել է տ/տ մոտ 74%-ով):

Արձանագրվեցին.

Նախորդ ամիսներին արտաքին հատվածում ձևավորված գնաճային մեղմ միջավայրն ընդհանուր առմամբ պահպանվել է, սակայն, մի կողմից՝ տարածաշրջանի իրադարձություններով պայմանավորված ապրանքների ներմուծման արգելքները և, մյուս կողմից՝ առանձին ապրանքների շուկաների անկատարությունների արդյունքում ներքին գների շարունակվող դանդաղ արձագանքը խոչընդոտել են ներքին շուկայում գնաճային ճնշումների թուլացմանը: Այս պայմաններում օգոստոսի վերջի դրությամբ 12-ամսյա գնաճը շարունակել է բարձր մնալ երրորդ եռամսյակի համար կանխատեսված ցուցանիշի համեմատ՝ պայմանավորված հիմնականում «Հացամթերք» ապրանքախմբի գների անփոփոխ վարքագծով՝ ակնկալվող նվազման փոխարեն: Խորհուրդն արձանագրեց նաև, որ եթե դեպի Հայաստան ապրանքների ներմուծման արգելքները կրեն շարունակական բնույթ, էական ռիսկեր կարող են առաջանալ ինչպես գնաճի ավելացման, այնպես էլ երկարաժամկետ հատվածում տնտեսական աճի տեմպերի նվազման առումով:

Ելնելով օգոստոսին ձևավորված մակրոտնտեսական իրավիճակից, հաշվի առնելով տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունները, ինչպես նաև ՀՆԱ աճի տեմպերի կրճատման ռիսկերը՝ խորհուրդը քննարկեց սեպտեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերանայման երկու հնարավոր տարբերակ՝ 0.5 կամ 0.25 տոկոսային կետով բարձրացում: Արդյունքում, նպատակահարմար համարվեց երկրորդ տարբերակը, որը ենթադրում է տարածաշրջանում ընթացող դեպքերի շարունակականության պարագայում պահանջարկի զսպման ավելի զգուշավոր մոտեցում ՀՆԱ աճի տեմպերի կրճատման ռիսկերի պայմաններում, և համահունչ է ԿԲ որդեգրած աստիճանական խստացման քաղաքականությանը:

Կարևորելով գնաճային սպասումների մեղմման ու նպատակային թիրախից շեղումների նվազեցման խնդիրները և հաշվի առնելով տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունների բնույթի և տևականության վերաբերյալ անորոշությունները, ԿԲ խորհուրդը համոզված է, որ վերաֆինանսավորման տոկոսադրույքի հետագա

ճշգրտումը գերազանցապես պայմանավորված կլինի առաջիկա ամիսներին տարածաշրջանում տիրող իրավիճակով և համաշխարհային շուկաներում ապրանքների գների միտումներին ներքին գների արձագանքման արագությամբ և չափով:

Որոշեցին.

Բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 7.75%: Ներգրավված ավանդների և լոմբարդային վարկերի տոկոսադրույքները սահմանվեցին համապատասխանաբար 4.75% և 10.75%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*Հունվար – հուլիս*	*2008թ. հունվար – հուլիսի իրական աճի ինդեքսը 2007թ. հունվար – հուլիսի նկատմամբ (%)*	*Հունվար – օգոստոս*	*2008թ. հունվար – օգոստոսի իրական աճի ինդեքսը 2007թ. հունվար – օգոստոսի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	1736136.8	110.6	2164567.8	110.3
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	-	108.9	-	109.6
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. աճողական)* [1]	1556.4	107.1	1934.5	106.7
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	428184.9	101.8	496157.0	102.2
էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	3652.4	102.7	4242.4	105.1
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	220610.4	106.9	347380.2	107.8
Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	500000.8	106.1	593639.2	106.3
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	356107.2	114.0	465849.6	112.8
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	389082.9	115.0	453999.3	115.1
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	88493[2]	111.0 [1,2]	88983 [2]	110.6 [1,2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1190.3	-	1193.9	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	74.9	-	75.0	-
Գործազրկության մակարդակը *(%)*	6.3	-	6.2	-

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2008 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.4	101.0	100.2	103.2
Փետրվար	101.1	102.0	100.6	101.3
Մարտ	101.4	99.6	101.0	90.9
Ապրիլ	101.1	102.3	127.5	95.2
Մայիս	101.3	102.1	103.6	92.3
Հունիս	99.5	100.4	100.1	76.9
Հուլիս	97.8	101.0	110.2	83.8
Օգոստոս	99.3	98.4	100.2	79.1
2008 թ. հունվար – օգոստոսը 2007 թ. հունվար – օգոստոսի համեմատությամբ	109.5	106.0	126.3	94.1

ԳՆԱՁ

Ժամանակաշրջան	*2006*	*2007*	*2008*	*2008*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	2.5	2.4	2.4	2.4
Փետրվար	0.2	0.2	1.1	3.4
Մարտ	0.1	-0.6	1.4	4.8
Ապրիլ	0.3	0.1	1.1	6.0
Մայիս	2.4	2.1	1.3	7.4
Հունիս	-1.2	-0.3	-0.5	6.8
Հուլիս	-0.7	-3.2	-2.2	4.5
Օգոստոս	-0.9	-1.5	-0.7	3.7
Սեպտեմբեր	-0.3	0.7		
Հոկտեմբեր	0.2	3.1		
Նոյեմբեր	1.0	2.1		
Դեկտեմբեր	1.6	1.5		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	5.2	6.6		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	2.9	4.4		

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ [1]

Անվանում	*Նախորդ ամսվա նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)*
ՍԳԻ	**99.3**	
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**98.5**	**-0.8**
բանջարեղեն և կարտոֆիլ	86.9	-0.62
միրգ	86.1	-0.36
մսամթերք	100.9	0.09
հացամթերք	99.7	-0.04
ձու	98.1	-0.03
կենդանական և բուսական յուղ	99.3	-0.03
Ոչ պարենային ապրանքներ	**100.4**	**0.1**
անձնական օգտագործման ապրանքներ և բենզին	100.4	0.01
կոշկեղեն	100.6	0.01
հագուստ և գործվածք	100.4	0.01
Ծառայություններ	**100.1**	**0.0**
բուժսպասարկման	101.2	0.11
կապի	98.3	-0.03

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [1]

ժամանակաշրջան	2006	2007	2008
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.4	0.2	0.40
Փետրվար	-0.3	-0.1	0.83
Մարտ	0.0	-0.1	0.66
Ապրիլ	0.3	0.3	1.26
Մայիս	0.2	0.3	0.55
Հունիս	0.0	-0.2	0.30
Հուլիս	0.8	-0.2	0.02
Օգոստոս	-0.2	-0.2	0.06
Սեպտեմբեր	0.4	0.5	
Հոկտեմբեր	0.2	0.8	
Նոյեմբեր	0.2	0.8	
Դեկտեմբեր	0.0	0.3	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.90	1.97	2.91
Փետրվար	1.43	2.21	3.77
Մարտ	1.50	2.07	4.54
Ապրիլ	2.15	2.05	5.66
Մայիս	2.49	2.14	5.94
Հունիս	2.64	2.05	6.47
Հուլիս	4.01	1.03	6.75
Օգոստոս	3.73	1.18	6.97
Սեպտեմբեր	2.82	1.32	
Հոկտեմբեր	2.80	1.94	
Նոյեմբեր	2.64	2.45	
Դեկտեմբեր	2.09	2.70	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ 10 ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ [1]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**6.75**
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.92
Բենզին	0.66
Խոզի միս	0.51
Օդային տրանսպորտ	0.51
Ծառայություններ բժշկական լաբորատորիաների (ռենտգեն նկար)	0.45
Կարագ	0.44
Ծառայություններ միջին բժշկական անձնակազմի և լաբորանտների	0.26
Մակարոն	0.26
Ծառայություններ բժիշկ-մասնագետների և վիրաբույժների (խորհրդատվական)	0.24
Տավարի միս	0.20


[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:
[2] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական գնահատումների:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ			Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	պետական կարճաժամկետ պարտատոմսեր	պետական միջին(ժամկետ և երկարաժամկետ պարտատոմսեր	ընդամենը	կենտրոնական կառավարման գրասենյակների և տարածքային մարմինների ընթացիկ հաշիվներ	կենտրոնական կառավարության հաշիվներ արտարժույթով	ծԻԳ-երի միջոցներ դրամով	ծԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը	
2007									
Դեկտեմբեր [1]	0	4541	4541	93623	513	0	175	94311	**-89770**
2008									
Հունվար	0	4650	4650	111457	517	0	177	112151	**-107501**
Փետրվար	0	4266	4266	113865	519	0	177	114562	**-110295**
Մարտ	0	4113	4113	128159	520	0	94	128773	**-124659**
Ապրիլ	0	3934	3934	122435	518	2	92	123048	**-119113**
Մայիս	0	3769	3769	124631	516	19	92	125258	**-121489**
Հունիս	0	3592	3592	124166	512	375	91	125144	**-121552**
Հուլիս	0	3544	3544	113946	509	2247	91	116793	**-113248**
Օգոստոս	0	3543	3543	115687	513	1368	91	117659	**-114116**

[1] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Ամփոփում	*2008 թ. հունվար – հուլիս (մլն ԱՄՆ դոլար)*	*2008 թ. հունվար – հուլիսը 2007 թ. հունվար – հուլիսի նկատմամբ (%)*	*2008 թ. հունվար – օգոստոս (մլն ԱՄՆ դոլար)*	*2008 թ. հունվար – օգոստոսը 2007 թ. հունվար – օգոստոսի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	628.1	99.8	696.8	95.2
Ներմուծում *(ՍԻՖ)*	2292.1	140.9	2612.1	136.0
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1664.1	166.9	1915.2	161.1

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ 2007 - 2008 ԹԹ.

(հազար ԱՄՆ դոլար)

Երկիր	2007 թվական					
	Հունվար – օգոստոս			Ընդամենը		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստանի Դաշնություն	619980	85367	534613	1078218	129126	949092
ԱՄՆ	54520	13895	40625	76571	23764	52808
Ուկրաինա	8319	6232	2087	14646	10770	3876
Ղազախստան	8558	262	8296	16379	610	15769
Գերմանիա	8641	5596	3044	13210	7764	5446
Իսպանիա	4703	1770	2933	8671	2564	6107
Ֆրանսիա	5747	3287	2459	9659	4851	4808
ԱՄԷ	1672	10402	-8730	2812	13339	-10528
Չինաստան	209	7980	-7771	362	12062	-11700
Թուրքիա	1114	7933	-6820	2268	10338	-8070
Այլ երկրներ	59940	31153	28787	96683	45981	50702
Ընդամենը	773402	173878	599525	1319479	261170	1058310

(հազար ԱՄՆ դոլար)

Երկիր	2008 թվական					
	Օգոստոս			Հունվար – օգոստոս		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստանի Դաշնություն	152376	8348	144028	858229	76890	781340
ԱՄՆ	4721	2280	2441	41573	21242	20331
Ուկրաինա	3523	760	2763	20827	6884	13943
Ղազախստան	1978	135	1843	11361	560	10801
Գերմանիա	1107	618	488	9229	3986	5243
Իսպանիա	1059	193	866	8893	1798	7095
Ֆրանսիա	1033	338	695	6574	2904	3670
ԱՄԷ	1036	510	526	6221	6049	172
Չինաստան	34	458	-424	298	5083	-4785
Թուրքիա	177	888	-711	1729	4747	-3018
Այլ երկրներ	9646	2735	6910	70318	22419	47899
Ընդամենը	176690	17264	159425	1035252	152561	882690

ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ[1]

2007	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	119.2	120.7	117.6	113.9	118.8	121.3	117.8	116.9	114.8	118.2	122.5	129.1
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	209.1	212.8	210.0	204.7	210.1	216.1	217.2	219.2	215.5	217.6	222.9	233.4
2008	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ[2]**	**Օ[2]**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	129.2	128.6	125.0	124.1	125.8	125.6	122.4	125.3				
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	230.3	228.9	222.1	220.7	223.0	224.6	224.2	231.3				


[1] Հաշվարկված է ՀՀ 9 հիմնական գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների նկատմամբ՝ 1999-2003 թթ. կշիռներով:
[2] Ըստ ԿԲ գնահատումների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն ԱՄՆ դոլար)

Ցուցանիշներ	2007	2008							
	Դ[3]	Հ	Փ	Մ[3]	Ա	Մ	Հ[3]	Հ	Օ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	1659.2	1628.1	1621.7	1606.0	1595.2	1546.7	1579.6	1603.5	1612.8
Համախառն միջազգային պահուստներ	1659.2	1628.1	1621.7	1606.0	1595.2	1546.7	1579.6	1603.5	1612.8
Ոսկի	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ - ում	9.7	9.8	7.2	7.5	19.8	18.2	14.6	14.5	14.1
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Արտարժույթ[2]	1649.5	1618.3	1614.5	1598.5	1575.4	1528.5	1565.0	1589.0	1598.7

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:
[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:
[3] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 07 [3]	Հ - 08	Փ - 08	Մ – 08 [3]	Ա - 08	Մ - 08	Հ – 08 [3]	Հ - 08	Օ - 08
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)									
ՁՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1,2]	***445999***	***435704***	***432751***	***424073***	***424318***	***409198***	***417822***	***425209***	***436167***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-18881***	***-43718***	***-43436***	***-43252***	***-19757***	***-14642***	***-5097***	***1031***	***-392***
Կառավարություն	-89770	-107501	-110295	-124659	-119113	-121489	-121552	-113248	-114116
Բանկեր	24596	22053	20153	30429	35415	38774	41943	36189	35565
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	10188	10521	7151	14524	19321	22112	24663	18906	15546
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0	0	0	0	2130
Ավանդներ (-)	0	-3000	-2000	-100	0	0	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-48958	-49666	-38771	-35982	-27858	-24399	-17744	-15218	-11782
Զուտ այլ ակտիվներ	95251	91396	85477	86961	91800	92472	92256	93308	89942
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***427118***	***391987***	***389315***	***380822***	***404561***	***394556***	***412725***	***426240***	***435775***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	350274	330681	333451	325751	329178	333269	343329	356321	364756
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	37445	31378	27285	22566	28740	26771	28614	28572	27020
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	38421	28877	27610	31445	45691	33687	39963	40426	43146
Այլ հաշիվներ	979	1051	969	1060	952	829	817	921	852
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	941	1022	955	1045	952	829	817	892	848
Այլ հաշիվներ (արտարժույթով)	38	29	14	15	0	0	0	29	4
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)									
ՁՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-10295***	***-2953***	***-8678***	***245***	***-15120***	***8624***	***7387***	***10958***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-24837***	***281***	***185***	***23495***	***5115***	***9545***	***6129***	***-1423***
Կառավարություն	-	-17731	-2795	-14364	5546	-2376	-63	8304	-868
Բանկեր	-	-2543	-1901	10276	4986	3359	3169	-5754	-624
այդ թվում՝ ավանդներ (-)	-	3000	-1000	-1900	-100	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	708	-10895	-2789	-8123	-3459	-6655	-2526	-3435
Զուտ այլ ակտիվներ	-	-3855	-5918	1483	4839	673	-217	1053	-3367
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-35132***	***-2672***	***-8494***	***23739***	***-10005***	***18169***	***13516***	***9535***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-19592	2769	-7700	3428	4090	10060	12992	8435
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	-6067	-4093	-4719	6173	-1969	1844	-42	-1552
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	-9545	-1267	3835	14246	-12004	6277	462	2721
Այլ հաշիվներ	-	72	-82	91	-107	-123	-12	103	-69
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	81	-67	90	-92	-123	-12	74	-43
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	-9	-15	1	-15	0	0	29	-25
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)									
ՁՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-2.3***	***-0.7***	***-2.0***	***0.1***	***-3.6***	***2.1***	***1.8***	***2.6***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-131.5***	***0.6***	***0.4***	***54.3***	***25.9***	***65.2***	***120.2***	***-138.0***
Կառավարություն	-	-19.8	-2.6	-13.0	4.4	-2.0	-0.1	6.8	-0.8
Բանկեր	-	-10.3	-8.6	51.0	16.4	9.5	8.2	-13.7	-1.7
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	1.4	-21.9	-7.2	-22.6	-12.4	-27.3	-14.2	-22.6
Զուտ այլ ակտիվներ	-	-4.0	-6.5	1.7	5.6	0.7	-0.2	1.1	-3.6
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-8.2***	***-0.7***	***-2.2***	***6.2***	***-2.5***	***4.6***	***3.3***	***2.2***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-5.6	0.8	-2.3	1.1	1.2	3.0	3.8	2.4
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	-16.2	-13.0	-17.3	27.4	-6.8	6.9	-0.1	-5.4
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	-24.8	-4.4	13.9	45.3	-26.3	18.6	1.2	6.7
Այլ հաշիվներ	-	7.4	-7.8	9.3	-10.1	-12.9	-1.4	12.7	-7.5

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԿԲ զուտ միջազգային պահուստները (ՁՄՊ) իրենցից ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը: «Զուտ միջազգային պահուստներ» ցուցանիշը նախկինում հրապարակվում էր «Զուտ արտաքին ակտիվներ (ՁԱԱ)» անվամբ: Անվանափոխությունից զատ, ցուցանիշի հաշվարկում մեթոդաբանական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

[2] ՁՄՊ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 304.22 դրամ, 1 ՀՓԻ = 1.5785 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.4692 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.9994 ԱՄՆ դոլար:

[3] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 07	Հ - 08	Փ - 08	Մ - 08	Ա - 08	Մ - 08	Հ - 08	Հ - 08	Օ - 08
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-75817**	**-72693**	**-90530**	**-84027**	**-94968**	**-98133**	**-74603**	**-106794**	**-121388**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	68756	69147	58873	71771	72584	71918	97826	83019	71095
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով	-131365	-128524	-129988	-139555	-152171	-152016	-152499	-165016	-172187
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-13207	-13316	-19415	-16243	-15381	-18034	-19931	-24797	-20296
ԶՆԱ	**440165**	**428763**	**451793**	**459114**	**479575**	**484468**	**465407**	**512768**	**533844**
Զուտ պահանջներ կառավարության նկատմամբ	35764	34024	38328	44278	44222	44302	43401	40541	42750
Պահանջներ Կառավարության նկատմամբ	55213	51234	55752	61571	62092	61434	61344	59897	62874
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ	-19449	-17210	-17424	-17293	-17870	-17132	-17943	-19356	-20124
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	120347	109157	94174	80813	88694	68277	65819	69903	71688
Պահանջներ ԿԲ նկատմամբ	144486	133691	115779	110745	123359	106232	106621	104890	105869
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-24139	-24535	-21605	-29932	-34665	-37954	-40802	-34987	-34182
Տնտեսություն	429766	432584	461570	485693	507804	528642	550354	573253	601192
Ջեռնարկություններ	185425	185084	198131	210974	220408	228081	234253	244515	265200
Դրամով	79939	77454	83021	91225	94633	97829	104038	106902	114582
Արտարժույթով	104207	106368	113902	118569	124421	129214	129145	135888	148849
Արժեթղթեր	1279	1262	1209	1180	1354	1038	1070	1724	1769
Տնային տնտեսություններ	226036	230342	243556	253522	266333	279138	294303	307105	315417
Դրամով	172709	176294	185142	193588	204816	216263	230877	242456	249526
Արտարժույթով	53327	54048	58415	59934	61517	62875	63426	64649	65891
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	9564	9643	9640	9628	9715	9721	9607	9667	9842
Դրամով	44	48	25	25	134	175	178	295	403
Արտարժույթով	9520	9596	9615	9603	9582	9546	9429	9372	9440
Այլ ֆինանսական կազմակերպություններ	8741	7515	10242	11569	11347	11702	12191	11966	10733
Դրամով	8016	6609	8981	10252	9855	10116	10377	9933	8688
Արտարժույթով	724	906	1261	1316	1492	1586	1813	2033	2044
Զուտ այլ ակտիվներ	-145711	-147001	-142278	-151670	-161145	-156754	-194166	-170929	-181786
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	3186	3261	3872	3818	3304	3557	4314	4344	4508
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	880	594	397	521	226	305	224	179	174
Արտաքին պարտ. (ոչ փոխարկելի արտարժույթով)	-3	-3	-68	-12	-3	-3	-29	-46	-5
Ներդրումներ փայաբաժիններում	1244	1282	1291	1305	1297	1323	1641	1646	1665
Միջբանկային պահանջներ	7544	7703	11354	8092	4920	5039	8458	10012	12093
Այլ ակտիվներ	79935	77637	88244	90375	74942	82832	93783	95193	93779
Միջբանկային պարտավորություններ	-7441	-7440	-11289	-7917	-4834	-4979	-8132	-9723	-11925
Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր	-614	-621	-620	-622	-625	-954	-1350	-2697	-2731
Կապիտալ հաշիվներ	-172765	-174434	-177208	-182922	-186048	-188627	-197816	-200274	-214011
Այլ պարտավորություններ	-57677	-54979	-58251	-64308	-54324	-55246	-95259	-69565	-65332
ԱՎԱՆԴՆԵՐ	**364349**	**356071**	**361263**	**375087**	**384606**	**386335**	**390803**	**405974**	**412456**
Դրամով ավանդներ	234067	230075	234198	235350	237193	245923	245583	251650	256105
Ցպահանջ ավանդներ	131601	123314	126221	118509	119669	116055	112705	113328	118971
Ժամկետային ավանդներ	102465	106761	107977	116841	117524	129868	132878	138322	137133
Ավանդներ արտարժույթով	130282	125996	127065	139737	147414	140412	145220	154324	156351
Ցպահանջ ավանդներ	59452	55894	53520	59535	62232	54230	55412	66980	62522
Ժամկետային ավանդներ	70830	70102	73545	80202	85182	86182	89808	87344	93829

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 07	Հ – 08	Փ – 08	Մ - 08	Ա - 08	Մ - 08	Հ - 08	Հ - 08	Օ - 08
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-21989**	**-22146**	**-24157**	**-24222**	**-27647**	**-28961**	**-30719**	**-31573**	**-31825**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	595	758	354	943	165	208	206	188	217
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով	-15499	-15964	-17551	-18525	-21215	-21839	-23377	-24403	-24653
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-7086	-6940	-6960	-6640	-6597	-7330	-7548	-7357	-7389
ԶՆԱ	**25944**	**26437**	**28897**	**29116**	**32558**	**33864**	**35767**	**36854**	**37184**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	-562	-382	-386	-542	-561	-553	-584	-559	-463
Զուտ պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	608	415	392	-262	494	70	1474	1018	870
Պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	3225	3107	3263	3146	4272	4286	5942	5755	5070
Պարտավորություններ առևտրային բանկերի նկատմամբ	-2617	-2691	-2872	-3409	-3778	-4216	-4469	-4737	-4200
Տնտեսություն	38770	39497	42323	43951	46706	48572	50177	52461	53185
Ձեռնարկություններ	14015	14592	16204	16553	18748	19697	20112	20950	21315
Դրամով	4913	4973	5151	5182	5314	5450	5646	5923	5911
Արտարժույթով	9082	9599	11033	11350	13413	14226	14446	15007	15384
Արժեթղթեր	20	20	20	20	21	21	20	20	20
Տնային տնտեսություններ	24693	24843	26042	27299	27860	28778	29955	31402	31766
Դրամով	18736	19056	20028	21422	22012	22679	23423	24375	24311
Արտարժույթով	5957	5787	6014	5877	5848	6098	6532	7027	7455
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	60	60	75	97	96	96	108	108	103
Դրամով	60	60	75	97	96	96	108	108	103
Արտարժույթով	0	0	0	0	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	2	2	3	2	2	2	1	1	1
Դրամով	2	2	3	2	2	2	1	1	1
Արտարժույթով	0	0	0	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-12873	-13094	-13432	-14031	-14081	-14225	-15299	-16065	-16409
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	44	29	36	39	59	45	52	56	44
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	0	1	1	0	0	0	0	1	1
Արտաքին պարտավոր. (ոչ փոխարկելի արտարժույթով)	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ դրամ դրամարկղում	168	210	146	133	121	104	119	145	131
Ներդրումներ փայաբաժիններում	6	4	4	4	4	4	4	4	4
Պահանջներ վարկային կազմ.-ների նկատմամբ	0	0	0	0	0	0	0	0	0
Այլ ակտիվներ	1142	1287	1183	1183	1168	1791	1267	1416	1682
Պարտավորություն. վարկային կազմ.-ների նկատմամբ	0	0	0	0	0	0	0	0	0
Թողարկված պարտատոմսեր	0	0	0	0	0	0	0	-55	-152
Կապիտալ հաշիվներ	-12531	-12722	-12995	-13501	-13768	-14014	-14828	-15630	-15721
Այլ պարտավորություններ	-1700	-1903	-1807	-1889	-1665	-2156	-1913	-2001	-2398
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**3955**	**4291**	**4741**	**4893**	**4911**	**4903**	**5048**	**5281**	**5359**
Դրամով փոխառություններ	3148	3142	3599	3749	3716	3677	3815	3923	3991
Ցպահանջ փոխառություններ	21	23	26	23	23	23	23	34	42
Ժամկետային փոխառություններ	3127	3119	3573	3726	3694	3654	3792	3889	3949
Արտարժույթով փոխառություններ	807	1148	1142	1145	1195	1226	1233	1358	1369
Ցպահանջ փոխառություններ	0	0	0	0	0	0	0	0	0
Ժամկետային փոխառություններ	807	1148	1142	1145	1195	1226	1233	1358	1369

ՀՀ ԱՅԼ ԱՎԱՆԴԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 07	Հ – 08	Փ – 08	Մ - 08	Ա - 08	Մ - 08	Հ - 08	Հ - 08	Օ - 08
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթ)	**-97806**	**-94839**	**-114687**	**-108249**	**-122615**	**-127093**	**-105323**	**-138367**	**-153213**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	69351	69905	59227	72713	72749	72126	98032	83206	71312
Արտաքին պարտավորություններ փոխ. արտարժ.	-146865	-144488	-147539	-158080	-173386	-173856	-175876	-189419	-196840
Արտաքին պարտավորություններ դրամով	-20293	-20256	-26375	-22883	-21978	-25363	-27478	-32154	-27685
ԶՆԱ	**462914**	**452094**	**477427**	**485083**	**507861**	**514046**	**495231**	**543868**	**565958**
Զուտ պահանջներ կառավարության նկատմամբ	35202	33642	37942	43736	43661	43749	42817	39982	42287
Պահանջներ կառավարության նկատմամբ	55213	51421	55940	61661	62182	61524	61404	59992	63212
Պարտավորություններ կառավարությանը	-20011	-17779	-17998	-17925	-18521	-17775	-18587	-20010	-20925
Զուտ պահանջներ ԿԲ-ի նկատմամբ	120514	109367	94320	80946	88815	68381	65938	70048	71819
Պահանջներ ԿԲ-ի նկատմամբ	144654	133901	115925	110878	123481	106336	106740	105035	106001
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	-24139	-24535	-21605	-29932	-34665	-37954	-40802	-34987	-34182
Տնտեսություն	465919	469389	501022	526235	550732	572998	596061	620977	650178
Ձեռնարկություններ	199440	199676	214335	227527	239157	247778	254366	265465	286516
Դրամով	84852	82427	88172	96407	99947	103279	109684	112825	120493
Արտարժույթով	113289	115967	124935	129919	137834	143440	143592	150895	164233
Արժեթղթեր	1299	1282	1229	1201	1375	1059	1090	1745	1789
Տնային տնտեսություններ	249007	253437	267860	279074	292437	306156	322560	336807	345496
Դրամով	191445	195351	205170	215010	226828	238942	254300	266832	273837
Արտարժույթով	57562	58087	62690	64065	65609	67214	68259	69975	71659
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	9624	9703	9715	9725	9811	9817	9715	9775	9945
Դրամով	104	107	99	122	230	270	286	403	506
Արտարժույթով	9520	9596	9615	9603	9582	9546	9429	9372	9440
Այլ ֆինանսական կազմակերպություններ	7848	6573	9112	9909	9326	9248	9421	8930	8221
Դրամով	7123	5668	7851	8592	7834	7661	7608	6897	6177
Արտարժույթով	724	906	1261	1316	1492	1586	1813	2033	2044
Զուտ այլ ակտիվներ	-158722	-160304	-155856	-165834	-175347	-171083	-209585	-187139	-198326
Արտաքին ակտիվներ դրամով	3230	3290	3909	3856	3363	3602	4365	4401	4551
Արտաքին ակտիվներ (ոչ-փոխարկելի արտարժույթ)	881	596	398	521	226	305	224	180	174
Արտաքին պարտավորություններ (ոչ-փոխարկելի արտարժույթ)	-3	-3	-68	-12	-3	-3	-29	-46	-5
Ներդրումներ փայաբաժիններում	1250	1285	1294	1309	1301	1327	1644	1650	1668
Այլ ավանդային կազմ. միջև միջհատվածային պահանջներ (զուտ)	29	0	0	0	0	0	0	0	0
Միջբանկային պահանջներ (զուտ)	103	263	66	175	87	60	326	289	168
Վարկային կազմակերպությունների միջև պահանջներ (զուտ)	0	0	0	0	0	0	0	0	0
Այլ ակտիվներ	81077	78924	89427	91557	76111	84623	95050	96610	95461
Բանկի կողմից թողարկված պարտատոմսեր	-614	-621	-620	-622	-625	-954	-1350	-2752	-2882
Կապիտալ հաշիվներ	-185296	-187156	-190203	-196423	-199817	-202641	-212644	-215904	-229733
Այլ պարտավորություններ	-59377	-56883	-60059	-66197	-55989	-57402	-97172	-71566	-67729
Ավանդներ	**365108**	**357255**	**362740**	**376834**	**385246**	**386953**	**389909**	**405501**	**412745**
Դրամով ավանդներ	235003	230886	235223	236518	238597	247424	246651	252920	257971
Ցպահանջ ավանդներ	130363	122615	125221	117237	118646	115120	111967	112592	117895
Ժամկետային ավանդներ	104640	108271	110002	119281	119950	132304	134685	140327	140076
Ավանդներ արտարժույթով	130105	126369	127517	140316	146649	139529	143258	152581	154774
Ցպահանջ ավանդներ	58926	55326	52959	59088	61399	53541	53919	65958	61587
Ժամկետային ավանդներ	71179	71043	74559	81228	85250	85988	89339	86623	93187

[1] *Ընդգրկված են առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ցուցանիշները:*

ՀՀ ԱՎԱՆԴԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 07[6]	Հ - 08	Փ - 08	Մ – 08[6]	Ա - 08	Մ - 08	Հ – 08[6]	Հ - 08	Օ - 08
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)									
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***348193***	***340865***	***318065***	***315824***	***301703***	***282104***	***312499***	***286842***	***282954***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***343742***	***323525***	***357022***	***364448***	***391215***	***415561***	***398605***	***453502***	***470457***
Կառավարություն	-54568	-73859	-72353	-80924	-75453	-77740	-78735	-73266	-71830
Տնտեսություն	465924	469393	501025	526239	550793	573197	596273	621229	650481
Ձեռնարկ. և կազմակերպ.	199440	199676	214335	227527	239157	247778	254366	265465	286516
որից՝ կուտակված տոկոսներ	1486	1436	1460	1728	1772	1925	2027	2202	2326
Տնային տնտեսություններ	249012	253441	267863	279078	292499	306355	322771	337058	345799
որից՝ կուտակված տոկոսներ	2804	3154	3290	3783	3874	4247	4461	4765	4846
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	9624	9703	9715	9725	9811	9817	9715	9775	9945
որից՝ կուտակված տոկոսներ	63	64	60	64	62	64	47	48	49
Այլ ֆինանսական կազմակերպություններ	7848	6573	9112	9909	9326	9248	9421	8930	8221
որից՝ կուտակված տոկոսներ	24	21	20	30	29	38	48	56	42
Զուտ այլ ակտիվներ	-67614	-72009	-71651	-80868	-84126	-79896	-118933	-94460	-108194
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [3]	***561792***	***537993***	***547554***	***539941***	***546268***	***558137***	***567846***	***587734***	***598633***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [4]	***691935***	***664391***	***675086***	***680272***	***692918***	***697665***	***711104***	***740344***	***753412***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	325849	306085	311377	302378	306720	309883	320378	333922	339814
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [5]	131304	123637	126176	118282	119598	115949	112784	113484	118743
որից՝ կուտակված տոկոսներ	44	77	110	66	81	133	83	92	122
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	104640	108271	110002	119281	119950	132304	134685	140327	140076
որից՝ կուտակված տոկոսներ	1433	1176	1207	1332	1390	1628	1771	1757	1893
Արտարժույթով ավանդներ	130143	126398	127532	140331	146649	139529	143258	152610	154778
Ցպահանջ [5]	58964	55354	52973	59103	61399	53541	53919	65987	61591
որից՝ կուտակված տոկոսներ	11	16	27	18	15	26	12	18	29
Ժամկետային	71179	71043	74559	81228	85250	85988	89339	86623	93187
որից՝ կուտակված տոկոսներ	948	782	847	957	1017	1147	1173	1233	1366
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)									
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-7328***	***-22801***	***-2240***	***-14121***	***-19598***	***30395***	***-25657***	***-3888***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-20216***	***33496***	***7426***	***26767***	***24346***	***-16956***	***54897***	***16956***
Կառավարություն	-	-19291	1505	-8570	5471	-2288	-994	5469	1437
Տնտեսություն	-	3470	31632	25213	24554	22404	23076	24956	29252
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	235	14660	13192	11629	8621	6588	11099	21051
որից՝ կուտակված տոկոսներ	-	-50	23	269	44	153	101	176	124
Տնային տնտեսություններ	-	4430	14422	11215	13421	13856	16416	14287	8740
որից՝ կուտակված տոկոսներ	-	351	136	492	91	373	214	304	81
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	79	12	10	86	5	-102	60	170
որից՝ կուտակված տոկոսներ	-	0	-4	4	-2	2	-17	1	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-1274	2538	797	-582	-79	174	-491	-709
որից՝ կուտակված տոկոսներ	-	-3	-2	11	-1	9	10	8	-14
Զուտ այլ ակտիվներ	-	-4395	359	-9217	-3258	4230	-39037	24473	-13734
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	***-***	***-23799***	***9561***	***-7613***	***6328***	***11868***	***9710***	***19888***	***10900***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	***-***	***-27544***	***10695***	***5186***	***12646***	***4747***	***13439***	***29240***	***13068***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-19763	5291	-8999	4342	3164	10495	13545	5892
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-7667	2539	-7894	1317	-3649	-3165	700	5259
որից՝ կուտակված տոկոսներ	-	33	32	-44	15	52	-50	8	31
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	3631	1731	9279	669	12354	2380	5643	-251
որից՝ կուտակված տոկոսներ	-	-257	31	126	58	238	143	-14	137
Արտարժույթով ավանդներ	-	-3745	1134	12799	6318	-7121	3729	9352	2168
Ցպահանջ	-	-3609	-2382	6130	2296	-7858	378	12068	-4396
որից՝ կուտակված տոկոսներ	-	5	11	-9	-3	11	-14	6	11
Ժամկետային	-	-136	3516	6669	4022	737	3351	-2716	6564
որից՝ կուտակված տոկոսներ	-	-166	65	111	60	130	26	60	133

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)									
ՀՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	-2.1	-6.7	-0.7	-4.5	-6.5	10.8	-8.2	-1.4
ՀՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	-5.9	10.4	2.1	7.3	6.2	-4.1	13.8	3.7
Կառավարություն	-	-35.4	2.0	-11.8	6.8	-3.0	-1.3	6.9	2.0
Տնտեսություն	-	0.7	6.7	5.0	4.7	4.1	4.0	4.2	4.7
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	0.1	7.3	6.2	5.1	3.6	2.7	4.4	7.9
Տնային տնտեսություններ	-	1.8	5.7	4.2	4.8	4.7	5.4	4.4	2.6
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	0.8	0.12	0.1	0.9	0.1	-1.0	0.6	1.7
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-16.2	38.6	8.7	-5.9	-0.8	1.9	-5.2	-7.9
Զուտ այլ ակտիվներ	-	-6.5	0.5	-12.9	-4.0	5.0	-48.9	20.6	-14.5
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	-	-4.2	1.8	-1.4	1.2	2.2	1.7	3.5	1.9
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	-	-4.0	1.6	0.8	1.9	0.7	1.9	4.1	1.8
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-6.1	1.7	-2.9	1.4	1.0	3.4	4.2	1.8
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-5.8	2.1	-6.3	1.1	-3.1	-2.7	0.6	4.6
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	3.5	1.6	8.4	0.6	10.3	1.8	4.2	-0.2
Արտարժույթով ավանդներ	-	-2.9	0.9	10.0	4.5	-4.9	2.7	6.5	1.4
Ցպահանջ	-	-6.1	-4.3	11.6	3.9	-12.8	0.7	22.4	-6.7
Ժամկետային	-	-0.2	4.9	8.9	5.0	0.9	3.9	-3.0	7.6

